Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Учебный дневник

Класс IV

Класс. II

9(47.925)
Ч-42

1909

19 Aug 2006

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸՆՈՒՉԸՐ ԵՒԸԳԵԸՆՑԻ

ՊԱՏՄԱԿԱՆ ՔԱՂՈՒԱԾՆԵՐ

(Արտատպուած «Հովիւ» տարեգրքերից)

Պրակ չորրորդ

Եփրեմ կաթողիկոս.

Մաս II.

ԿԱԶՄԵՑ

Եղիշէ ա. ք. Գեղամեանց

Գինն է 40 կոպ.

Историческія выписки

(Перепечатано изъ журнала „Овивъ“ (Пастырь)

Католикосъ Ефремъ

ч. IV. Сост. прот. Е. Гегамянцъ.

БАКУ

Типографія Н. А. Эриванцова.

1909.

18 .03. 2013
6895
16704
9(47.925)
Գ-42
05 SEP 2011
9(47.925)
Գ-42
Գ.

ՃԾԹ.

«Ներսէս արքեպիսկոպոսը՝ Էջմիածնից ոչ այնքան հեռու գտնուող Աշտարակ գիւղի մի քահանայի որդին է, որ մանկութիւնից իրան նուիրել է կուսակրօնութեան»։

«Դանիէլ արքեպիսկոպոսի հետ Զմիւռնիա գնալով՝ այնտեղ վարդապետ ձեռնադրուեցաւ և 1799 թուին այս Ընտրոյն հետ մեկնացաւ Պոլիս»։

Միանգամայն գրաւելով իր հովանաւորողի (Դանիէլի) վստահութիւնը՝ Ներսէսը յաջողեցաւ նրան այնպիսի նպատակներ թելադրել, որոնց նա հակառակ էր։ Կ. Պոլսոյ ամենայայտնի հայերին իր կողմը շուռ տալով՝ Ներսէսը նրանց միջոցաւ յաջողեցաւ՝ Յովհաննէս պատրիարքին աքսորել տալով՝ Դանիէլին նրան յաջորդ կարգել տալ։ Սակայն 10 ամսից յետոյ՝ միևնոյն հայերը Ներսիսի վառասիրութիւնից ձանձրացած՝ Դանիէլին ևս Թոխաթ աքսորել տուին»։

Ներսէսը Դանիէլի հետ Թոխաթ գնաց. սակայն լսելով Էջմիածնի կաթողիկոս Արղութեանի Յովսէփի մահը՝ ցանկացաւ Դանիէլին նրան յաջորդ կարգել տալ։ Եւ դրա համար՝ ձեռք բերեց Էջմիածնի մի քանի վարդապետների և Կ. Պոլսոյ հայերից շատերի յօժարութիւնը»։

„Բայազէտ հասնելով նրանք (Ներսէսն ու

ՄՈՒ 932 30

Դանիէլը) լսեցին, որ Էջմիածնում կաթողիկոս է ընտրուած Դաւիթ արքեպիսկոպոսը և արդէն Սուլթանի ու Շահի կողմից հաստատուած է»։

«Բայց այնուամենայնիւ Ներսիսի դրդմամբ՝ Դանիէլի կուսակիցները նրան կաթողիկոս ձեռնադրեցին Բայազետի մօտ գտնուած Ուշքիլիսա (Ս. Յովհաննէսի երեք խորան) վանքում։ Այստեղ Դանիէլը՝ եպիսկոպոսներ ձեռնադրեց և միւռոն օրհնեց հակառակ ազգային սովորութեան և Էջմիածնի կանոններին։ Եւ այսպիսով մեծ երկպառակութիւն ձգեց հայոց եկեղեցու մէջ»։

Մինչդեռ Ներսէսն ու Դանիէլը այս գործերով էին զբաղուած՝ Դաւիթը Էջմիածնի հարստութեան վատնողութեամբ՝ իրան դիրքը ամրացրեց այն աստիճանի, որ Օսմանեան և Պարսկական կառավարութիւնների միջոցաւ ինչպէս Դանիէլին ու Ներսիսին, նոյնպէս և նրանց կուսակիցներին շղթայակապ Էջմիածին բերել տալով՝ բանտ ձգեց, որտեղից, սակայն, Ներսէսը փախաւ Վրաստան, իսկ Դանիէլը աքսորուեցաւ Մարաղա"։

«Միքանի ժամանակ անցնելուց յետոյ՝ Պարսից կառավարութիւնը Դաւթից դժգոհ մնալով՝ նրան փոխեց և տեղը Դանիէլ Արքեպիսկոպոսին նստացրեց։—Այս լսելով Ներսէսն անմիջապէս Էջմիածին վերադարձաւ և եպիսկոպոս ձեռնադրելով՝ գործերի կառավարութիւնը իր ձեռքն առաւ։ Իսկ իր գործունէութեան առաջին քայլն եղաւ՝ պաշտօնազուրկ Դաւթի մօրուքի խուզելը,

նրան բանտարկելն ու նրա կուսակիցների դէմ հալածանք յարուցանելը»։

«Էջմիածնի հարստութեան մնացորդը, որ տակաւին Դաւիթը չէր վատնել, Ներսէսն ու Դանիէլը Երևանի Սարդարին ուղարկեցին»։

«Վերջապէս կամենալով հայերի մէջ եղած երկպառակութեանը վերջ դնել՝ Ներսէսը Սինօդ հիմնեց, որի անդամներն թէև իրան անձնատուր մարդիկ էին, բայց նա էլի այնպիսի դրութեան մէջ դրեց Սինօդը, որ իր կամքի հակառակ ոչինչ բան չէր կարող կատարուել այնտեղ։ Ընդ նմին Սինօդի գոյութիւնը բնաւ չընդունեցին Տաճկահայերը»։

«1810 թուականին Դանիէլը մեռաւ. նրա տեղը ընտրուեցաւ Աժդարխանի առաջնորդ Եփրեմ արքեպիսկոպոսը, որին Ներսէսը ստիպեց երդում տալ, որ ամեն բանում ենթարկուի սինօդի վճիռներին։ Իսկ ինքը, Ներսէսը, ինքնիշխանաբար վարելով սինօդի գործերը և արհամարհելով յարգելի հոգևորականներին՝ յաճախ իր դէմ իրաւացի տրտունջներ էր բարձրացնում»։

Վերջապէս 1814 թուին Ներսիսի դէմ եղած ընդհանուր տրտունջը այն աստիճանի հասաւ, որ այլևս նա չէր կարող Էջմիածնում մնալ, այլ ստիպուած Վրաստանի առաջնորդութիւնն ընդունեց»։

Թիֆլիզ ժամանելով՝ Ներսէսը, ըստ իր սովորութեան, այնտեղի հայերի մէջ ևս երկպառակութիւն ձգեց, որ վերջ ի վերջոյ այնքան սուր կերպարանք ստացաւ, որ Թիֆլիսի նշանաւոր հայերը ստիպուեցան բողոքել նրա դէմ

Եփրեմ կաթողիկոսին՝ թախանձելով որ Ներսէսին յետ կանչէ Էջմիածին»։

«Սակայն Ներսէսը այս անգամ էլ դուրս պըրծաւ։ Այն ժամանակւայ Վրաստանի կառավարիչ գեներալ Երմօլովին իրան պաշտպան ունենալով Ներսէսը իր տեղը պնդացրեց և հրաժարուեց որևէ կախումն ունենալ Եփրեմ կաթողիկոսից մինչև այն աստիճան, որ կաթողիկոսը Նրանից ստացուած վիրաւորանքները երկար տանելուց յետոյ՝ վերջ ի վերջոյ թողեց Էջմիածինը և եկաւ ապաստարան գտնելու Վրաստանում"։

«Շուշի հասնելով կաթողիկոսը Ներսիսին իր մօտ կանչեց. բայց նա չգնաց։ Նրա տեղից կաթողիկոսը յատկապէս մի եպիսկոպոս ուղարկեց, որպէսզի սիրոմամբ նրան Ղարաբաղ բերէ, բայց Ներսէսը դարձեալ չհնազանդեցաւ։ Վերջապէս երբ կաթողիկոսը ստիպուած՝ դիմեց Երմօլովին և Ներսիսի առաքումը պահանջեց,—այն ժամանակ միայն նա գնաց։ Սակայն Շուշի հասնելուն պէս՝ Ներսէսը ծերունի կաթողիկոսին այնպէս հասկացրեց իբրև թէ իրանից է կախուած թոյլ տալ ծերունուն հանգիստ ապրել մեր (Ռուսիոյ) երկրում և կամ նորից յետ դարձնել Պարսկաստան։ Այսպիսով այն աստիճան վախեցրեց Ներսէսը Եփրեմին, որ նա հարկադրուած եղաւ կաթողիկոսութիւնից հրաժարուել և հայրապետական դահի ու գործերի կառավարութիւնը իրան, Ներսիսին, յանձնել»։

«Սրանից յետոյ՝ Ներսէսը Եփրեմին տարաւ

Թիֆլիզի մօտ եղած մի հայոց վանք (Հաղբատ), ուր նա ապրում էր որպէս մի հասարակ վարդապետ, առանց որևէ իրաւունքի և իշխանութեան»։

«Այս վիճակումն էին գտնվում ահա հայոց հոգևորականութեան գործերը, երբ վերջին ռուս-պարսկական պատերազմն սկսուեցաւ և այսպիսով երկպառակութիւն ընկաւ Տաճկահայերի և Պարսկահայերի մէջ։ Հէնց այս պատճառով էլ՝ Էջմիածնի ազդեցութիւնը Տաճկաստանի հայ հոգեորականութեան վրայ մինչ օրս էլ շատ անհնարն է*)։

ՃԿ.

Եթէ ընթերցողը մեր քաղուածները ուշադրութեամբ կարդացել է՝ նա այժմ կարդալով այս «տեղեկութիւնները Ներսէս արքեպիսկոպոսի մասին», անշուշտ կը տեսնի, որ այս տեղեկագրի ամեն մի տողում ու բառում ստերն ու զրպարտութիւնները առաջին և էական տեղն են բռնում։ Աշտարակեցուն վատ մարդ դուրս բերել, պատմական փաստերն աղճատել, շուռ ու մուռ է տուել, ռուս քաղաքականութեան գործած խառնակութիւնները, պառակտում ու աքսորանքները թէ Կ. Պոլսի հոգևորականների և թէ աշխարհականների մէջ Ներսիսին է վերագրել։ Նրան է վերագրել բացառապէս և այն խաղերը, որ պարսից և ռուսաց քաղաքականութիւնը խաղաց Եփրեմ կաթողիկոսի գլխին։

*) Акты, VII, եր. 255.

Գալով Ներսիսի և Թիֆլիզի նշանաւոր հայերի մէջ ծագած կռիւներին,—այդ մասին իր տեղում մենք կը խօսենք։

Միւս կողմից տեղեկագրի կազմողը՝ իբրև յանցանք, իբրև վատութիւն է դուրս բերել Ներսիսի միքանի գործերը, որոնք նրան պատիւ են բերում։ Դրանց համար Ներսէսը գովասանքի է արժանի, այլ ոչ պարսաւանքի։

Բայց... հենց բանն էլ այն է, որ այդ տեղեկագիրը կազմուած է յատկապէս Ներսիսին վատաբանելու, պարսաւելու, նրան անուանարկելու նպատակաւ։

Ո՞վ է կազմել այս գրուածքը,—ճիշտը յայտնի չէ։ Կարծվում է, որ Լազարեանի հետ Մոսկուայից ռուսաց բանակն եկող Սերոբէն է։

Իսկ կազմել տուողը լաւ յայտնի է. և ոչ այլ ոք է, բայց եթէ նորին պայծառափայլութիւն՝ Կովկասի կառավարչապետ դուքս Պասկեվիչը։

Ներսէս Աշտարակեցուն տապալելու համար՝ դուքսը չխորշեց մինչև իսկ այսպիսի պասկվիլ-տեղեկագիր ներկայացնել Պետերբուրգի արքունիքին։

Ճիշտ է Պասկեվիչը իւր գրութեան մէջ մինիստրին գրում է, որ այս „տեղեկութիւնները Ներսիսի մասին“ պաշտօնական աղբիւրներից չէ քաղած և ինքը նրանց ճշտութեան մասին չի երաշխաւորում,—այնուամենայնիւ Պասկեվիչը այս տեղեկութիւնները ի պաշտօնէ ներկայացրել է իր բարձրագոյն իշխանութեանը։

Այժմ կարդանք Պասկեվիչի պաշտօնական գրութիւնը առ նախարարը։

Գեներալ Կրասովսկու վրայ մի շարք մեղադրանքներ բառնալուց յետոյ՝ Պասկեվիչը դառնում է Ներսիսին հետևեալ տողերով։

ՃԿԱ.

„Քանի որ խօսք ընկաւ այս (Ներսէս) արքեպիսկոպոսի մասին՝ ես չեմ ուզում ծածկել իմ ունեցած կարծիքներս նորա վերաբերութեամբ“։

«Պարսկաստանի հետ 1826 թուին պատերազմ բացուած ժամանակ՝ Ներսէսը ամեն կերպ ոյժ էր թափում հաստատել իր ունեցած ջերմեռանդութիւնը առ մեզ. նա ազդարարութիւններ և հրաւէրներ էր հրատարակում առ հայոց ազգը (ըստ խնդրանաց Երմոլովի՝ Թիֆլիզում կայացած զինուորական խորհրդի՝ աւելացնում ենք մենք), յանձն էր առնում ճիշտ տեղեկութիւններ հաղորդել թշնամեաց մասին ևայլն։

Զգիտեմ, որ ատիճան այս բոլորը օգտաւէտ եղաւ մեզ, բայց կարող եմ հաստատապէս ասել, որ նրա հաղորդած տեղեկութիւնները երբեմն ճիշտ չէին։ Գեներալ Բենգենդորֆի բանակը արտասահման ուղևորելուց առաջ՝ նա հաւատացնում էր, որ զորքերն այնտեղ մի ամուսայ գետնի բերք կը գտնեն և թէ այդ մասին զորքին կօգնէ Էջմիածնի վանքը. բայց դուք (Դիբիչ) այդ ժամանակ Թիֆլիզում լինելով՝ ինքներդ

վկայ եղաք, որ նրա այդպէս հաւատացնելու պատճառաւ՝ մեր զինուորներն այնտեղ էին հասել, որ երկու օր բոյսերի արմատներով էին կերակրում*) և եթէ գործ չդնուէին արտաքոյ կարգի ջանքեր Վրաստանից հաց հասցնել՝ ամբողջ բանակը սովից մեծամեծ դժբաղդութեանց պիտի ենթարկուէր»։

Ապա Ներսէս արքեպիսկոպոսը պնդում էր, թէ Երևանի շրջակայքում կլիման առողջարար է և Վրաստանի շոքին սովոր զօրաց համար—անվնաս։ Հետևանքները ցոյց տուին թէ ո՞ր աստիճանի ուղիղ էր Ներսէսի այս վկայութիւնը և պարզուեց, որ նրա միակ նպատակն է եղել շուտով հանել Էջմիածին ու իշխել այնտեղ։ Երբ ես յունիսի սկզբին հասայ Երևանի մօտ՝ Բենդեն-զօրֆի բանակում 1500 հոգուց աւելի հիւանդներ կային և այնտեղ էր արմատը այն հիւանդութեանց, որ յետոյ կէս առ կէս նուազեցրին մեր գունդերը։

Վերջապէս Ներսէս արքեպիսկոպոսին ենք պարտական Օշականի (կամ Աշտարակի) պատերազմը, որովհետև նա յատկապէս մարդ էր ուղարկել Կրասովսկուն ամենախիստ թախանձանքներով, թէև բերանացի և ոչ գրաւոր, համոզելու, որ շուտ հանի Էջմիածինն ազատելու և

*) Ներսէսի հաւաստիացումները անճիշտ չէին, այլ բոլորովին ճիշտ։ Սակայն եթէ Ներսէսը հնարաւորութիւն և յարմարութիւն չունէր իմանալու, որ պատերազմի նախօրեկին պարսիկները հայկական գիւղերը քարուքանդ են արել, պաշարներն այրել, վանքը թալանել,—իսկ Պասկեվիչը ունէ՞ր այդ յարմարութիւնը։

այդպիսով ստիպեց Կրասովսկուն այն տարօրինակ գործը բռնելու։

Յետոյ իմ Էջմիածին եղած ժամանակ՝ Ներսէսի հետ խօսակցելով՝ ես նրա մէջ նկատեցի Հգտուն զանազան պահանջներ անելու յօգուտ վանքի, որին, ըստ նրա վկայութեան, պատկանում են Երևան գաւառում շատ հողեր և գիւղեր։

«Ես պատճառ ունիմ կարծելու թէ իմ հակաճառութիւնն այդ մասին և պարզապէս հաւատացնելս՝ թէ քանի որ ես եմ այստեղ հրամանատարը, նա չի հասնիլ իր ուզածին,—ստիպեցին նրան այնքան սերտ կապուել Կրասովսկու հետ և չկատարել իմ հրամաններս հողերի և եկամուտների մասին տեղեկութիւններ ժողովելու գործում»։

«Ներսէսի մասին ես մեծ դժուարութեան մէջ եմ գտնուում, քաղաքականութիւնն արգելում է ինձ բոլորովին հեռացնել նրան գործերից, միւս կողմից՝ եթէ թողնել նրան շարունակել իր ունեցած ազդեցութիւնը՝ այն ժամանակ վանքի (Էջմիածնի) կլուծական պահանջներն այլևս վերջ չեն ունենալ*)»։

Կարդանք Պասկեվիչի մի այլ գրութիւնը յանուն Դիբիչին, որի առաջ մեղադրվում են թէ Կրասովսկին (որին Պասկեվիչը արդէն արձակել էր պաշտօնից) և թէ Ներսէսը։

«Երևանի «Ժամանակաւոր վարչութեան» մէջ,—գրում է Պասկեվիչը,—գործերը մեծ մա-

*) Акты, II, եր. 258, № 214։

սամբ սկսվում են եղել Ներսիսի տեղեկագիրները-
ով և վերջանում Կրասովսկու վճիռների մա-
կագրութեամբ և նա ամենայն դէպքում համա-
ձայն է գտնուել Ներսիսի հետ։ Դորա մի լաւ ա-
պացոյց կարող է լինել հետևեալ գործը։ Երևան-
ցի մի թուրք Զմիւռնիայում գնել էր մի տղայ,
որին յետոյ շինել էր իր որդեգիր։ Ներսէսն ա-
ռանց ապացոյցների պնդում էր, թէ պէտք է որ
այդ տղան հայի լինի։ Թուրքը ներկայացրեց
վկայական, որ նա իրաւ գնել է տղային, իսկ
տղան չէր կամենում ընդունել քրիստոնէութիւն
ու փախչում էր ոստիկանապետի մօտից. այնու-
ամենայնիւ Ներսէսը վճիռ է կայացրել, որ տղա-
յին առնեն թուրքի ձեռքից։

Առհասարակ հայերը միայն, ևս և նրանք, որոնք
խնդիրքով դիմում էին Ներսիսին, միմիայն նը-
րանք էին բաւականութիւն ստանում, իսկ մահ-
մեդականները տեսնելով, որ իրանք արհամար-
հուած են և վարչութիւնը բոլորովին չի հոգա-
նաւորում իրանց, սկսեցին տրտնջալ. և եթէ ես
շուտ չէի եկել՝ շատ անհաճոյ հետևանքներ պի-
տի առաջ գային»։

Նոյն տեսակ և հայերին միշտ յայտնապէս
գերադասելով, քան մահմեդականներին, բաժան-
ուած են հացը թէ ցանելու և թէ չունևորներին
կերակրելու համար»։

«Ներսէս արքեպիսկոպոսի ներգործական
մասնակցութիւնը Երևանի վարչութեան գործե-
րում՝ առիթ տուեց նրան յայտնապէս գերադա-

սել հայերին մահմեդականներից և նպաստեց այս
եպիսկոպոսի միակողմանի ձգտումներին, որոնք
աւելի օգտաւէտ էին հայոց հոգևորականութեան
և Էջմիածնի վանքի համար՝ քան թէ հասարա-
կութեանը։ Իսկ նրա անսահման ազդեցութիւնը
բոլոր գործերի վրայ, որ Կրասովսկին միանգա-
մայն յանձնել էր նրան, գլխաւոր պատճառնե-
րից մէկն է, որ Երևանի աշխարհում շարունակ-
ում են տիրել անբարեկարգութիւնը և անբա-
ւականութիւն յարուցանել մահմեդականների
մէջ։ Այդ պատճառով ես կարևոր համարեցի հե-
ռացնել Ներսիսին Երևանի վարչութեան նիստե-
րից, մանաւանդ որ Պետերբուրգում մշակած
կանոնադրութեան մէջ էլ նրան ոչինչ մասնակ-
ցութիւն չի թոյլատրուած երկրիս աշխարհական
գործերի վարչութեան մէջ։ Ներսիսին ես հեռաց-
րի ոմենաքաղաքավարի ձևով և ամենևին չդիպ-
չելով նրա պատուին*)»։

ՁԿԲ.

Պասկեվիչը չբաւականացաւ Ներսիսին մի-
միայն Երևանի «ժամանակաւոր վարչութեան»
անդամակցութիւնից հեռացնելով, այլ նա ու-
զում էր Կովկասից էլ նրան հեռացնել։

Պասկեվիչը չէր ցանկանում, որ Ներսիսի
անուն այլևս յիշի Կովկասում։

Քանի որ Արարատեան աշխարհը նուաճուած
էր և ընդմիշտ Ռուսիոյ սեպհականութիւնն էր

*) Акты, VII, եր. 258, № 214.

համարած, Ներսէսն այլևս պէտք չէր Պասկեվիչին, ընդհակառակը նա իր մեծ ազդեցութեամբ, իր հմտութեամբ, իր ձգտումներով ու եռանդով, կարող էր միայն խոչնդոտներ ստեղծել Պասկեվիչի կազմակերպած նոր վարչութեան համար։ Բայց ինչպէս հեռացնել նրան, քանի որ նա մի խոշոր ոյժ էր և գրեթէ անկախ դիրք ունէր Պասկեվիչից։ Դեռ նոր էր սաացուել կայսեր բարձրագոյն հրամանը թէ՝ «յանձնել Ներսէս արքեպիսկոպոսին հայոց հոգևոր բոլոր գործերի ղեկավարութիւնը», և այս հրամանը Պասկեվիչը պարտաւոր էր կատարել։

Պասկեվիչը մի բոպէ մտածեց Ներսիսի դէմ գինել Եփրեմ կաթողիկոսին, որ բոլոր ժամանակ Թիֆլիզում վայր էր ընկել և հիւանդ էր։ Բայց Պասկեվիչը շատ լաւ իմանում էր, որ հայրապետը բոլորովին անձնատուր է Ներսիսին և առանց վերջինիս՝ վարչական ոչ մի կարգադրութիւն չէր կարող անել։

Վերջապէս Պասկեվիչը լաւապէս յիշում էր, որ ինչպէս ինքը, նմանապէս և իր նախորդները, Ներսիսին միշտ ներկայացրած էին կայսեր առաջ որպէս ամենահաւատարիմ և ջերմեռանդ մի գործիչ ու գովաբանած էին նրա օգտաւէտ գործունէութիւնը, որին ականատես վկայ եղաւ Թիֆլիզում նոյն իսկ կոմս Դիբիչը։ Դեռ շատ ժամանակ չէր անցել, որ Պասկեվիչի միջնորդութեամբ՝ կայսրը Ներսիսին պարգևատրեց Ս. Աղէքսանդր Նեվսկու բարձրագոյն շքանշանով։

Արդ՝ ինչ մի ծանր յանցանք գործեց Ներսէսը այս կարճ միջոցում, որ առիթ լինի խընդրելու արքունիքի հաճութիւնը նրան այստեղից հեռացնելու, և կամ ուր ուղարկելու։

ՃԿԳ.

Յանցանք, ի հարկէ, Ներսէսը չէր գործել, ոչ մեծ և ոչ էլ փոքր յանցանք։

Նրա միակ յանցանքն այն էր,—Պասկեվիչի տեսակէտով նայելով հարցի վրայ,—որ ծառայելով պետութեան շահերին՝ չէր ուզում միևնոյն ժամանակ զանց առնել և իր ազգային-եկեղեցական շահերը։ Եւ թէպէտ այդ մասում Ներսէսը ոչ մի առանձին բարիք չհասցրեց իր եկեղեցուն, իր ազգին և Պասկեվիչը արաւ այն, ինչ որ ինքն էր ցանկանում,—այնուամենայնիւ Ներսիսի հէնց իր ազգային շահերի պաշտպան հանդիսանալն էլ՝ մեծ յանցանք էր Պասկեվիչների աչքում։ Ուստի և նրանք ամեն ժամանակ Ներսիսի նման հայ գործիչներին, վերջ ի վերջոյ, տապալել և իբրև պետական յանցաւոր հալածել ու աքսորել են տուել։

Բացի այս ընդհանուր,—աւելացնենք նեղ ու միակողմանի,—քաղաքական հայեացքից՝ Պասկեվիչը մի այլ, պատճառ էլ ունէր Ներսիսին հալածելու։

Պատճառն այս է։

Ներսէսը մինչև իր կենաց վերջին բոպէն

ձախ ծոցի գրպանում մի թուղթ էր պահում, որից չէր բաժանւում գիշեր ու ցերեկ։

Եւ ամեն անգամ, երբ Պասկեվիչի մասին, անցած գնացած անցքերի մասին, մանաւոր, մտերմական շրջանում խօսք էր լինում, Ներսէսը ձեռքը ձախ ծոցի վրայ էր դնում և ասում՝ «ահա այստեղ է կաշկանդած Պասկեվիչը»։

Այդ թղթի գոյութեան մասին տեղեակ էին այն ժամանակւայ Կովկասի կուսակալները՝ իշխան Վարանցովը, Մուրավեովը և իշխան Բարեաթինսկին։ Բայց ոչ ոք չգիտէր թէ ինչ էր թղթի բովանդակութիւնը։ Ներսէսը ոչ ուրիշին էր ցոյց տալիս յիշեալ թուղթը, ոչ էլ հրատարակում՝ գոնէ արտասահմանի հայ թերթերից մէկում*)։

Ենթադրաբար և աւանդաբար ասում էին,

*) Եթէ հաւատանք Աւետիս Պէրպէրեանին (տես «Պատմութիւն Հայոց Կ. Պոլիս, 1871 երես 283) Ներսէս Աշտարակեցու ծոցում պահւած այդ թուղթը՝ Պասկեվիչի նրան տւած ստորագրութիւնն է, որին իբրև թէ՝ Նիկողայոս կայսրն էլ ստորագրած է։

Նրանում իբրև թէ գրւած է, որ եթէ Ներսէսը ռուս բանակին աջակից լինի Երևանի և Նախիջևանի խանութիւնները պարսիկներից վերցնելու,—այն ժամանակ այդ երկիրը իբրեւ մի մասնաւոր դքսութիւն է համարւելու՝ ռուսաց հովանաւորութեան և պաշտպանութեան ներքոյ։

Պէրպէրեանը գրում է նաև, որ երբ Ներսէս Աշտարակեցին ամենայն Հայոց կաթողիկոս ընտրւելիս Ս. Պետերբուրգ գնաց,—յիշեալ ստորագրութեան մասին այնտեղ խօսք ըացւեց Ներսիսի և կայսեր մէջ։ Վերջինի իբրև թէ Ներսիսին ասած լինի՝ «այժմ քաղաքականութիւնն Եւրոպացւոց ընդդէմ ելանէ այսմ կարգադրութեան, և ոչ յաջողի բնաւ և ազգ ձեր տեսանէ վնասս յամենայն կողմանս, ուր և ցրւեալք իսկ են։ Եթէ ողորմութեամբն Աստծոյ՝ ի գլուխ ասրոյց զԱրևելեան խնդիրն ազատութեան Քրիստոնէից, յայնժամ դիւրաւ յաջողի և այդ խնդիր ձեր« և այլն։

իբրև թէ թուղթը Պասկեվիչն է տւել Ներսիսին պատերազմից առաջ և նրանում մի խոստմունք է արել յօգուտ հայ ազգին, միայն ինքնագլուխ՝ առանց բարձրագոյն հաճութեան*)։

Եթէ յիրաւի, մի այդպիսի խոստմունք կար և Պասկեվիչը չէր կարողանում կամ չէր կամենում կատարել, իսկ Ներսէսը պահանջում էր,—բնական է որ նրանց փոխադարձ յարաբերութիւնը պիտի լարւէր հետզհետէ և Պասկեվիչը պիտի աշխատէր Ներսիսից ազատւել, թէկուզ պետական յանցաւոր դուրս բերելով նրան բարձր իշխանութեան առաջ։

Աքսոր գնալուց առաջ Ներսէսը շատ ցանկացաւ մի անգամ ևս տեսակցել Պասկեվիչի հետ։ Սակայն վերջինս փախուստ էր տալիս։

Աքսոր գնալիս էլ՝ երբ Կովկասի սարերն անցաւ, Ներսէսը ուզում էր Պետերբուրգ մտնել և ներկայանալ կայսեր, բայց Պասկեվիչի աշխատութեամբ նրա այդ ցանկութիւնն էլ գլուխ չեկաւ։ Եւ Պասկեվիչը շարունակում էր իր հալածանքը Աշտարակեցու դէմ, նոյնիսկ նրա Կովկասից մեկնելուց յետոյ էլ։

ՃԿԴ.

Պետերբուրգում շատ լաւ ծանօթ էին Պաս-

Մեր ձեռքում կայ Ներսիսի մի կոնդակը, ուր նա նկարագրում է իւր տեսակցութիւնը կայսեր հետ։ Յիշեալ ստորագրութեան մասին՝ այնտեղ դրական ակնարկ չկայ։

*) Ասող ու գրողներ էլ են եղել, իբրև թէ Ներսիսին խոստումն տրւած է եղել Նիկողայոս I կայսեր կողմից։ Ինչ էլ որ լինի՝ Ներսիսի յանկարծամահ լինելու պատճառով նրա գրպանի թուղթն էլ յանկարծ անյայտացաւ, յայտնի չէ թէ ում ձեռքով։

կեվիչի հոգեկան յատկութիւնների հետ. գիտէին որ այդ տաղանդաւոր զօրապետը ամբարիշտ մարդ է և իր հակառակորդներին, կամ չսիրած մարդկանց տապալելու համար, առհասարակ, միջոցների մէջ այնքան էլ խորութիւն չի դնում, ինչպէս որ այդ երևացել էր Երմօլովի, Կրասովսկու, իշխան Էրիստովի, Զավչավադզէի, Մադաթեանի, Լազարեանի և այլոց տապալմանց ժամանակ,— այո, Պետերբուրգում այս ամենը գիտէին, բայց և այնպէս՝ ի նկատի առնելով ռուս տաճկական պատերազմի մօտ լինելը, չկամեցան Ներսիսի պատճառով Պասկեվիչի սրտին դիպչել։ Միևնոյն ժամանակ Պետերբուրգում երկիւղ էին կրում, որ Ներսիսին իբրև ամբաստանուած գործչի, նրան ամբաստանող Պասկեվիչի կառավարուած երկրում թողնելը կարող է աւելի վատ հետևանք առաջ բերել,—ուստի և ցանկանում էին Ներսիսին տեղափոխել Ռուսաստան մի այնպիսի պաշտօնով, որ թէ նրա կոչմանը յարմար լինէր և թէ կառավարութեան օգտաւէտ։

Դէպքի պատահականութեամբ յանկարծ մի այդպիսի առիթ ևս լոյս ընկաւ, որ է հետևեալը։

Թերևս ընթերցողը չի մոռացել Յովսէփ կաթողիկոս Արղութեանի ձեռնասուն Գրիգոր վարդապետին, որ կաթողիկոսի մահուանից յետոյ նրա եղբօր որդու և Լազարեան կառավարչապետի հետ Թիֆլիզում խօսքները մէկ արած՝ կաթողիկոսական իրերի մեծագոյն մասը սեպհականեցին, Էջմիածնից հրաւիրակ եկած եպիսկոպոսներին դիակին մօտենալու չթողին, որ մի կեղծ և միտումաւոր կտակ լոյս բերին, իբրև թէ հանգուցեալ Յովսէփը իրան յաջորդ է նշանակել Դաւթին, իսկ Գրիգոր վարդապետին էլ՝ Ռուսահայերի առաջնորդ՝ Եփրեմի փոխարէն։

Ընթերցողը չի մոռացել թերևս և այն, որ Գրիգոր վարդապետը և իր վերոյիշեալ երկու աջակիցները Էջմիածնի հրաւիրած եպիսկոպոսների վերադարձը յէջմիածին խափանելով՝ այնտեղ մի պատգամաւորութիւն ուղարկեցին վրաց արքայորդի Դաւիթի նախագահութեամբ և Դաւիթ արքեպիսկոպոսին բռնութեամբ կաթողիկոս ընտրել ու հաստատել տին Տամարա դեսպանի աջակցութեամբ։

Այնուհետև նոր կաթողիկոս Դաւիթը Գրիգոր վարդապետին եպիսկոպոս ձեռնադրելով՝ Ռուսահայերի առաջնորդ կարգեց Եփրեմի փոխարէն, որ ի հարկէ այդ կարգադրութիւնից դժգոհ մնալով սկսեց ժողովրդին գրգռել ընդդէմ նոր առաջնորդ Գրիգորի։ Սա էլ դիմեց ռուսաց կառավարութեան օգնութեանը։

Աղէքսանդր Ա. կայսրը կամենալով այս երկու հոգևորականներին ևս շահեցնել՝ Ռուսահայերի վիճակը երկու մասի բաժանեց, ամեն մէկին մի մի մաս տալով։—Սակայն դրանով հաշտութիւնը գլուխ չեկաւ։

Այնուհետև կայսրը հրամայեց, որ Եփրեմի համար յարքունուստ նշանակուած ռոճիկը երկուսի մէջ հաւասար բաժին լինի։ Սակայն այս միջոցն ևս գործին չօգնեց։

Այդ ժամանակն էր ահա, որ կառավարութեան հայեացքը փոխուեց և նա, փոխանակ Դաւթին՝ սկսեց Դանիէլին պաշտպանել ու, վերջ ի վերջոյ, կաթողիկոսացնել։

Դաւթի տապալմամբ տապալուեցան և նրա կուսակիցները, որոց մէջ առաջին տեղը բռնում էր Գրիգոր եպիսկոպոսը, որ կայսերական հրամանով 1806 թուականին արտաքսուեցաւ ոչ միայն մայրաքաղաքներից, այլ նաև Ռուսաստանից։

Սակայն Գրիգորը ճարտար, պնդերես մարդ գոլով, ընդ նմին և ռուսերէնագէտ, չվհատեցաւ, այլ դիմեց Օդեսայի քաղաքապետ Ռիշելիօ դքոի պաշտպանութեանը։

Ռիշելիօն ուրախութեամբ ընդունեց Գրիգորին և կարճ միջոցից յետոյ՝ հաստատեց Մոլդավիայի, Վալախիայի և Բեսարաբիայի հայերի առաջնորդ՝ անկախ Ս. Էջմիածնի կաթողիկոսից և Կ. Պոլսոյ պատրիարքից։

Եւ բաւականին ծառայութիւններ մատուցանելով կառավարութեանը՝ վարձատրուեցաւ Անայի Ա. աստիճանի շքանշանով, Վլադիմիրի Բ. աստիճանով և վեղարի ադամանդեայ խաչով։ Հրաւիրուեցաւ և ներկայ եղաւ նաև Աղէքսանդր Ա. և Նիկողայոս կայսրների թագադրութեան հանդէսներին։

Գրիգոր եպիսկոպոսը իր վիճակը երկար տարիներ կառավարեց անկախօրէն՝ մերժելով միանգամայն Մայր Աթոռի և նրա գահակալի իրաւասութիւնը։

Եւ ահա այս Գրիգոր եպիսկոպոսը վաղճանուեցաւ հէնց այն տարին, երբ Պասկեվիչը հետամուտ էր Ներսէս Աշտարակեցուն հեռացնել Կովկասից։

Գրիգոր եպիսկոպոսի մահը ամենայարմար առիթ եղաւ Պետերբուրգի արքունիքի համար՝ թէ Պասկեվիչի կամքը կատարելու և թէ Ներսիսին իրան յարմար պաշտօն տալու, որ էր Բեսարաբիայի թափուր մնացած թեմի առաջնորդութիւնը։

Ի դէպ. Ռուսաստանը արդէն կազմ և պատրաստ էր Օսմանեան պետութեանը պատերազմ յայտնելու։ Եւ նրան անհրաժեշտ էր Բեսարաբիայում ունենալ մի կտրիճ, գործունեայ հայ եպիսկոպոս, որ կարողանար Արղութեան Յովսէփ արքեպիսկոպոսի նման ռուսական ազդեցութիւնը տարածել Բալկանեան թերակղզու հայ ժողովրդի և նրա միջոցաւ նաև տեղացիների վրայ։

Այն ժամանակ հայ հոգևորականութեան մէջ այդպիսի դեր խաղալու համար ամենայնդունակը՝ Ներսէս արքեպիսկոպոսն էր միմիայն։ Եւ ահա 1828 թուականի ապրիլի 13-ին Պասկեվիչը Բենգենդորֆ նախարարից մի գրութիւն ստացաւ հետևեալ բովանդակութեամբ։

ՁԿԵ.

«Թագաւոր կայսրը այժմ բարձրագոյն ուշադրութիւն դարձնելով Բեսարաբիայում և շրջակայ երկիրներում ընակուած հայոց ազգի վը-

բայ՝ հրամայեց ինձ այնտեղի թեմական Գրիգոր արքեպիսկոպոսի մահուամբ դառնալ ձեզ հետևեալը յայտնելով։ Շատ հանգամանքներից և վկայութիւններից յայտնի է, որ ամենայն հայոց ծայրագոյն պատրիարքը ըստ իր աստիճանի և ազդեցութեան է գլուխ և պետ հայոց ազգի։ Այս կաթողիկոսի և նրա նշանակած թեմական առաջնորդների ու յաջորդների հոգևոր իշխանութիւնը բարեկարգութիւն է պահպանում նոցա ժողովրդի մէջ և սրան ուղղում է դէպի հանրօգուտ նպատակներ»։

«Այս պատճառով՝ բարձրագոյն հաճութեամբ պատրաստուած են կից ընդսմին ուղարկուող երկու գրութիւններ՝ առ ծայրագոյն պատրիարքն (Եփրեմը) և առ Ներսէս արքեպիսկոպոսն այն գիտակցութեամբ, որ եթէ դուք ըստ տեղական հանգամանաց և ըստ ձեր դատողութեան նպատակայարմար կը համարէք, այն ժամանակ բարեհաճէք այդ գրութիւններն ուղարկել վերոյիշեալ անձնաւորութիւններին, որպէսզի ըստ ներկայ հանգամանաց շուտով տնօրինեն»։

«Օգտաւէտ կը լինէր, եթէ Բեսարաբիա կարողանար գնալ Ներսէս սրբազանը, որ յայտնի է ինչպէս իր ապացուցած հաւատարմութեամբ և ցոյց տուած ծառայութիւններովը, նմանապէս և իր փորձառութեամբն ու երկրին ճանաչողութեամբ։ Բայց իցէ թէ այս հովւապետի առողջութիւնը և տարիքը, կամ թէ գուցէ թեմական վարչութեան համար մնալու անհրաժեշտութիւ-

նը՝ արգելք լինեն նրա գալուն,—այն ժամանակ պատրիարքի (Եփրեմի) թոյլատրութեամբ ընտրեցէք, լիազօրութիւն տուէք և Բեսարաբիա ուղարկեցէք մի այլ բարձրաստիճան հոգևորական, որ լինի ընդունակ, ժողովրդի վստահութիւնը գրաւած և տեղեակ երկրին ու սահմիկ լեզուին։ Թէ այս մասին դուք ինչ միջոցներ գործ կը դնէք, խոնարհաբար խնդրեմ հաղորդել ինձ Նորին կայսերական Մեծութեան զեկուցանելու համար*)»։

ՃԿԶ.

Ահա և Բենդենդորֆի գրութիւնը յանուն Եփրեմ կաթողիկոսի.

«Առհասարակ ընդհանուր հայոց ազգի փորձով ցոյց տուած հաւատարմութիւնը առ կայսերական գահը համայն ռուսաց, միշտ գրաւել է ռուսաց թագաւորների առանձին ուշադրութիւնը և այժմ ողջամբ թագաւորող թագաւոր կայսրը բազմիցս արժանացրել է այդ ազգը իր բարձրագոյն գոհունակութեանը նրա գեղեցիկ անձնուիրութեան համար առ Ռուսիան, մանաւանդ որ ցոյց տուեց նա վերջին պարսկական պատերազմի ժամանակ»։

«Ըստ բարձրագոյն հաճութեան դառնում եմ հիմա Ձերդ վեհափառութեան հետևեալը յայտնելով։ Մեր ամենաօգոստափառ արքայի սրբազան կամքը ամենայն հայոց հովանաւորութիւն

*) Акты, VII. եր. 252 № 206.

ցոյց տալու մասին՝ հիմնուած է այն բարերար և փրկարար նպատակի վրայ, որ այդ ազգը ամեն երկրներում բարօրութիւն վայելէ, հնազանդ լինի օրինաւոր իշխանութեանց և իր անձնիրութեամբն առ Ռուսիան՝ չխախտէ ընդհանուր խաղաղութիւնն ու չենթարկէ իրան հալածանաց և թշուառութեան»։

«Ձեզ, վեհափառ պատրիարք, որպէս ծայրագոյն հովուապետի ամենայն հայոց, կարևորագոյն է ևս՝ հարկ եղած տնօրէնութիւններով օգնել՝ հասնելու ամենաողորմած թագաւոր կայսեր բարերար նպատակին,—բարւոքել և հաստատել ձեզ յանձնուած Քրիստոսի հօտին Աստուծուց վիճակուած բաղտը։ Այդ պատճառով ձեր գլխաւոր իշխանութեան ներքոյ եղած հոգևորականներից կարևոր է ընտրել այնպիսի գեղեցիկ ընդունակութիւնների և ամենից յարգուած անձինք, որոնք մասնակից լինեն Բեսարաբիայում և սահմանակից երկիրներում բնակող հայկազեան ցեղին ցանկալի բարօրութեան հասցնելու գործում»։

«Նախ և առաջ կարևոր է մօտիկ ժամանակներումս վախճանած Բեսարաբիայի հայոց թեմի կառավարիչ Գրիգոր արքեպիսկոպոսի փոխարէն այժմ իսկ մի այլ արքեպիսկոպոս կամ յաջորդ ուղարկել ըստ ձեր կամաց, միայն թէ այդ արհին ընտրուած լինի ամենաընդունակ հոգևորականներից, արժանի ընդհանուր վստահութեան և որ կարողանար օգնել բարեկարգելու այնտեղի հայոց վիճակը ըստ օրինակի իշխան Երկայ-

նաբազուկ Արղութեան Յովսէփ կաթողիկոսի և Գրիգոր ու Թիֆլիզի Յովհաննէս ու արքեպիսկոպոս Ներսիսի, որ արդէն իր վրայ դարձրած է թագաւոր կայսեր բարձրագոյն առանձին բարեհաճութիւնը»։

«Շատ օգտաւէտ կը լինի, եթէ սրբազան Ներսէսը Ձեր վեհափառութեան թոյլտուութեամբ կարողանար գնալ Բեսարաբիա, իր բացակայութեան ժամանակ յանձնելով բոլոր գործերը մի ուրիշ ընդունակ յաջորդի»։

«Կից սրան՝ գրութեամբ, ես դառնում եմ այս մասին և առ նորին բարձր սրբազնութիւնն։ Իմ այս առաջարկութիւնից դուք, վեհափառ պատրիարք, կարող էք հաւատացած լինել, թէ որքան տեղը թագաւոր կայսրը ողորմածաբար է տրամադրուած առ հայոց ազգը և որքան ցանկանում է շարունակել դէպի այդ ազգը իր ամենաողորմած բարեհաճութիւնը այն յուսով, որ ռուսաց կայսերութեանը անձէր այս ազգը միշտ անխախտ կը պահէ իր հաւատարմութիւնը առ բարձրագոյն գահը։

Իր ծանօթութեամբ ազգային գործերի հետ և իր ջերմեռանդութեամբը յայտնի և ձեր հաւատարիմ՝ պետական խորհրդական Խաչատուր Յովակիմեան Լազարեանը, որ կայսերական հրամանու ինձ մօտ պաշտօնեայ է, որպէս առաջ, նոյնպէս և այժմ հաղորդում է ձեզ մանրամասնութիւնները. նա ասուհետև ևս կը շարունակէ բանակցել կարևոր գործերի վերաբերմամբ»։

«Ես կը սպասեմ ձեզանից տեղեկութիւն այն տնօրէնութիւնների մասին, որ դուք հարմար կը համարէք անել Բեսարաբիայի և սահմանակից երկիրների հայոց թեմի կարգադրութեամբ, որպէսզի կարողանամ զեկուցանել Նորին կայսերական Մեծութեան»։

ՃԿԷ.

Ահա և Բենգենդորֆի գրութիւնը յանուն Ներսէս եպիսկոպոսի.

«Ամեն երկիրներում գտնուած հայոց ներկայ դրութիւնը դարձնում է իր վրա մեր ամենաողորմած թագաւոր կայսեր բարերար ուշադրութիւնը։ Հայոց ցեղին առանձին հովանաւորութիւն ցոյց տալու բարձրագոյն կամքի միայնակ հիմն և գլխաւոր նպատակն է, որ այս ազգը ամեն երկիրներում բարօրութիւն վայելէ, հնազանդ լինի իշխանութեանց և իր անձնուիրութեամբն առ Ռուսիան, չխախտելով ընդհանուր խաղաղութիւն, նա և չենթարկէր իրան թշուառութեան ծանր լծին»։

«Այս բարերար դիտակցութեամբ Նորին կայսերական Մեծութիւնը հաճեցաւ, որ ես դառնամ Ձերդ բարձր սրբազնութեանը հրաւիրելով Ձեզ՝ Բեսարաբիայի թեմի և սահմանակից երկիրների հայոց վերաբերեալ այն կարևոր տնօրինութիւններն անելու, որ ըստ ձեր փորձառութեան և ջերմեռանդութեան առ ձեզ դաւանակից ազգն՝ դուք յարմարաւոր կը համարէք։

«Իմ առ ծայրագոյն պատրիարքն ամենայն հայոց ընդամին կից եղած գրութեան պատճէնից, դուք, սրբազնագոյն հովւապետ, կը բարեհաճէք տեսնել, որ նա ևս հրաւիրվում է օգնել հայոց ազգի բարօրութեան գործում, — ազգի՝ որ մի դարուց աւելի է ջերմեռանդութիւն է ցոյց տալիս ռուսաց կայսրութեանը»։

«Առաջիկայ գործի համար շատ օգտաւէտ կը լինէր, եթէ ձեր առողջութիւնը և գործերը թոյլ տային ձեզ գնալ Բեսարաբիա, ուր ես ունենայի պատիւ և բաւականութիւն անձամբ ծանօթանալու ձեզ նման արժանաւորագոյն և յարգելի հովւապետի հետ։

Բայց եթէ անկարող կը լինէք գալու, այն ժամանակ բարեհաճեցէք կարգադրելու, որ այժմէն իսկ ուղարկուի մի ամենաընդունակ և երկրին տեղեակ հոգևորական, որ ժողովրդի մէջ հաւատարմութիւն ունենայ և կարողանայ օգնել բարեկարգութիւններ մտցնելու գործում»։

ՃԿԸ.

Նախարարի այս գրութիւնները Պասկեվիչը՝ ուղարկեց Եփրեմին և Ներսիսին իր առանձին գրութիւններով, որոց իմաստը նոյն է, ինչ որ նախարարների գրութիւնների իմաստը։

Ներսիսին ուղղած իր գրութիւնը Պասկեվիչը վերջացնում էր այս բառերով «հաղորդելով ձերդ բարձր սրբազնութեան թագաւոր կայսեր

բարձրագոյն կամքը՝ խոնարհաբար խնդրում եմ, որքան կարելի է շուտով, տեղեկացնել ինձ թէ՝ հանգամանքները և առողջութիւնը թոյլ տալի՞ս են Ձեզ արդեօք այդ ճանապարհորդութիւնը կատարելու, թէ գուցէ Բեսարաբիա կը նշանակուի մի ուրիշ հովւապետ, որ բարձրագոյն կամքը կատարելու համար՝ պէտք է անմիջապէս ուղևորուի այնտեղ»։

Ներսէսը ի հարկէ հասկացաւ, որ իրան Կովկասից հեռացնել են ուզում և թէ՝ այդ բանը Պասկեվիչի իրան սարքածն է։

Ներսէսը այն էլ հասկացաւ, որ կառավարութիւնը բացի այն, որ իրան աքսորում է, այլ նա և այդ աքսորավայրումն էլ ուզում է նրան իբրև գործիք ծառայեցնել դարձեալ։

Ուստի առանց այլևս երկար-բարակ մտածելու, առանց մինչև անգամ Եփրեմ կաթողիկոսի կամքն ու խորհուրդը հարցնելու՝ Ներսէսը մայիսի 28-ին հետևեալ պատասխանն ուղարկեց Պասկեվիչին՝ «Ձեր մայիսի 21-ի գրութեանը պատիւ ունիմ պատասխանել, որ եկող յունիսի 4-ին ես դուրս կուգամ Էջմիածնից և Աբարանի վրայով կը ընթանամ Թիֆլիզ»։

«Իսկ ինչ կը վերաբերի բարձրագոյն հրամանով իմ Բեսարաբիա ուղևորուելուն, ես իմ պարտքս եմ համարում նախ անձամբ տեսնուել ձեր պայծառափայլութեան հետ և ընդունել ձեր խորհուրդներն ի բարորութիւն Հայոց ազգին, —ուստի խնդրում եմ հաղորդել ինձ՝ որտեղ

կարժանանամ ես ձեզ հետ տեսնուելու եթէ որ ձերդ պայծառափայլութիւնն մինչև իմ գալս, արդէն բարեհաճած կը լինէք ուղևորուելու Թիֆլիզից դէպի Օսմանեան սահմանները*)»։

Ներսիսի այս պատասխանը ոչ թէ Պասկեվիչին չբաւականացրեց, ընդհակառակը աւելի ևս գրգռեց նրան։ Ներսէսը բացայայտ կերպով չէր գրում թէ՝ կամենում է արդեօք Բեսարաբիա գնալ թէ ոչ, այլ կանխապէս ուզում էր տեսնուել իրան (Պասկեվիչի) հետ՝ Հայոց ազգի բարօրութեան համար խօսակցելու դիտաւորութեամբ։

Տեսակցութեան հարցը սաստիկ զայրացնում էր Պասկեվիչին ուստի և խոյս էր տալիս՝ առաջարկելով որ Ներսէսը իր ասելիքը՝ Հայոց ազգի բարօրութեան մասին, գրաւոր կերպով հաղորդէ իրան։

Իսկ Ներսէսն էլ այդ չէր կամենում, այլ անպատճառ տեսակցել էր ուզում, թերևս Պասկևիչի տուած խոստման մասին՝ նրանից վերջնական պատասխան ստանալու նպատակաւ։

Ներսիսի կորուկ պատասխանից յետոյ՝ Պասկևիչը հետևեալ գրութիւնն ուղղեց Բենգենդորֆին։

ՃԿԹ.

«Պատրիարքից դեռ ևս պատասխան չեմ

*) Акты, VII, եր. 254.

ստացել, իսկ Ներսիսից ստացած պատասխանից դեռ ես չի երևում թէ արդեօք նա կամենում է Բեսարաբիա գնալ թէ ոչ։ Այդ պատճառով գրեցի ես նրան թէ՝ թագաւոր կայսեր կամքն է այդ, որ պէտք է անմիջապէս կատարւի, վասն որոյ եթէ ինքը չի ցանկալ երթալու, այն ժամանակ իր փոխարէն թող, ամենակարճ միջոցում, մի ուրիշ եպիսկոպոս ուղարկէ։ Գալով Ներսիսի պահանջմունքին, ինձ հետ տեսնւելու, ես իրան պատասխանեցի, որ սոյն յունիսի 5-ին ես մտադիր եմ դուրս գալու Թիֆլիզից և իսկոյն զօրքերով արշաւելու արտասահման (Տաճկաստան)։ Եւ որովհետև ինքը միտք ունի ուղևորւելու Էջմիածնից միայն յունիսի 4-ին և ընթանալ Աբարանի ճանապարհաւ, վասն որոյ հաղիւ թէ կարողանայ ժամանել Վրաստանի առաջնայ սահմանները այն ժամանակին, որն որ ես որոշել եմ Կարսի փաշալիքը մտնելու համար։ Իսկ եթէ ամսոյս 8-ին կամ 9-ին կարողանայ նա հասնել Գիւմրի, այն ժամանակ գուցէ թէ դեռ գտնէ ինձ այնտեղ։ Այնուամենայնիւ ես նրան գրեցի թէ թողնում եմ իր դատողութեանը՝ մի՞թէ այնքան նշանաւոր են այն պատճառները, որոնք ստիպում են տեսնւել ինձ հետ, որ դրա համար նա պիտի կարողանայ ուշացնել կատարելու բարձրագոյն հրամանը իր ամենափոյթ ուղևորութեան մասին ի Բեսարաբիա, եթէ միայն համաձայն է այդ ճանապարհորդութիւնն անելու և թէ արդեօք աւելի լաւ չի՞ համարիլ նա,

որ հայոց ազգի բարօրութեան վերաբերեալ մըտքերը գրաւորապէս ինձ հաղորդէ*)»։

Այս գրութեան հետ՝ Պասկեվիչը Թիֆլիզում կարգադրեց տալ Ներսիսին արքունի գանձարանից բացի ճանապարհածախքից նաև 300 ոսկի։

Ներսիսի Ռուսաստան գնալու լուրը արագութեամբ տարածւեց հայ ժողովրդի մէջ։ Շատերը այնպէս էին կարծում թէ կայսրը Ներսիսին հրաւիրել է Պետերբուրգ կարևոր յանձնարարութիւններ տալու։ Ինքը Ներսէսն ևս կարծում էր, որ Բեսարաբիա ուղևորւելն իրան համար խիստ բարեպատեհ առիթ է ընծայում անձամբ ներկայանալով կայսեր՝ մանրամասն և ճշգրիտ տեղեկութիւն տալ պարսկահայ գաղթականների թշւառ վիճակի մասին։

Ոմանք այնպէս են կարծում, իբր թէ Ներսէսը Բենգենդորֆի նամակը սխալ է հասկացել, թէ ներկայ Օսմանեան պատերազմի ժամանակ աէրութիւնը շատ կարևորութիւն ունի իր ներկայութեանը և օգնութեանը Բեսարաբիայում և թէ այդ յանձնարարութիւնը վերջացնելով՝ նա դարձեալ պիտի վերադառնայ Կովկաս աւելի ևս մեծ դեր խաղալու կամ գործ կատարելու ի բարօրութիւն Հայոց ազգին։ Նախարարի գրութեան սոյն տողերը թէ՝ Ներսէսը «իր բացակայութեան միջոցին բոլոր գործերը յանձնէ մի ուրիշ ընդունակ յաջորդի»,—իբր թէ հաստատում էին վերոյիշեալ ենթադրութիւնը։ Ասել է թէ Բեսարաբիա գնալով Ներսէսը վերապահում էր իրան

*) Արտ, VII, եր. 253—254.

Վրաստանի առաջնորդութիւնը և Էջմիածնի գերագոյն վարչութեան կառավարութիւնը և իր իշխանութիւնը պիտի տարածուի Բեսարաբիայից մինչև Արաքսի ափը։

Այսպիսի մտքերը փայփայում էին Ներսիսի փառասիրութիւնը և նա վստահ էր թէ մեծ գործեր պիտի կատարէ կայսեր ներկայանալով և պետական բարձրաստիճան պաշտօնեաների հետ տեսակցելով։

Այսպիսի յոյսերով 1828 թ. օգոստոսի կէսին՝ նա Կովկասի լեռներն անցնելով իր ճանապարհն ուղում էր դէպի Ռուսաստան ուղղել, երբ հրաման ստացաւ, որ Քիշնև գնայ և ոչ ուրիշ տեղ։

Այդ հրամանի ստանալը՝ Ներսէսը Ստաւրոպոլից Թիֆլիզի իր մի բարեկամին գրելով՝ աւելացնում էր հետևեալ տողերը. «Քանզի որչափ մտածեմ, համարեմ ստուգիւ զինուորութիւն ստանայի ի ձեռն իւրոյ արքանեկաց յարուցեալ ընդդէմ մերումս հոգևորական կառավարութեանց, ըստ որոյ հարկաւորի զգուշանալ մինչև զայն պատահարն չարին խորտակեսցէ ինքն Տէր*)»։

*) Երկու Ամերիկացի քարոզիչներ իրանց «Ճանապարհորդութիւն ի Հայաստան» գրքի մէջ Ներսիսի մասին շատ գովեստիւք են խօսացել, իսկ գալով նրա Բեսարաբիա գնալուն ասում են՝ «ոչ մի հաստատ բան չկարողացանք իմանալ նրա—Ներսիսի,—քաղաքական խորհուրդների մասին և ոչ էլ նրա Թիֆլիզից (Կովկասից) հեռացնելու մասին։ Մեզ այսքանս պատմեցին թէ նրա և Պասկեվիչի մէջ մի ինչ որ անբաւականութիւն է ծագել, որ սկիզբն տուաւ նրա անակնկալ հեռացուցմանը կամ աւելի ճիշտ ասել նրա աքսորմանը ի Բեսարաբիա։ Դուցէ նրա լուսաւոր և ա-

ՃԺ.

Հնազանդելով տէրութեան հրամանին Ներսէսը գնաց Բեսարաբիա,—Քիշնեվ, որտեղից հոկտեմբերի 16-ին հետևեալ գրութիւնն ուղղեց Պասկեվիչին՝ «Կատարելով բարձրագոյն հրամանը ես Թիֆլիզ հասնելուցս յետոյ ուղևորուեցայ Բեսարաբիա, և միմիայն այն պատճառաւ և ուրիշ կարևոր հոգսերով զբաղուած, ես չկարողացայ մինչև հիմայ պատասխանել Ձեր յունիսի 13-ի գրութեանը։ Կատարելով դժուարին և հեռաւոր ճանապարհորդութիւնս՝ այժմ քաղցր պարտաւորութիւն եմ համարում ինձ մատուցանել Ձերդ պայծառափայլութեան իմ խորին երախտագիտութիւնս Ձեր առ ինձ ունեցած բարեկամութեան ապացոյցների մասին եւ մանաւանդ այն պաշտպանութեան համար, որ դուք ցոյց եք տալիս Էջմիածնին և Ձեր գլխաւոր հրամանատարութեան ներքոյ եղած ընդարձակ երկրի մէջ բնակուող հայերին։ Ըստ հովուապետական պարտականութեանս՝ բարեխօսում եմ և յորդորում շարունակել Ձեզ բարերար հովանաւորութիւնը, որ բազմաթիւ դեպքերում և հանգա-

ազատասէր միտքը՝ առաջնորդում էր նրան դէպի իր ազգի համար օգտաբեր նպատակները»...։

«Ռուսների ինքնակամ ներգործութեամբ, այսպիսով, ամեն բանից զրկուելով և կաթողիկոսական Աթոռը ժառանգելու յոյսն էլ կորսնցնելով՝ Ներսէսը վիճակաւոր արքեպիսկոպոսութեան պատուէր ստացաւ բոլոր հայերի վրայ, որոնք Ռուսիոյ արևմտեան մասումն են բնակուում Սև ծովից սկսեալ մինչև ի Ս. Պետերբուրգ»։ (պատմ. կաթող. էջմ. եր, 127)։

մանքներում այնքան կարևոր է իմ հօտի համար»։

«Ուղարութիւնը և հոգաբարութիւնը Ձեր անձնական յանկութիւնը լինելով, հաւատացնում են, որ օրինաւոր պաշտպանութիւն կը տրուի մանաւանդ նորոգ քաղաքականներին»։

«Անկեղծ շնորհակալութիւն եմ մատուցանում Ձեր ուշադրութեան համար, նմանապէս և նրա համար որ նշանակել էիք տալ ինձ ճանապարհածախք մինչև Քիշնեվ ըստ օրինաց, և բացի այդ՝ 300 ռուբլի։ Այդ գումարն ընդունելուց ես հրաժարուեցի, որովհետև երբէք չեմ ցանկացել ծանրաբեռնել տէրութեանը։ Ոչ առաջ և ոչ հիմայ՝ երբէք չեմ ստացած դրամական նպաստներ և ոչ էլ մտքովս անցել է այդպիսի բան խնդրել»։

„Ընդհակառակը ես միշտ չափաւորել եմ իմ պահանջները և բաւականացել եմ նրանով, ինչ որ ունեմ։ Իմ նպատակս է եղել՝ տալ Աստուծոյն, թագաւոր կայսերն և տէրութեանը, և ի տրիտուր իմ աշխատանաց և անձնուիրութեան՝ աղերսել որքացեալ ազգիս արդար պաշտպանութեան համար“։

«Ձեմ համարձակւում այլևս ծանրաբեռնել Ձերդ պայծառափայլութիւնը, գիտնալով Ձեր բազմատեսակ և ծանր զբաղմունքները։ Բայց եթէ Ձեզ համար ձանձրացուցիչ չի լինել, Ձեր թոյլտուութեամբ, այսուհետև ևս կը բանակցեմ*)»։

*) Акты, VII, էր. 256, № 212.

ՃՀԱ.

Այս լի սարքազմով գրութիւնը, որի ընդգծումները մերն են, փառասէր, գոռոզ Պասկեվիչին շատ ծանր թւաց, ուստի նա Ներսիսին հետևեալ պատասխանը գրեց՝ դեկտեմբերի 29-ին. «Ստանալով Ձեր սրբազնութեան հոկտեմբերի 19-ին գրած նամակը, ես ուշացրի պատասխանը, որովհետև աւելի կարևոր գործերով էի զբաղուած։ Քաջ ճանաչելով իմ կոչմանս վերաբերեալ պարտաւորութիւնները՝ ես կարօտութիւն չունիմ խրատների, որ օտար են Էջմիածնայ վանաց Մայր Աթոռին»։

«Ես հարկ եմ համարում ամեն կերպ հովանաւորութիւն և յարգանք ցոյց տալ նրան (Էջմիածնին) որպէս մի վայրի, ուր կենդրոնացած է Հայոց եկեղեցու ծայրագոյն վարչութիւնը։ Իմ կառավարած երկիրներում բնակւած հայերը նոյն տեսակ իրաւունք ունին իմ հոգատարութիւնս վայելելու, որպէս և Ն. Կ. Մեծութեան միւս հաւատարիմ հպատակները, որ նոյն երկիրներում են ապրում, և յօգուտ նրանց (հայերի) ոչինչ բարեխօսութիւն հարկաւոր չէ, որովհետև սովոր լինելով արդարացիութեան և ամենաողորմած թագաւորի կամքը ճշտութեամբ կատարելով՝ ես իմ հոգացողութեանս մէջ առաւելութիւն չեմ տալիս մեկ կամ միւս ազգին, այլ ինձ պարտաւորութիւն եմ համարում հոգ տանել ամենքի բարօրութեանը համար առանց կրօնի և ծագ-

ման խորութեան և ամենքին պաշտպանութիւն ցոյց տալ ըստ զօրութեան օրէնքի»։

«Ձեր սրբազնութեան ուղղորդելու համար ի Բեսարաբիա իմ նշանակած 300 ոսկի ճանապարհածախսի ընդունելուց հրաժարվելը՝ բոլորովին ձեր կամքից էր կախված։ Ես ինձ պարտաւոր էի համարում միջոց տալ Ձեզ՝ ծառայութեան պատճառաւ եղած ճամբորդութեան համար, և կարծում էի թէ այդ ծախսը Հայոց եկեղեցուն չի վերաբերվել և սրա համար ծանր կը լինի։ Բայց չէի կարծել թէ Ձեր ճանապարհորդութեան ծախքը Դուք Ձեզ վրայ կընդունէք, որովհետև ենթադրում էի՝ թէ դաs իր աաsիճանի աշխատհական հոգաերից և բարիքներից հրաժարուած մի անձի համար այդպիսի ծախս ոչ միայն ծանր կը լինի, այլև անկարելի»։

«Ձեմ հասկանում ես թէ՝ ինչ պատճառաւ Հայոց ազգը դուք կոչում էք «որբացեալ»։ Այդ բառը կարող է վերաբերվել միմիայն այն հայերին, որոնք գտնվում են Պարսից և Օսմանեան իշխանութիւնների տակ։ Իսկ ամենայն ռուսաց մեծ թագաւոր կայսեր բոլոր հպատակներն ունին Նրան ընդհանրական հայր և պաշտպան իրանց և, ի հարկէ, չեն կարող կոչվիլ «որբացեալ*)»։

Պասկեվիչի այս նամակն, մասնաւորապէս այն բառերը, որ նոյնպէս մենք ենք ընդգծել, փոխադարձ պատասխան էին Ներսիսի հեղնանքներին, որոց կոմսը չկարողանալով տանել՝ շա-

*) Акты, VII, եր. 263—217.

բունակեց հալածել Ներսիսին նոյնիսկ նրա աքսոր գնալուց յետոյ։

Նամանաւանդ որ Ներսէսը ինքն էլ, իր հերթում, դադար չէր տալիս Քիշնեվում և իր մտերիմների միջոցաւ՝ դարձեալ մեծ ազդեցութիւն ունէր Վրաստանի և Էջմիածնի հոգևոր գործերի վրայ։

ՃՀԲ.

Ներսիսի ուղղութեանը, նրա ազգասիրութեանը ընդդիմադրելով և վերջ ի վերջոյ, նրան Կովկասից հեռացնել տալով հանդերձ,—Պասկեվիչը շատ լաւ իմանում էր, որ իրան հարկաւոր է մի այլ բարձրաստիճան հոգևորական, որ կարողանար թէ հայոց խանգարված հոգևոր գործերը կարգի դնել, թէ հայ ազգի ջերմեռանդութիւնը առ տէրութիւնը, ըստ առաջնոյն, վառ պահել և թէ վերջապէս նորակազմ ռուսական վարչութեանը աջակցէր, օգնէր։ Սակայն մի այդպիսի անձն այդ ժամանակ չկար հայ կուսակրօն հոգևորականութեան մէջ։ Եղածներն էլ՝ Ներսիսի մտերիմները, նրան և նրա գաղափարներին ջերմ երկրպագուներ էին, թէև թւով շատ սակաւ։

Այդ պատճառաւ Պասկեվիչը կամեցաւ թոյլ և հիւանդոտ Եփրեմին նորից բերել և կաթողիկոսական գահի վրայ բազմեցնել, որպէսզի նրա անուան տակ Սինոդի միջոցով անել տայ, ինչ որ ինքը հարկաւոր կը համարէ, ինչ որ կառավա-

բութեան համար օգտակար կը դտնի։ Պասկեվիչը գիտէր, որ Եփրեմի հէնց միայն ներկայութիւնը ս. Էջմիածնում՝ անշուշտ պատկառանք կը ներշնչէ սինոդականների և միաբանութեան վրայ։

Այս ամենը գիտնալով հանդերձ, Պասկեվիչը այն ևս գիտէր, որ Եփրեմը սաստիկ սիրում է Ներսիսին, որի հեռացելը Կովկասից՝ արդէն մեծ վիշտ էր պատճառել նրան։ Ուստի ծերունուն սիրաշահելու, Աշտարակեցու բացակայութեան տպաւորութիւնը նրանում թուլացնելու նպատակաւ՝ Պասկեվիչը 1828 թ. մայիսի 2-ին, դարձաւ կոմս Դիբբիչին և գովելով Հայոց ազգի այն մեծ հաւատարմութիւնը, որ ունի նա դէպի պատրիարք Եփրեմը, աւելացնում է՝ «Սա իր խորին ծերութեամբ, իր պատուական յատկութիւններով և իր ճշմարիտ քրիստոնէական հեզութեամբ՝ արժանապէս գրաւել է ընդհանուրի սէրը և յարգանքը, վասնորոյ պարտք եմ համարում յառաջադրել, որ եթէ այս ծերունին ամենաողորմածաբար պարգևատրի ս. Աղէքսանդր Նեվսկաւ շքանշանի ադամանդեայ նշաններով, այդ կը լինի առհաւատչեայ թագաւոր կայսեր առանձին բարեհաճութեանը առ ամբողջ ազգն Հայոց և ճշմարիտ վարձատրութիւն ծայրագոյն պատրիարք Եփրեմի ունեցած ջերմեռանդութեանը առ տէրութիւնն Ռուսաց*)»։

Պասկեվիչի այս առաջարկութիւնը, ի հար-

*) Акты, VII, եր. 253 № 207.

կէ, իսկոյն յարգուեցաւ Պետերբուրգում և նոյն 1828 թուականի յուլիսի 22-ին, թագաւոր կայսեր առանձին հրովարտակաւ՝ Եփրեմը ստացաւ միջնորդուած շքանշանը։

Բայց այդ շքանշանը ստացուելուց առաջ Պասկեվիչը արդէն գրաւորապէս հրաւիրում էր Եփրեմին Էջմիածին՝ իր հետևեալ գրութեամբ։

ՃԷԳ.

«Երևանի և Նախիջևանի խանութիւնները,— գրում է կոմսը,—ընդմիշտ միանալով Ռուսիոյ հետ «Հայոց աշխարհ» անունով՝ Էջմիածնի վանքը մնում է ռուսաց կայսեր տիրապետութեան մէջ և այսուհետև ոչ միայն կը վայելէ կատարեալ անդորրութիւն և այդ երկրի մէջ՝ Պարսկաստանի հետ վերականգնեցրած հաշտութեան խաղաղութիւնը, այլև կը վայելէ ասաանին հովանաւորութիւն մեր տէրութեան կողմից, որ Հայոց եկեղեցին և ազգը միշտ ընդունած է իր բարձր հովանաւորութեան ներքոյ։

Ենթադրելով թէ այսպիսի բարեյաջող հանգամանքներում Ձերդ բարձր սրբազնութեան համար հաճելի կը լինի դտնուիլ այդ սուրբ մենաստանում Ձեր ստորագրեալ բարձրագոյն հոգևորականութեան մէջ և Ձեր հօտի շրջանում, որ ազատուած լինելով օտարազգիների բռնակալութիւնից, անհամբեր և ուրախ սպասում է Ձեզ, որ Ձեր ներկայութիւնը Էջմիածնում կը համա-

պատասխանել մեր տերութեան ներկայացուցիչներին և մատադրութիւններին յօգուտ Հայոց ազգի»։

«Վասն որոյ խնդրեմ յարգել ինձ տեղեկացնելով թէ՝ ճիշտ արդեօք կը բարեհաճիք կատարել այս Ձեզ համար, ի հարկէ, ցանկալի ուղեւորութիւնը, որպէսզի կարողանամ կարգադրել և նշանակել Ձեզ համար պատշաճաւոր դինուորական ուղեկիցներ*)»։

Այդ դրութեան հետևանքն այն եղաւ, որ Եփրեմը 1828 թ. յունիսի սկզբին Թիֆլիզին հրաժեշտ տալով՝ ճանապարհ ընկաւ դէպի Էջմիածին, ուր և հանդիսաւոր մուտք գործեց ամսի 15-ին։

Այսպէս ահա՝ Երմօլովի ժամանակուայ քաղաքականութեամբ կաթողիկոսութիւնից հրաժարեցրած Եփրեմը՝ վեց տարի իբրև սոսկ վարդապետ Հախբատում և փոքր ժամանակ էլ Թիֆլիզում ապրելուց յետոյ՝ Պասկեվիչի ժամանակուայ քաղաքականութեամբ՝ նորից կաթողիկոսացաւ և նորից ամենայն Հայոց հայրապետ հռչակուեցաւ։

ՃԺԴ.

Սակայն Եփրեմին կաթողիկոսացնելով՝ Պասկեվիչը չկարողացաւ Ներսիսի ազդեցութիւնը իսպառ ջլատել նրա և սինոդականների ու միաբանութեան վրայից։

Կաթողիկոսի վերադառնալուց յետոյ Ներսէսը, նախ քան Բեսարաբիա ուղևորուելը՝ վերակազմեց Էջմիածնի Սինոդը, անուանելով նրան «Սինոդական կառավարութիւն»։ Եւ անդամներ նշանակել տուեց՝ մեծ մասամբ, իրեն համակրող հոգևորականներին, որոնցից չորսը արքեպիսկոպոսներ էին և երկուսը վարդապետներ։

Վերջին երկուսից՝ Մատթէոսեան Յովսէփ վարդապետը՝ իր խելօքութեամբ, գործունէութեամբ և ճարպիկութեամբ խիստ աչքի էր ընկնում, - ուստի վանքում նրան «փոքրիկ Ներսէս» էին կոչում և Սինոդին ու միաբանութեանը դեկավարողը՝ իսկապէս այս վարդապետն էր, հարկաւ ըստ նախընթաց հրահանգների Ներսիսի, որին միանգամայն անձնատուր էր եղած Յովսէփ վարդապետը։

Հասկանալու համար թէ՝ «Սինոդական կառավարութիւնը» որ աստիճան ենթակայ էր Ներսիսի ազդեցութեանը՝ բաւական է յիշել, որ այդ կառավարութիւնը պարտաւորուած էր իր կատարած ամեն մի գործի մասին՝ անմիջապէս հաղորդել ի տեղեկութիւն Ներսիսին ի Քիշնեվ «ամենախոնարհ յայտարարութեամբ»։

Աւելորդ է ասել որ Եփրեմի կաթողիկոսական գահի վրայ նորից բարձրանալը ևս՝ անուանական մի բան էր։ Եւ ծերունի հայրապետը ինչպէս ցարդ, նոյնպէս և այսուհետև չէր կարող խուսափել, ի մեծ ցաւ Պասկեվիչին, Ներսիսի ներգործութիւնից, նրա ներշնչումից։

Գալով Վրաստանի իր առաջնորդական գործերին,—դրանց ևս Ներսէսը բարձի թողի չարաւ։

*) Акты, VII, եր. 253. № 208.

Այդ միջոցին Թիֆլիզում էր Սիմէոն Բզնունի անունով եպիսկոպոսը։ Ներսէսը նրան յանձնեց թեմի կառավարչութիւնը՝ օգնական տալով նրան Յարութիւն Ալամդարեանին, որին, կնոջը մահուան պատճառով,—Ներսէսը վարդապետ ձեռնադրեց։

Ալամդարեանին էր յանձնուած նաև Ներսիսեան ուսումնարանի կառավարութիւնը։

Նորընծայ վարդապետ Ալամդարեանը առհասարակ նոյն դերն էր խաղում Վրաստանի թեմում, ինչ դեր որ խաղում էր Յովսէփ վարդապետը «Սինոդական կառավարութեան» մէջ։

Թեմի և դպրոցի դրամական հաշիւների հաւաքման և մատակարարման նկատմամբ՝ Սիմէոն Բզնունունն և Ալամդարեանին օգնականներ էին նշանակուած Ներսիսի կողմից՝ նրա բարեկամ Գէորգ աղա Արծրունին և Յարութիւն աղա Շերմազանեանցը։

Այսպէս ահա թէ և Պասկեվիչը Ներսիսին Կովկասից հեռացրեց, բայց չկարողացաւ հեռացնել, չնչել նրա ազդեցութիւնը։

Եւ Ներսէսը Բեսարաբիայից, ըստ առաջնոյն, կառավարում էր ամբողջ Կովկասեան և Անդրկովկասեան հայութեան ազգային հոգևոր գործերը։

Այս դրութիւնը հպարտ Պասկեվիչի համար միանգամայն անտանելի էր։ Ուստի նա, չնայած իր բազմաթիւ և բազմատեսակ գործերին, ևս առաւել ռուս-տաճկական պատերազմին, որ արդէն սկսուած էր, դարձեալ ժամանակ էր գտնում Ներսիսի դէմ ամբաստանութիւններ գրելու անդադար*)։

Պատերազմական այս խառնակ և վտանգալից ժամանակում, երբ ամենքի ուշն ու միտքը պատերազմով էր զբաղուած՝ Պասկեվիչը մինիստրների առաջ Ներսիսին նկարագրում էր որպէս մի ազատամիտ անձի, որ գաղտնի դիտաւորութիւններ ունի, հայերից զօրք է ժողովում 25 տարի ծառայելու պայմանաւ և այդպիսով շրջապատում ու խառնակչութիւն է ձգում ժողովրդի մէջ**)։

ՃՀԵ.

Շարունակ լսելով Պասկեվիչի այս ամբաստանութիւնները՝ մինիստրները կասկածանքի մէջ ընկան որ մի գուցէ Ներսէսը, իրաւի, ձգտում է ապստամբութիւն յարուցանել տէրութեան դէմ, այն ևս այսպիսի խառնակ ժամանակ, երբ կառավարութիւնը պատերազմ է մղում տաճիկների դէմ։

Սակայն մի այսպիսի ծանր մեղադրանքի

*) Акты, VII, եր. 258,—№ 214.

*) Ընթերցողին յայտնի է, որ Պասկեվիչի թելադրութեամբ Լազարեանը խնդրում էր Ներսիսին 2000 զօրք ժողովել հայերից պարսիկներից գրաւած բերդերի պաշտպանութեան համար։ Ներսէս-պարսիկները գրաւած բերդերի պաշտպանութեան համար։ Ներսէսը Պասկեվիչի այդ առաջարկութիւնը անուշադիր թողեց այս անգամ. Բայց նա չվհատեցաւ։ Եւ աշխատում էր առանց Ներսիսի ազգ. Բայց նա չվհատեցաւ։ Եւ աշխատում էր առանց Ներսիսի ազգ. Ջակցութեանը զլուխ բերել։ Այս իմանալով՝ Ներսէսն էլ, իր հերթում, կարգադրել էր, որ էջմիածնական հայ գիւղացիներից զօրք հաւաքի Մայր Աթոռի պահպանութեան համար։ Տէրութիւնից օ-

համար՝ մինիստրներին հարկաւոր էին ծանրակշիռ և անհերքելի փաստեր, որոնք, սակայն, Պասկեվիչի անորոշ, մութ ամբաստանագրերում չէին երևում.

Վասն որոյ՝ իրողութիւնը ստուգելու համար՝ կոմս Դիբիչը յունիսի 6-ին հետևեալը գրեց Պասկեվիչին։

«Ձեր գրութիւններից թագաւոր կայսրը քանիցս անգամ բարեհաճեց նկատել, որ Ներսէս արքեպիսկոպոսի գործողութիւնները շատ անգամ հակառակ են լինում մեր տերութեան նպատակներին եւ օգտին, որին ապացոյց է այն բողոքը, որ սրանից առաջ մատուցել էին Ձեզ Հայոց կամաւոր զօրքի 25 հոգի զինուորները, որոց Ներսէսը ինքնակամ պարտաւորեցնում էր 25 տարի ծառայել Էջմիածնի վանքում և այդպիսով ղփոթ էր յարուցանում ժողովրդի մէջ։ Այս բոլորը տեղիք է տալիս եզրակացնելու թէ գուցէ Ներսէսը որևէ գաղտնի մտքեր և ձգտումներ ունի Ռուսաստանի հետ նոր միաւորուած երկիրների վերաբերութեամբ։ Վասն որոյ Նորին Մեծութիւնը կամենում է գիտենալ Ձեր

ընկակ վերցնելով՝ Ներսէսը ևս կարդաղրել էր, որ Մայր Աթոռը իր պահապան զօրքին ռռճիկ վճարէ։ Զինուորների ծառայութեան միջոցը՝ 25 տարի էր լինելու և այլն։

Այդ նպատակի համար արդէն 100-ի չափ զինուորներ վերցրած էր վանքը և զինավարժութեան մէջ կրթում էր նրանց։ Բայց Պասկեվիչը դրա առաջը ոչ միայն առաւ, այլև օգտուեցաւ դրանով իր ամբաստանագրերի մէջ։

Նրա գաղտնի թելադրութեամբ հայ զինուորները բողոքեցին Ներսիսի դէմ։ Եւ Պասկեվիչը խաբանեց գործը։

կարծիքը՝ արդեօք արդարացի՞ էք համարում դուք վերոգրեալ եզրակացութիւնը Ներսիսի վարքի մասին թէ ոչ*)»։

Պասկեվիչը հիմա միայն զգաց թէ որքան նա յափշտակուել է Ներսիսի դէմ ունեցած գրագրութիւնների մէջ։ Պնդել թէ նա,—Ներսէսը ապստամբ է և դաւաճան տէրութեանը,—պէտք էր ապացուցանել, իսկ այդպիսի ապացոյցներ Պասկեվիչը չունէր։ Մնում էր ոլոր մոլոր բացատրութիւններով ուրիշ ձև տալ գործին և ահա ի պատասխանի Դիբիչի վերոյիշեալ հարցմանը Պասկեվիչը յուլիսի 10-ին հետևեալ գրութիւնը ուղղեց նրան։

ՃՀԶ.

«Ներսէս արքեպիսկոպոսի վարքը և նրա գործերը ցայսօր չեն ցոյց տուել, որ նա ունեցած լինի մեր տէրութեան դէմ ինչպիսակար մտքեր և կամ որևէ գաղտնի դիտաւորութիւններ այն երկիրների վերաբերութեամբ. որ նոր են միացած Ռուսաստանի հետ։ Ընդհակառակը թէ Պարսից պատերազմի սկզբում և թէ կռուի ժամանակ Ներսէսը միշտ պատրաստակամութիւն է յայտնել ծառայելու յօգուտ մեր և անձնուիրութիւն է ցոյց տուել Ռուսիային»։

«Այս մասին կատարեալ իրաւունք տալով նրան, այնուամենայնիւ ես չեմ կարող չյիշել,

*) Акты, VII, եր. 253,—№ 209.

որ փառասիրությունը յափշտակում, անց է կացնում նրան իր կոչման և աստիճանի պարտաւորությունների սահմանից և թէ նա ոչ միայն հոգևոր, այլ և աշխարհական գործերում էլ կամենում է անսահման ինքնիշխանութեամբ գործել։

«Հայոց Ծայրագոյն Պատրիարք Եփրեմի խորին ծերութիւնը և հիւանդութիւնը Ներսիսին միջոց տուին ձեռք առնելու Հայոց եկեղեցու վարչութեան ղեկը։ Արդէն իմ ականջիս հասած էին մասնաւոր բողոքներ թէ նա անհաշիւ գործ է դնում եկեղեցական եկամուտները, բայց ես այդ մասին կանոնաւոր քննութիւն չկազմեցի, որովհետև ստացած տեղեկութիւններս պաշտօնական չէին»։

«Զբաւականանալով Հայոց եկեղեցու վրայ ունեցած ազդեցութեամբը՝ Ներսէս արքեպիսկոպոսը կամենում է տարածել այդ ազդեցութիւնը նաև աշխարհական գործերի վրայ, ձգտելով ներկայացնել իրան որպէս գլուխ և պետ ընդհանուր Հայոց ազգի։

Նրա փառասիրութիւնը այս մասին այնտեղը հասաւ, որ նա սկսեց ազդարարութիւններ հրատարակել արտասահմանի հայերին և յարաբերութիւններ սկսեց դրացի տաճիկ մեծաւորների հետ։ Թէև ես զգուշացրի նրան նախ բերանացի և ապա գրաւոր կերպով թէ՝ չգիտենալով իսկութեամբ տէրութեան քաղաքական նպատակները, այդպիսի յարաբերութիւններով

նա կարող է միայն խոչընդոտներ հանել այն նպատակների իրագործմանը, և Ներսէսը գրեց ինձ թէ նա այդպիսի բան երբէք չէ արած, բայց Կարսը վերառնելուց յետոյ՝ գտնուեցաւ նրա մէկ նամակը Մաղասբերդի Շերիֆ աղային գրած, որն որ Կարսի գաւառի նշանաւոր պաշտօնեաներից և կալուածատէրերից մինն է։ Այդ նամակը գրուած լինելով այն միջոցին, երբ արդէն պատերազմ էր յայտնուած օսմանցիներին, ապացուցանում է, որ Ներսէսը խոյս է տալիս կատարել իմ վճռական պահանջմունքս՝ չբանակցելու արտասահմանի վարչական անձինքների հետ, և այդպիսով ձգտում է ներկայացնել իրան իբր դրացի և կալուածատէր Արփաչայ գետի վրայ, որով որոշում է իր օգուտները տէրութեան ընդհանուր շահերից։ Թէ որ աստիճան ցանկանում է նա ազատ մնալ և ոչինչ կախումն չունենալ երկրիս բարձրագոյն իշխանութիւնից, մի լաւ ապացոյց էլ կարող է լինել և այն, որ նա առանց իմ գիտութեան և ուղղակի իր կողմից դիմել է օտարազգաւանների հոգևոր գործերի մինիստրութեանը և խնդրել է պարգև իր յառաջադրած մի քահանայի (Յարութիւն Ալամդարեանի) համար։ Բացի այդ՝ Ներսէս արքեպիսկոպոսը բազմիցս արտայայտած է ձգտումն շատացնել Էջմիածնի վանքի եկամուտները և կալուածները, թէև այդ լինի ի վնաս տէրութեան։ Այս մասին նրա ձգտումները յատնուեցան իսկոյն, երբոր Երևանը նուաճուեց և

այս տարբայ սկզբներում Երևանի մէջ լարուած դաւադրութիւնների պատճառներից մէկը՝ խօսք չկայ՝ այն է, որ Ներսէսը հէնց սկզբից տեսաւ իմ հոգացողութիւնը արքունի շահերը պաշտպանելու մասին, և լաւապէս հասկացաւ, որ ես խիստ կերպով կը դիմադրեմ նրա մտադրութիւններին՝ սեպհականացնելու Հայոց եկեղեցուն այնպիսի կալուածներ և եկամուտներ, որ իսկապէս նրան չեն պատկանում։ Մի փորձ էլ Ներսիսի այդպիսի ձգտումներին կատարուեցաւ այս տարի մայիս ամսին, երբ Կողբայ աղահանքերը կապալով էին տրվում։ Մինչև այդ ժամանակ ոչ մի պահանջմունք յայտնած չլինելով յիշեալ աղահանքի վերաբերութեամբ՝ նա յանկարծ յայտնեց, որ սրանից 1200 տարի առաջ, այն է՝ Քրիստոսի 629 թուականին յունաց Հերակլ կայսրը Կողբայ երրորդ մասը նուիրել է Էջմիածնի վանքին»*)

«Շատ կարելի է, որ Երևանեան աշխարհի միւս կալուածների և եկամուտների վերաբերութեամբ էլ կը ծագեն այդպիսի հին պահանջներ։ Վերջապէս ես չպիտի լռեմ նաև Ներսիսի մշտական հակամիտութեան մասին՝ գաղտնի դաւադրութիւններ լարելու (ինչ դաւադրութիւն և ում դէմ՝ Պասկեվիչը չի բացատրում)։ Այդ ընդհանրապէս առաջ է գալիս նրա փառասիրու-

*) Կողբայ աղահանքից Էջմիածնին հասանելի բաժնի վէճը՝ հաղիւ վերջացաւ Գէորգ Դ-ի ժամանակ, երբ սենատոր Կուշինը (փոխարքայի օգնականը) կաթողիկոսի պահանջը օրինաւոր գտնելով՝ բաւարարեց նրան։

թիւնից և յօգուտ Հայոց եկեղեցու ունեցած միակողմանի ձգտումներից, որոնց միքանի օրինակը յայտնի են նմանապէս Ձերդ պայծառափայլութեան»։

«Ընդ ամին կցորդում եմ տեղեկութիւններ Ներսիսի առաջեայ վարուց մասին*), որոնք պարզում են այս հոգևորականի բնութիւնը և յատկութիւնները, թէև ես չեմ կարող բոլորովին երաշխաւորել թէ այդ տեղեկութիւնները ճիշտ են»։

«Այսպէս ահա բացատրելով իմ կարծիքս Ներսէս արքեպիսկոպոսի մասին՝ ես ճշմարտութիւնից դրդուած պարտք եմ համարում վճռական կերպով կրկնել, որ թէև նրա կողմից տէրութեան դէմ որևէ ֆիզիկական ձեռնարկութիւն սպասել կարելի չէ, բայց միևնոյն ժամանակ, որքան ինձ յայտնի են նրա յատկութիւնները, պատիւ ունիմ ներկայացնել Ձեր բարեհայեցողութեանը՝ թէ ինչ հետևանքներ կարող են առաջ գալ, եթէ Ներսիսի փառասիրութիւնը և նրա անտեղի կողմնապահութիւնը Հայոց գործերում նեցուկ կամ պաշտպանութիւն գտնեն այս ազգի (Հայոց) միւս նշանաւոր անձինքների խորամանկութիւնների մէջ,—մի ազգի, որի հաստատապէս ձգտումն է եղել և է՝ որքան կարելի է խոյս տալ մեր օրէնքի ազդեցութիւնից և ներգործութիւնից։ Եւ ինչ դրութեան մէջ կը

*) Այդ տեղեկութիւնները մենք արդէն դուրս բերինք նախնեաց գլուխներից մէկում ամբողջովին։

լինի այստեղի գլխաւոր վարչութիւնը, որ պիտի ստիպւի անդադար դիմադրել բոլոր այն խորամանկութիւններին և նենգութիւններին, որոց միակ նպատակն է՝ դարձնել այդ ազգը, որի բոլոր բարօրութիւնը կախուած է Ռուսիոյ զօրութիւնից և հովանաւորութիւնից, դարձնել, ասում եմ, այդ ազգը առանձին արտօնութիւնների տէր մի դասակարգ, որ ամեն կերպ օգուտ լինի քաղում մեր վարչութիւնից, բայց միևնոյն ժամանակ չլինի կամենում ստորադրւել ոչ Ռուսիոյ ընդհանուր կանոնադրութիւններին, ոչ էլ այն պարտաւորութիւններին, որ կատարում են Նորին Կայսերական Մեծութեան միւս հպատակները»*)։

ՃՀԷ.

Պասկեվիչի այս գրութիւնում Ներսիսին վերագրւած կարծեցեալ յանցանքների մէջ ուշադրութեան արժանի Ներսիսի այն նամակն է, որ Կարսի մէջ գտնւած է և որի վրայ է գլխաւորապէս յենվում Պասկեվիչը։

Ահա այդ նամակը գրւած Շերիֆ աղա անունով մի տաճիկ կալւածատիրոջ՝ «Բարեկամական ողջոյնս մատուցանելուց յետոյ՝ հաղորդում եմ ձեզ, որ թէև մենք մինչև այսօր ձեզ հետ բարեկամական հաղորդակցութիւն չենք ունեցել և ես լսել եմ որ դուք թշնամութեամբ

*) Акты, VII, էր. 254,—№211.

էք վերաբերվում ամենքին, որոնք հպատակվում են ռուսաց տէրութեանը, բայց այժմ ձեզ մօտիկ դրացի դառնալով որովհետև գետի մի կողմը ես եմ գտնվում, իսկ միւս կողմը դուք—վասն որոյ որքան որ մեծ լինի ինձաս՝ դարձեալ պէտք է պահպանել դրացիութեան պարտաւորութիւնները։ Այդ պատճառով ես հարկաւոր համարեցի գրել ձեզ, որ Մաստարա գիւղի բնակիչները, որոնք Էջմիածնի գիւղին են պատկանում, երկու մեծ տէրութիւնների մէջ բացւած պատերազմի պատճառով իրանց բոլոր ունեցած հացը՝ ցորենը և գարին տարել են Ղօշայ վանքը, իսկ հիմա լսում եմ թէ փաշան այդ հացը նւիրել է Ջաֆար խանին։ Եթէ որ այդ ճշմարիտ է, այն ժամանակ խնդրեմ աշխատել յետ առնել այդ հացը և յետ տալ վանքապատկան բնակիչներին ըստ պատկանելոյն. իսկ եթէ այդ անկարելի կը լինի, տալ նրանց գարնան ցանքի համար գոնէ հարիւր սօմար, Կարսի սօմարի չափով, գարի կամ թէ բրինձ պատշաճաւոր գնով, ու եթէ կըկամենաք՝ տացէք ինձանից դրա արժէքը դրամով։ Այսպէս թէ այնպէս՝ պատերազմ կը լինի թէ խաղաղութիւն, յամենայն դէպս՝ մեր ձեզ հետ դրացի լինելու պատճառով՝ այդ ձեզ համար օգտաւէտ կը լինի, մանաւանդ եթէ ցանքը լինի Մաստարա գիւղում»*)։

Նամակի բովանդակութիւնը՝ առանց որևէ բացատրութեան՝ պարզապէս արդարացնում է

*) Акты, VII, էր. 256.

Ներսիսի վարմունքը։ Նա պարտաւոր էր մի ամբողջ և մեծ հայաբնակ գիւղ սովի չմատնելու համար՝ հարեան տաճիկ կալուածատիրոջը այն առաջարկութիւնն անել, ինչ որ արդէն արել է։ Սա Ներսիսի հովուապետական ամենասուրբ պարտականութիւնն էր։

Եւ միմիայն Պասկեվիչի նման նեղսիրտ, ըծախնդիր բիւրոկրատները կարող են քաղաքական նշանակութիւն տալ այսպիսի անմեղ թղթերին։

Գալով Պասկեվիչի այն խօսքերին թէ՝ «շատ կարելի է, որ Երևանեան աշխարհի միւս կալուածների և եկամուտների վերաբերութեամբ էլ այդպիսի հին վէճեր կը ծագեն»,—միանգամայն անհիմն են և զրպարտութիւն Ներսիսի հասցէին։

Եթէ Պասկեվիչին յայտնի չէին թէ ինչպիսի և որքան կալուածներ ունի Էջմիածինը՝ Ներսիսին հօ լաւ յայտնի էին։ Ուրեմն նա կատարեալ իրաւունք ունէր հետամուտ լինել և պահանջել, որ հատատուն վաւերաթղթերով գնուած, Շահերի ֆիրմաններով ընծայուած կալուածները,—գիւղեր, այգիներ, վարելահողեր,—որոնք Մայր Աթոռի անվիճելի սեպհականութիւնն էին մահմեդական իշխանութեան տիրապետութեան ժամանակ,—այժմ՝ քրիստոնեայ իշխանութեան տիրապետութեան ժամանակ Մայր Աթոռից չհեռացնէին, չխլէին, ինչպէս որ, դժբաղդաբար,

եղաւ ի շնորհս Պասկեվիչի անձնական թշնամութեանը Ներսիսի հետ։

Բաւական է մի անգամ աչքից անցկացնել երջանկայիշատակ Սիմէօն կաթողիկոսի «Զամբռ» անունով գիրքը և տեսնել թէ որքան կալուածներ ունէր Էջմիածինը նախ քան ռուս-պարսկական և ռուս-տաճկական պատերազմները և այդ պատերազմներից յետոյ, այժմ։

Էլի շնորհակալութիւն Եփրեմ կաթողիկոսին, որի ուռանձին թախանձանքին զիջանելով՝ Նիկողայոս Ա. կայսրը՝ հաճեցաւ ժամանակաւորապէս վանքի տիրապետութեան տակ թողնել զէթ այն հինգ գիւղերը*), որոցմով համայն հայութեան Մայր Աթոռը մի կերպ պահպանում է իր խըղճուկ գոյութիւնը։

Բայց մենք մեր քաղաքներին դառնանք։

ՃՀԸ.

Վերևում ասել ենք, որ Ներսիսի ազդեցութիւնը՝ նոյնիսկ հեռաւոր Բեսարաբիայից՝ շատ մեծ էր Էջմիածնեցոց և Եփրեմ կաթողիկոսի վրայ։

Վերջինս միշտ այն կարծիքի էր, որ կառավարութիւնը Ներսիսին Բեսարաբիա է ուղարկել ժամանակաւորապէս և յատկապէս այնտեղի ազգային գործերը կարգաւորելու համար իբր։

Բայց ամիսներ անցան և Ներսէսը չվերա-

*) Акты, VIII, եր. 290 № 217.

դարձաւ։ Ուստի հոկտեմբերի 18 թուակիր մի ընդարձակ նամակ գրեց Էջմիածնից Եփրեմը՝ Նիկողայոս կայսեր։

Նամակի (որոյ խմբագրութեան մէջ, մեր կարծիքով, Ներսիսի մասը կայ) վերջին մասը վերաբերում է Աշտարակեցուն։

Արտագրում ենք այստեղ այդ մասը՝ «Ընկալ, ինքնակալ թագաւոր, զնախագահ Աթոռն Էջմիածին, զՍրբազնասուրբ Սինոդոսն Հայոց և զամենայն եկեղեցիս՝ որք ընդ նոքօք և զմիլիոնաւոր ազգս Հայոց ի Քոյ հովանի հեզամբոյր. պաշտպանեա նոցա, հանդէ և պատսպարեա յամենայն զրպարտութեանց*), որք ցայսօր ժամակի վշտադնեն զնոսա։ Ընդ սոսա՝ բարեհաճեաց ընդունել ի գութ Ամենաողորմ աէրութեան Քոյ և զգերարժան Յաջորդն իմ զբարձրապատիւ սրբազան Ներսէս արքեպիսկոպոսն։ Յօրէ յանձն առնելոյն իմ զայս ասպիճան իմ, այս ՀԵԾԱՆՈՒՆ հովիւ եկեղեցու անկաղար վաստակի անօրինակ ջերմ եռանդութեամբ յոգուս Աստուծոյ, արքազնասուրբ Սինոդոսին և համօրէն ազգիս։ Մանաւանդ ի ժամանակս եօթն ամեայ տարագրութեան իմոյ և հալածանաց ի Պարսից՝ դա (Ներսէսը) միայն ընկալաւ զիս, սփոփեաց և սրբեաց զարտասս իմ և զարամադին աւուրս ծերութեան իմոյ պէսպիսացոյց կատարեալ սրդիական մտերմութեամբ։ Քահանայապետիդ այդմիկ

*) Ակնարկութիւն Պասկեվիչի և նրա ամբաստանագրութիւնների մասին։

(Ներսիսին) յանձն է ընդունել զիս պատկեր իմ, արքազնասուրբ Արարատեան Սինոդոսի և բովանդակ ազգիս Հայոց առ պատուանդանաւ Աստուածապարգև Աթոռոյ Քոյ։ Հայեաց, Աստուածընտիր թագաւոր, ի պաղատանս նորա աչօք ողորմութեան Քոյ և բարեհաճեաց ուրախամիտ դարձուցանել զնա, զի նախ քան զվախճան կենաց իմոց յանձն արարից ի դա զիրվին զդեակ (ղեկ) պատրիարքական կառավարութեան։ Առ ցաւագին ծերութեանս և զդայարանաց տկարութեան որ զայրացեալն է այժմ և զայրանայ օր քան զօր, ցանկալի վաղագոյն զտանել զնա առս, զի փոխանորդեալ զտեղի իմ, շարունակեսցէ ըստ Աստուածաձիր կարողութեանն բարեգոյն օրինակաւ զկառավարութիւն տանս այսօրիկ՝ հանդերձ հաւատարիմ հպատակութեանն արժանաւոր ծառայութեամբ առ թագաւորութիւն Ձեր*)։

ՃԷԹ.

Իր այս նամակով, մանաւորապէս նրանում մեր ընդգծած նախադասութիւններով, Եփրեմը կատարեալ արջի ծառայութիւն արաւ Ներսիսին։ —Սրա այն յատկութիւնները՝ որոց պատճառաւ ևեթ Պասկեվիչը քշել տուեց նրան Կովկասից, Էջմիածնից, — այժմ նոյն պատճառներով խեղճ Եփրեմը, միամտաբար, կամենում էր նրան յետ

*) Акты, VII, եր. 256, № 213.

բերել տալ և իրան «պատկեր» կամ յաջորդ կարգել։

Բնական է, որ Պետերբուրգում այդ նամակին չէին կարող նշանակութիւն տալ և նրանում Ներսիսի, կամ նրա կուսակիցների մասը տեսնելով՝ էլ աւելի կասկածանքով կը սկսէին վերաբերուել դէպի նա—Ներսէսը։

Երկու ամիս անցաւ և դեռ ոչ մի պատասխան չստացաւ Եփրեմը։

Ուստի նոյն 1828 թուականին դեկտեմբերի 20-ին մի ընդարձակ նամակ էլ Պատկերիչին ուղղեց իբրև «կտակօրէն աղերսագրութիւն», որի մէջ գովելով նոյնպէս Ներսիսի արժանիքները՝ աւելացնում է «վասն որոյ ամենախոնարհաբար խնդրեմ ի Ձերդ Պայծառափայլութենէ գթալով բազմամեայ ծերունւոյս՝ զխնամողական իմոյ՝ մատուցելոյ Նորին կայսերական մեծութեան, արժանի արասցես զիս մարգարէական երանութեանն ոչ զկնի վախճանի իմոյ, այլ այժմ ի կենդանութեան իմում, զի թէ բարեհաճեալ կարդիկոսական շրով և գրամատեօք փուրացուցեալ առ իս զնորին բարձր սրբազնութիւնն (զՆերսէսն)՝ ես ինքնին ձեռամբ իմով ամենայն յօժարութեամբ ունիմ ըստ սովորութեան եկեղեցւոյն մերոյ օծանել զՆերսէս արքեպիսկոպոսն Ծայրագոյն Պատրիարք ամենայն Հայոց, և յանձնելով նմա զամենայն պաշտօն և անտեսութիւն կաթողիկոսութեան իմոյ նմա՝ զմնացեալ կեանս իմ միամտութեամբ պարապեցուցիչ յաղօթս և

ի գեանամած երկրպագութիւնս առաջի սրբացեալ տաճարիս ամենազօր Թագաւորին տիեզերաց, զի անպարտելի արասցէ զսուրբ կայսերութիւն Նիկոլայ Պավլովիչի կայսերն համայն Ռուսաց և թագաւորին մեր Հայոց. ընդ նմին և Ձերդ Պայծառափայլութեան, և համայն կուսակալաց, զօրապետաց և զօրաց Նորին Կայսերական Մեծութեան*)»։

ՃԶ.

Եփրեմը կայսրին ուղղած խնդիրը՝ Պատկերիչից ծածուկ էր ուղարկել։

Վերջինս յիշեալ խնդրի գոյութիւնը միմիայն Եփրեմի այս, իրան ուղղած գրութիւնից իմանալով՝ նոյեմբերի 16-ին, Պետերբուրգ մի շատ ընդարձակ նամակ գրեց**), որի մէջ նկարագրելով Ներսիսի, իբրև խռովարար և տէրութեան համար վտանգաւոր մարդու, ի միջի այլոց, խնդրում էր. ա) Ներսէս արքեպիսկոպոսին պահել Բեսարաբիայում և ամեն կերպ արգելել նրան Վրաստան վերադառնալու, բ) ընաւ չթոյլ տալ Ներսէս արքեպիսկոպոսին ամենայն Հայոց կաթողիկոս դառնալու։ գ) Հմտոգել Եփրեմ կաթողիկոսին, որ նա գոնէ վեր ի վերոյ և Սինոդի օգնութեամբ՝ զեկավարէ Հայոց հոգևոր գործերի գլխաւոր վարչութիւնը։ դ) Յովսէփ վարդապետին (Ներսիսի մաներմին) բոլորովին հեռաց-

*) Акты, VII, եր. 265.
**) Նոյնը, եր. 264, № 219.

նել որպէս Սիւնեաց անդամակցութիւնից, նոյնպէս և վանքի գործերից։ Ե) Ալամդարեան Յարութիւն վարդապետին հեռացնել նոյնպէս Վրաստանի թեմի կառավարութիւնից, իսկ այս վիճակի վարչութիւնը յանձնել մի աւելի յարգելի, թէ ըստ աւագութեան և թէ ըստ յատկութիւնների, եպիսկոպոսի, որին կընտրէ Սիւնեաց և կը հաստատէ Ծայրագոյն Պատրիարքը։ Եւ զ) Թոյլ տալ Սիւնեաց քննել Ներսէս արքեպիսկոպոսի հաշիւները՝ թէ նրա կաթողիկոսական պաշտօն վարած ժամանակի և թէ Վրաստանի վիճակաւորութեան։

ՃՁԱ.

Ի հետևումն Պասկեվիչի այս առաջարկութիւններին՝ 1829 թուականի մարտի 12-ին հետևեալ հրովարտակն ստացուեց յանուն Եփրեմի։

«Ընկալաք մեք առանձին հաճութեամբ նորոգ ի նամակի ձերում ի 18-ն հոկտեմբերի անցեալ ամի գրեալ, զարտայայտումն զգացողութեանց ձերոց յարարերելոց առ տէրութիւնն ռուսաց և զկերմեռանդութիւն ձեր առ Մեզ։ Ո՛չ երկրայիմք զմտերմութենէ և զանփոփոխութենէ այսոսիկ զգացողութեանց, և մեզ ախորժելի է ի սմին պատահման նոյնպէս երկրորդել զցուցումն մերս հաստատուն բարեյօժարութեան առ ձեզ։ Յաւիմք ընդ խանդարումն առողջութեան ձերոյ, բայց և այնպէս հաւատի մեք մեք, թէ նա և ընդ բեռամբ ամաց և ցաւադարութեան դուք ոչ դադարիք ըստ թելադրութեան պարտաւորութեան ձերոյ և սիրոյ առ հայրենակիցս անխոնջ ներգործութեամբ պարապիլ ի կառավարութիւն և ի բարեկարգութիւն եկեղեցւոյ որում կացուցեալ էք դուք գլուխ։ Վիճակ նորին պահանջէ զամենայն մտադրութիւն ձեր և մեք հաստատապէս յուսամք թէ՝ Ամենաբարձրեալն օրհնելով զվաստակս ձեր և զջանս՝ պահպանեսցէ զաւուրս ձեր յօգուտ ձեզ հաւատացեալ հոգևոր հօտին, և ի գործակցութիւն Մերոց հոգացողութեանց վասն բարւոյ ազգին Հայոց համօրէն, և թէ այլ ևս յերկար ոչ հարկաւորեսցի խորհել վասն ընտրութեան յաջորդին ձերոյ։ Ի ձեռնարկել առ այնչափ վսեմական գործ՝ ցանկալի եղև զի վերականգնեսցի կատարեալ անդորրութիւնն ի նահանգս սահմանաց կայսերութեան մերոյ՝ լցեալս ըստ մասին ի Հայոց։ և զի բոլոր վաղեմի արմատական օրինադրութիւնքն եկեղեցւոյն ձերոյ անձին ի կատարեալն յայտնութիւն և ի պարզութիւն»։

«Ներսէս արքեպիսկոպոսն ըստ առանձին յանձնարարութեացն՝ աւելոց ինքեան պարտի տակաւին մնալ ի նահանգն Բեսարաբիոյ։ Մեք յուսամք թէ՝ նա արդարացուսցէ զմերս վարկ՝ զգուշաւոր լրացուցմամբ նոյն յանձնարարութեանց*)»։

Այսպէս ահա մերժուեցաւ Եփրեմ կաթողիկոսի «աղերսագրութիւնը», այնպիսի բառերով

*) Акты, VII, եր. 270.

և դարձուածներով, որոնք, ըստ ս. Գրոց, «կակուղ էին քան զձէթ, և ինքեանք որպէս պաք»։

ՃՁԲ.

Եւ որպէսզի նորանոր գրագրութիւններ տեղի չունենան, նորանոր գլխացաւանք չպատճառուի՝ քիչ ժամանակից յետոյ՝ Յովհաննէս եպիսկոպոս Կարբեցին նշանակեցաւ Վրաստանի Առաջնորդ, իսկ Սերոբ վարդապետը (ձեռաց եպիսկոպոսացնել տալուց յետոյ) նշանակեցաւ առաջնորդ Աժդարխանի վիճակի վրայ։

Եւ տէրութեան այս կարգադրութիւնները հաղորդուեցան յանթերի կատարումն։

Ծերունի կաթողիկոսը՝ սոխլուած եղաւ լուռ ու մունջ ի կատար ածել այս կարգադրութիւնը, ուստի և հետեւալ կոնդակը ուեց յանուն Ներսիսի, մայիսի 27-ին 1830 ամի։

«Քրիստոսի ծառայ Եփրեմ կաթողիկոս ամենայն Հայոց և Ծայրագոյն Պատրիարք առաքելական եկեղեցւոյ Քրիստոսի, նա և Արարատեան Մայր Աթոռոյ կաթուղիկէ Էջմիածնի։ Ողջոյն տամք սիրով գերապատիւ բարձր սրբազան Ներսէս արքեպիսկոպոսի և առաջեալ ամենասիրելւոյ մերում, խնդալ միշտ ի Քրիստոս։

«Գլխաւոր կառավարութիւնն հոգևորական գործոց այլասեռ դաւանութեանց յշ-ն ամսեանն ապրիլի գրելով առ մեզ զանդրադարձն գրութեան մերոյ առ ինքն ի 23 նոյեմբերի ամին անցելոյ յայտնեալ էր զԲարձրագոյն կամս Նորին

Կայսերական Մեծութեանն շուրջ զկարգաւորութեամբ կողմանցդ վիճակաց, զորոյ զթարգմանութեան օրինակն առաքելով ընդ այսմ ի տեսութիւն ձեր՝ հանդերձ առաջնորդական կոնդակաւ յանուն ձեր, և օրինակօք թարգմանութեանն թղթոյ պայծառափայլ կուսակալի կողմացս առ մեզ, և պատասխանեաց մերոց առ նա և առ մինիստրն հոգևորական գործոց, զայս գրեմ ամենապրելւոյդ իմոյ համառօտաբար առ ժամս, ապաքէն վճիռ անյեղլի է՝ թէ հարկ լուծանէ զօրէնս՝ և եթէ զօրէնս լուծանէ՝ չեն ինչ զարմանք՝ թէ երբեմն փոխեսցէ և զառաջադրութիւնս։ Սիրաք թագաւորաց ի ձեռին Աստուծոյ են. գրեալ է, և բարձրագոյն կամք տիեզերակալ թագաւորի և կայսեր՝ իսկաքանչ պատկերի նորին էր՝ որ առաջի եդաւ մեզ, և մեզ անշուշտ պարտաւորութիւն էր և հարկ անկեղծ բարեմտութեամբ, վասն որոյ այսպէս ուրեմն հանդերձեալ առաքեցաք զկոնդակդ, ընտրեցաք զկանդիտատս վասն վիճակացն Վրաստանի և Աստրախանայ, և զՍերոբ վարդապետն ի 22 ամսոյս ձեռնադրեցաք եպիսկոպոս՝ համաձայնութեամբ սրբազան Սինոդին, զապագայն անօրինութեանցս յանձն արարեալ գլխովին ի խնամս տնօրինութեան Աստուծային ամենարարի կամաց։ Համարիմ թէ ձեզ ևս հասեալ են արդէն տեղեկութիւն այսպիսի կամաց Նորին Կայսերական Մեծութեանն*)»։

*) Պատմ. կաթող. Էջմ. եր. 215.

Այսպէս ահա Պասկեվիչը յաջողեցաւ Ներսիսի թեւերը կարատել Թիֆլիզում և Էջմիածնում՝ նրա ունեցած ազենտներին, նրա մտերիմներին գործերից հեռացնելով և նրանց այնպիսի մարդիկներով փոխարինելով, որոնք ի սրտէ աւում էին Ներսիսին։

Բացի դրանից՝ Պասկեվիչը Ներսիսի Վրաստանում կատարած առաջնորդական գործերի, մասնաւորապէս դրամական գործերի, վրայ քննութիւն նշանակեց՝ վերջնականապէս Աշտարակեցուն անուանարկելու, մրոտելու միակ նպատակաւ։

Եւ այսպէս ամէն կողմից իրան ազատ զըգալով՝ այնուհետև ձեռնարկեց Հայոց եկեղեցու բարեկարգութեան մասին հոգալ,—այդ եկեղեցւոյ համար կանոնադրութիւն մշակել տալով...։

Բայց մենք, ընթերցող, առ ժամանակ թողնենք պայծառափայլ կոմսին իր այդ օրէնսդրական զբաղմունքներովը պարապելու և փոքր ինչ ծանօթանանք նրա այն նախընթաց գործունէութեանը հետ, որ նա ցոյց տուեց ռուս-տաճկական պատերազմի ժամանակ, պատերազմ, որի հետևանքը եղաւ հայի հայրենիքի նոր ի նորոյ աւերումն և հայ ժողովրդի նոր ի նորոյ գաղթումն ու վայրավատումը։

ՃԶԳ.

Օսմանեան կառավարութիւնը շատ վաղուց ի վեր սկսել էր կասկածանքով դիտել ռուսների

շարժումները, որ հայերի միջոցով նրանք անում էին Ասիայում։ Բարձրագոյն Դուռը վաղուց ի վեր նկատում էր, որ Ռուսիան ոչ մի սուրբ ձեռքից բաց չի թողնում, և նոյն իսկ իրեն ստիպներ է ստեղծում, Հայոց գործերի մէջ խառնուելու։

Օսմանցիներին տարօրինակ էին թվում Մեծն Պետրոսի Ղարաբաղի Հայոց Մելիքներին խոստացած ազատութիւնը, կատարինէ Մեծի ժամանակ Խրիմի և Բեսարաբիայի հայերին դէպի միջին Ռուսաստան գաղթեցնելը, Պօղոս կայսեր ժամանակ Պոլսոյ ռուսաց դեսպանի միջամտութիւնը՝ Էջմիածնից այնտեղ եկող կաթողիկոսական նուիրակներին յարգանք և պաշտպանութիւն ցոյց տալու նկատմամբ։ Ապա ռուսաց բացարձակ միջամտութիւնը Յովսէփ Արղութեանի, Դաւթի և Դանիէլի ընտրութիւններին։

Վերջապէս և այն հանգամանքը, որ Ռուսիան Եփրեմին ինքը հաստատեց՝ բացարձակ ոտի տակ տալով փադիշահի դարերով վայելած իրաւունքը կաթողիկոսին ֆերմանով հաստատելու։ Ռուսիան և ոչ իսկ հարկ համարեց այս անգամ փադիշահի ֆերմանի մասին՝ խօսք անգամ յարուցանել։

Այս պատճառով էլ Բարձրագոյն Դուռը Եփրեմի կաթողիկոսութիւնը չճանաչեց և Տաճկահայերը ստիպուած եղան ամենայն Հայոց կաթողիկոսի անուան յիշատակութիւնը դադարեց-

նել իրանց եկեղեցիներում։ Իսկ Էջմիածնից եկած կաթողիկոսական նվիրակներին հրաժարվում էին ընդունելուց և կառավարության երկիրղի և սպառնալիքի ազդեցության տակ նրանց արտաքսում էին։ Գալով քաղաքական վերջին անցքերին, Սուլթանը տեսաւ, որ Ռուսիան քրիստոնեության պատրուակով՝ զէնք վերցրեց Էջմիածինը պարսիկներից ազատելու համար, սեպհականացրեց իրան Արարատեան աշխարհը, և Ռուսիայի այդ յառաջխաղացութիւնների մէջ շատ գործօն դեր խաղացին իրանք հայերը, որոնք նոյնիսկ կանոնաւոր կերպով, իրանց միջից զօրքեր ժողովելով՝ ռուս զօրապետների տրամադրության տակն էին դրել նրանց։

ՃԶԴ.

Վերջին հանգամանքը՝ այսինքն հայերի զօրաժողով լինելը և ռուսական բանակի հետ պարսիկների դէմ կռիվը՝ Պօլսում այնպէս էին մեկնում, թէ արևելեան հայերը՝ մտադրություն ունեն ռուսաց հովանաւորության ներքոյ մի անկախ թագաւորություն հիմնելու։ Եւ դրա համար զինակից և առաջնորդ են հանդիսացել ռուսական բանակներին։ Թէ պարսկա-հայաստանը տիրելուց յետոյ, նրանք ռուսներին առաջնորդելու են նաև տաճիկների վրայ՝ նրանց իշխանության ներքոյ գտնուած հայաբնակ վայրերը ևս ի բաց կորզելու։

Այս լուրը այն աստիճան արծարծուած էր

Պօլսում, որ նոյնիսկ ասիթ տուեց տեղւոյն կաթոլիկ հայերին՝ մի զգուշի վատութիւն գործել զէպի իրանց համազգի եղբայրները։

Բանը նրանումն է, որ Պօլսոյ հայերից ոմանք, որոնք այդ միջոցին ձգտում էին հայոց պատրիարքի իրաւասութիւնից դուրս գալով՝ իրանց համար առանձին պատրիարք ունենալ, օգուտ քաղելով վերոյիշեալ լրից՝ Սուլթանին աղերսագիր մատուցին*), որտեղ ասում էին. «յայտնի է մեծագոր տէրութեան ձերում, ով թագաւոր, զի անցեալ ամի արևելեան հայք, որք պարսից բաժնին էին, միացեալ ընդ Մոսկովայ (Ռուսաց) ազատամարտեցան ի տէրութենէն պարսից և ոչ սակաւ ինչս հասուցին պարսից տէրութեան։ Արդ՝ խորհուրդ խորհեալ են արևելեան հայք եւ ի սահմանս օսմանեան տէրութեան և կոխան առնել զքաղաքս և գիւղս, առնուլ և գրաւել և կանգնել ինքեանց զմասնաւոր թագաւորութիւն իմն ի Հայաստան աշխարհին ընդ հովանաւորութեամբ ռուսաց տէրութեան»։

«Արդ՝ զայս խորհուրդ խորհեալ են հայք, եւ ունին թշնամութիւն զտէրութիւնդ ձերմէ, և մենք, այսինքն հռոմէական հայք, մի ազգ լինելով ընդ հայոց և միոյ պատրիարքէ և գլխոյ կառավարեալ զոլով, յայնժամ ընդ նոսին միաբան և միախորհուրդ երևելոց եմք առաջի ձերումդ մեծափառ թագաւորութեան, և մերս հա-

*) Պերպերեան պատմ. Հայոց եր. 190.

բազատութիւն և հաւատարմաբար ծառայութիւն ոչինչ երևելոց է և չէ յայտնելոց ձեզ։ Ուստի խնդրեմք այժմ ի բարերար տեառնէդ զատուցանել զմեզ ի հայոց և տալ մեզ յատուկ պատրիարք և եկեղեցի, զի մի միաբան երևեցիմք նոցա և հաղորդ չարախորհուրդ անհաւատարմութեան նոցա»։

Սուլթան Մահմուդը ստանալով այս թուղթը՝ հրամայեց քննութիւն նշանակել։ Քննութիւնից երևեցաւ, որ ազերսագիր տուողների գրածները զրպարտութիւն են միանգամայն։ Ուստի և սաստիկ պատժի ենթարկուեցան ստորագրողները իրանց կուսակիցներով, որոնք գործում էին Հռոմի ազենտների թելադրութեամբ։

Ի վերայ այսր ամենայնի Օսմանեան կառավարութիւնը հարկ համարեց Պոլսոյ հայոց պատրիարքից պահանջել, որ սա հայոց հաւատարմութեան մասին երաշխաւոր լինի։ Եւ պատրիարքը երաշխաւոր եղաւ։

Անհաւատիկ հէնց այդ օրերին էր (1828 թ.), որ ռուս-տաճկական պատերազմ սկսուեցաւ։ Եւ Պասկեվիչը յունիսի 14-ին Գիւմրի մօտով (որ այժմեան Աղէքսանդրապոլի տեղումը մի գիւղ էր) իր մեծ բանակով սահմանն անցաւ, ինչպէս իր տեղումը յիշել ենք։

ՃԶԵ.

Կարսի, Բայազէթի և Ախալցխայի փաշայու-

թիւնների, որոց մէջ սկսուեցան Պասկեվիչի արշաւանքները, բնակիչների մեծագոյն մասը հայերն էին կազմում։ Այսպէս, Բայազէթի փաշայութեան մէջ՝ պատերազմից առաջ՝ 3200 տուն հայ կար և միմիայն 550 տուն մահմէդական։ Կարս քաղաքում 2500 տուն հայեր էին ապրում և միմիայն 360 տուն տաճիկ։ Իսկ նրա շրջակայքում տարածվում էին 248 գիւղեր, որոց հայ և տաճիկ բնակիչները թիւով հաւասար էին, այն է՝ 1850-ական տուն։ Գրեթէ նոյնը և Ախալցխայի փաշայութեան մէջ։

Գիւմրի գիւղի մօտով սահմանն անցնելով Պասկեվիչը իր բանակը Կարսի բերդի վրայ շարժեց յատկապէս հայ գիւղերով, նրանցից օգտուելու միակ նպատակով ի հարկէ։

Բայց նրա յոյսը ի դերև ելաւ։ Որովհետև ինչպէս երկու տարի առաջ պարսիկներն էին արել, այժմ էլ նոյն բանն արին և տաճիկները։ Սրանք խլելով հայերի ձեռից բոլոր զենքերը, նոյն իսկ կացիններ, բահերն ու դանակները՝ բոլոր գիւղացիներին խլեցին տարան Բասենի կողմերը։

Այնպէս որ սպասած համակրութեան և օգնութեան փոխարէն ռուս բանակը՝ Տաճկաստան մտած օրից ի վեր հանդիպեցաւ հայկական գիւղերի աւերակներին։ Եւ Պասկեվիչը գրեց կայսեր՝ «Այս երկիրը լիքն էր հայ ազգաբնակութեամբ, իսկ այժմ կատարեալ անապատ է դար-

ձեղ, որովհետև տաճկաց տէրութիւնը բնակիչներին քշել է հեռաւոր տեղեր*)»։

Զայրացած, որ այս անգամ ևս չկարողացաւ ինչպէս հայ ժողովրդից, նոյնպէս և հայ հոգևորականութիւնից օգուտ, Պասկեվիչը մի այլ գրութեան մէջ սկսեց զրպարտել հայերին, գրելով թէ՝ «հայերը իրան ճիշտ տեղեկութիւններ չեն հաղորդում Օսմանցի զօրքերի մասին. այն ինչ շնորհիւ հայ լրտեսների և Էջմիածնի հոգևորականութեան անխոնջ աշխատանքի՝ թշնամին տեղեակ է թէ ինչ է կատարվում ռուսաց բանակում**)։

ՃԶԶ.

Գալով Կարս քաղաքի հայերին՝ տաճիկ կառավարութիւնը թէպէտ և նրանց ևս, զիւղացիների նման, տեղահան չարաւ, սակայն նրանց էլ զէնք բաժանելով՝ ստիպում էր տաճիկ սպանների հսկողութեան ներքոյ՝ կռուել ռուսների դէմ։ Հայերը ի հարկէ չէին կռվում, այլ կռուի էին ձևացնում։ Ընդհակառակը բերդի պաշարման ժամանակ՝ նրանք օգնում էին ռուս զիրուորներին բերդի պատերի վրայ բարձրանալու և ուրիշ այլևայլ օգնութիւններ, որոնք մեծապէս նպաստեցին Պասկեվիչին, ամենակարճ ժամանակում, այն է՝ յունիսի 23-ին, անառիկ բերդին տիրանալու***)։

*) Акты, VII, էջ. 747, № 753.

**) Акты, VII, էջ. 753,—№ 756.

***) Նոյնը, էջ. 750. № 754.

Այս բանը շատ լաւ հասկացան թէ տաճիկ ժողովուրդը և թէ տաճիկ կառավարութիւնը, որ Կարսի անկումը վերագրում էր բացառապէս տեղացի հայերի դաւաճանութեանը*) և փաշայի կաշառուած լինելուն, մի հանգամանք, որ Պասկեվիչը ինքն էլ չէ թագցնում։ Այսպէս՝ նրա 1829 թ. յունուարի 11-ին կայսեր մատուցած ընդարձակ տեղեկագրից երևում է, որ նա վաղօրօք իր կողմն է գրաւած եղել ինչպէս Կարսի, նոյնպէս և Մուշի ու Բայազէթի փաշաներին**)։ Եւ գլխաւորապէս այս էր գլխաւոր պատճառը, որ Կարսի անկումից յետոյ՝ Պասկեվիչը, հեռագհեռէ, տիրեց և այդ փաշալիքներին։

Կարսին տիրելուց յետոյ՝ ռուսները առանց մի առանձին դժուարութեան տիրեցին Ախալքալաքի***) և Խրթվիզի****) բերդերին և ապա անցան պաշարեցին Ախալցխան, որտեղ տաճիկները կենդրոնացրել էին իրանց ոյժերը՝ ասատիկ ընդդիմադրելու նպատակով։ Բացի տէրութեան զօրքերից՝ ռուսներին դիմադրելու հարկադրած էր կառավարութիւնը նաև տեղական ժողովրդին, որ էին հայեր, հայ-կաթոլիկներ և վրացիներ, որոց ամենի ընտանիքները ապահով վայրերում

*) Ինչպէս 1828, նոյնպէս և 1855 և 1877 թուերում Կարսեցի հայերը մեծապէս օգնել են բերդի անկմանը։ Վերջին անգամ այդ նպաստողների թուին էր՝ վանեցի Գրիգոր վարդապետ Աղանեանը, որին եպիսկոպոս ձեռնադրելը Գէորգ Դ-ից պահանջելով պահանջում էր փոխարքայ ՄկՃ իշխանը։

**) Акты, VII, էջ. 775 № 775.

***) Акты, VII, էջ. 754,—№ 757.

****) Նոյնը, էջ. 759, № 760.

պատսպարելով՝ իրանց զինաւորել էր, գրեթէ կանոնաւոր զօրքի հաւասար։

Բայց տաճիկները դրանով էլ չօգուտեցան։ Զինուած ժողովրդականք՝ մեծ մասամբ կամ չէին պատերազմում, կամ ռուսաց բանակն էին փախչում։ Անճարացած տաճիկ կառավարութիւնը յետ վերցրեց ժողովրդից, նրանց տուած զէնքերը և խիստ հսկողութեան տակ էր պահում։

ՃԶԷ.

Ախալցխայի պաշարումը մի քանի օր տևեց։ Պաշարուած տաճիկ զօրքի և տաճիկ ժողովրդի ցոյց տուած ընդդիմութիւնը՝ միանգամայն զարմացրեց ռուսերին։ Մինչև այժմ նրանք ոչ մի տեղ այդպիսի դիմադրութեան հանդիպած չէին։ Տաճիկ կնանիքն անգամ զենքը ձեռին՝ կատաղաբար կռուում էին ռուսերի դեմ։

Տեսնելով, որ կուելով անկարելի է քաղաքին տիրելու,—ռուսերը սկսեցին կրակ ձգել, հրդեհել քաղաքը այս և այն մասերում։ Քամին ձեռաց հրդեհեց ամբողջ քաղաքը։ Տների հետ և նրանց մէջերում ու նեղլիկ փողոցներում այրվում էին և բնակիչները, որոց 4000-ի չափ խանձուած ու այրուած դիակները ղեցրել էին փողոցները։

Կրակը հանդչելուց յետոյ՝ ռուսերը յաղթական կերպով ներս մտան քաղաքը և սկսեցին կողոպտել ու անխնայաբար կոտորել կենդանի

մնացած ժողովրդին, առանց խնայելու թէ մեծին և թէ փոքրին։ Սարսափելի էր նամանաւանդ հայոց թաղի կրածն ու տեսածը։

Վերջապէս օգոստոսի 15-ին Ախալցխան անձնատուր եղաւ*)։

Քաղաքի և նրա շրջակայքի կառավարիչ նշանակուեցաւ իշխան Վասիլ Բեհբութով ժեներալը։

Դիտնալով, որ Ախալցխային տիրելուց յետոյ Արդահանի վրայ պիտի յարձակուէին, իսկ այդ քաղաքի՝ շրջակայ հայ գիւղացիները կամայ թէ ակամայ պիտի օգնեն ռուսերին,—տաճիկ կառավարութեան կարգադրութեամբ՝ այդ բոլոր գիւղերի բնակիչներին սկսեցին բռնութամբ իջեցնել տանել դեպի Արզրում—Կարին։

Պասկեվիչի հրամանով մի վաշտ զօրք գնաց այդ թշուառ հայերին իբր թէ ազատելու։

Ռուսական վաշտը օգոստոսի 18-ին մօտենալով գիւղերին, տեսաւ, որ հազարաւոր հայեր, ինչպէս մի հօտ շրջապատուած են 4000 տաճիկ և քիւրդ հեծելազօրքով և քշում, տարում են։—Ռուսները կամեցան յետ քշել, տաճիկները, ի հարկէ թոյլ չտուին։ Սկսուեցաւ երկու կողմի մէջ կատաղի կռիւը, որի ժամանակ գլխաւոր տուժողը ի հարկէ հայերն էին։

Այդ մարդկային հօտը բանիցս անգամ մեկ ռուսների ձեռն անցաւ, որոնք նրան դեպի Կարս էին քշում, մեկ տաճիկների և քրդերի ձեռին

*) Акты, VII, եր. 760, № 766.

էր անցնում, որոնք նրան դեպի Արզրում էին հրում։

—«Աղետալի էր,—գրում է պատմիչը,—այդ տարագրած հայերի դրությունը, որովհետև սակաւաթիւ ռուս զօրքը չէր կարողանում կատարելապէս պաշտպանել նրանց։ Զինուորական պատմութեան մէջ շատ սրտաճմլիկ կերպով է նկարագրուած հայերի այդ միքանի ժամւայ մէջ կրածն ու տեսածը»։

Վերջապէս, որովհետև ժողովուրդը հէնց ինքը ամեն կերպ ուզում էր ռուսերին հետևել,—ուստի և տաճիկները ձանձրացած նրանց կոտորելուց, թողին հեռացան։

Եւ ռուսները հետները վերցրին այդ հայերին, որոնք 23 գիւղերի բնակիչներ էին և թւով միքանի հազար հոգի և տարան Կարս, ուր այդ ժամանակ տարածւած էր նամանաւանդ ռուս բանակի մէջ ժանդախտը—չումանն։

ՃՁԸ

Մինչդեռ ռուսական մի վաշտ՝ տաճիկներից խլած հայերին Կարս էր տանում, միքանի այլ վաշտեր Արդահանի վրայ էր յարձակւում*)։ Արդահանը այդ ժամանակ մի առատիկ բերդ էր և շատ հայեր էին բնակւում այնտեղ։ Հէնց որ ռուսները քաղաքին մօտեցան,—դոներ բացուեցան և հայ ժողովուրդն ու հոգեւորականութիւնը բափորով դիմաւորեցին

*) Акты, VII, եր. 767, № 767.

և բերդի բանալիները ռուս զօրապետին յանձնեցին։

Տաճիկները արդէն Արդահանը թողել փախել էին դէպի Սողանլի լեռները՝ իրանց հետ հրելով շրջակայ 33 հայ գիւղերի բնակիչներին եւ՝ նրանց Արզրում տանելու նպատակով։ Բայց երբ Աբդահանի դրաւումը լսեցին,—թողին հայերին ճանապարհի վրայ և իրանք աճապարեցին դէպի Արզրում։

Պասկեվիչը դեռ Արդահանումն էր, երբ լուր առաւ, որ Իշխան Ճաւճաւադզէն ամբողջ Բայազէտի փաշայութիւնը նւաճել է*)։

Այդ խոշոր նւաճման մէջ ռուսերին մեծապէս օգնեցին հայերը՝ բանակին հաց մատակարարելով, թշնամու թի և դրութեան մասին ճշգրիտ տեղեկութիւններ հաղորդելով, նրանց ճանապարհները և անցքերը ցոյց տալով, քրդերի գլխաւորներին ռուսաց կողմը գրաւելով եայլն։ Իսկ այդ ամենի փոխարէն քրդերն էլ սկսեցին իրանց ձեռքն ընկած հայերին մարդոտել, իրանց ճանապարհներին պատահած հայ գիւղերը թալանել, բնակիչներին ղկել, չարչարել և նրանց հազարաւոր և տասնեակ հազարաւոր ապրանքները—խաշները և տաւարները հշել տանել։

Բայազէթի քրդերի օրինակից խրախուսւելով ոտքի ելան նաև Վանի վիճակի քրդերը և պակասը նրանք լրացրին։ Էլ գազանութիւն

*) Акты, VII, եր. 767—770.

չմնաց, որ նրանք չանէին հայերի գլխին։

Այդ միջոցին ռուսաց մի փոքրիկ գունդ տակաւին Խոյ և Սալմաստ՝ Պարսկական գաւառներում էր գտնվում, որպէսզի պարսկահայ գաղթականների վերջին խմբին մինչև ռուսաց սահմանն ուղեկցէ։

Այդ ռուսական գնդի տակաւին պարսկաց հողում գտնուելը՝ Վանի քրդերը այնպէս հասկացան, իբր թէ Խոյ ու Սալմաստ գաւառները ևս արդէն ռուսական հող են դարձել։ Ուստի և կատաղաբար անցան յիշեալ գաւառները եւ սկսեցին տեղական, գաղթել պատրաստուող հայ ժողովուրդին լկել, սպանել, կողոպտել։ Իսկ ոչխարները, իրանց սակաւութեան պատճառով, ոչ մի օգնութիւն չէին կարող հասցնել իրանց ապագայ հպատակներին։

ՃՁԹ.

Բայազէթի նահանգից յեսոյ իշխան Ճաւճաւաձէի կարգադրութեամբ հայկական հեծելազունդը գնաց և առանց արիւնահեղութեան մտաւ Դիադին (Բայազէթի փաշայութիւնը կազմող չորս գաւառներից մէկը. Ճնացած երկուսն էին Խամուր և Ալաշկերտ), ուր սիրալիր ընդունելութիւն գտաւ տեղացի հայերի կողմից։ Դալով խամուրի հայերին նրանք իրանք եկան Բայազէթ եւ իրանց բերդի բանալին ռուս զօրապետին յանձնեցին։

Բայազէթի և նրա գաւառամտերի առնելը լսելուց յետոյ միայն Արզրումի Սերասքերը զօրք ուղարկեց Ալաշկերտ՝ ռուսաց առաջխաղացման առաջն առնելու, նախապէս կարգադրելով, որ այդ գաւառի բոլոր հայերին ջնջեն, հեռացնեն Անատօլիայի խորերը։ Բայց մինչ այդ՝ իշխան Ճաւճաւաձէն Թոփրաք-գալա նշանաւոր բերդին տիրեց։ Դրանից կատաղած տաճիկների դրդմամբ՝ գարափափաղ կոչուած թուրքերը մի հայկական մեծ գիւղ հրոյ ճարակ տային և ընակիչներին, իրանց ապրանքներով ջնջեցին տարան։ Ոմանքը նրանց ետևից ընկան, հայ հեծելազնդի հետ միասին, բայց յետոյ կանգ առան, որովհետև գարափափախների մեծաւորը դրական կերպով յայտարարեց, որ եթէ ռուսները այլևս առաջ խաղան, — նրանք իրանց փախցրած հայերին ամենին էլ սրի կանցկացնեն։

Մատամբ այդ՝ բայց գլխաւորապէս պաշար չունենալու պատճառով՝ իշխան Ճաւկաւաձէն՝ կարգադրեց, որ ռուսները այլևս առաջ չերթան։ Իսկ զօրքին պաշար հայթայթելու համար՝ մի վաշտ ուղարկեց Մուշի կողմերը, որտեղ Սօֆիքեանդ կոչուած գիւղից՝ հաղար բեռ հաց բերուեց բանակին։ Մուշից յետ դառնալիս՝ ռուսական վաշտը 200 տուն մշեցի հայ գաղթեցրեց։

Մի այլ վաշտ, որ պաշարի համար նոյնպէս Մանազկերտի կողմերն էր գնացել՝ հայաբնակ Բատնոս գիւղացիների օգնութեամբ դարձեալ

մի խոշոր բեռ ցորեն ճարեց եւ այդ աւարի հետ 160 տուն Բասենոսի հայերին եւս աւարեց եւ Բայազէթի կողմերը բերեց։

Վրայ հասած ձմրանից ստիպուած՝ ռուսերը պատերազմական գործողութիւնները դադարեցրին և Պասկեվիչը ժենեռալ Պանդրատեվին յանձնելով ցարդ տիրած երկրների պահպանութիւնը և ռուսական բանակի ընդհանուր հրամանատարութիւնը՝ ինքը զօրքերի մեծ մասի հետ՝ անցաւ գնաց Թիֆլիզ այնտեղ ձմերելու և գարնան ձեռնարկելի պատերազմի համար պատրաստուելու։

ՃՂ.

Ռուսերից աւելի մեծ պատրաստութիւններ էր տեսնում ձմեռը տաճիկ կառավարութիւնը ևս։

Սուլթանը 1828 թուի կրած պարտութիւնից մեծապէս վշտացած փոխեց Արզրումի Սերասքէրին և նրա տեղ նշանակեց Հաջի Սալէհ փաշային, գրեթէ անսահման իրաւունքներով։ Սուլթանը պատուիրեց նրան, ոչ միայն վերջ դնել Պասկեվիչի առաջ խաղացմանը, այլև յետ առնել ռուսերից մինչև հիմա նրանց տիրած քաղաքները*)։

Նոր Սերասքէրը Արզրումում 10,000 զօրք կենդրոնացրեց և նորանոր ամրոցներով ու խրամներով ամրացրեց քաղաքը։ Նա մեծ զօրաժողով էր անում և տասնիսն բանակների էր սպասում Եգիպտոսից, Հալէպից, Կեսարիայից Թոխաթից

*) Акты, VII, եր. 787 № 789.

և Սվազից։ Կարգադրուած էր, որ Մուշի և Վանի կողմից Բայազէթի վրայ պիտի յարձակուէին 50,000 քիւրդ 50 թնդանօթով, իսկ Տրապիզոնի կողմից Ախալցխայի վրայ պիտի յարձակուէին 60,000 աջարացիներ, կոբուլէցիներ և լազեր 40 թնդանօթով։

Ընդամենը զարնան վերջերում Սերասքէրը պիտի դիմադրէր Պասկեվիչին 200,000 զօրքով և 156 թնդանօթներով, Պասկեվիչը չունէր այդպիսի միջոցներ և գրեթէ ոչինչ օգնութիւն չէր սպասում Ռուսաստանից։ Նա պիտի բաւականանար իր զօրքերով, որ ի հարկէ, բաւական չէր տաճիկների ահռելի ոյժին դիմադրելու։

Ուստի նա դիմեց ժողովրդի աջակցութեանը և մեծամեծ կաշառքներով հազարաւոր թուրքեր ու քրդեր որսալով նրացից այլ և այլ գնդեր կազմակերպեց և տաճիկների դէմ հանեց՝ իր որսացած ցեղապետների և փաշաների ղեկավարութեամբ։

Մինչդեռ երկու կողմից այսպիսի պատրաստութիւններ էին տեսնում առաջիկայ 1829 թուականի գարնան համար, —յանկարծ և անակնկալելի կերպով պատերազմը վերանորոգուեց նոյն իսկ ձմեռուայ կիսին։

ՃՂԱ.

Փետրուարի 17-ին տաճիկներն ու աջարացիք ահագին քանակութեամբ Աջարայի լեռնե-

բից ցած գալով և թափելով Ախալցխայի շուրջը գտնուող հայոց գիւղերը, սկսեցին թալանել, կողոպտել բնակիչներին։

Ինչպէս յիշել ենք իր տեղում։ Ախալցխայի շրջակայքի կառավարիչը այդ ժամանակ իշխան Բեհբութովն էր, որ իր ունեցած ընդամենը երկու վաշտ զօրքով չէր կարող նոյնիսկ քաղաքը պաշտպանել։ Ուստի և հրամայեց թէ քրիստոնեաներին և թէ հրէաներին, որ իրանց ընտանիքը և թանգակին իրեղէնները տանեն բերդի մէջ դետեղեն, իսկ տղամարդիկ քաղաքում մնալով պաշտպանեն իրանց տները։

Փետրուարի 20-ին Ահմէդ փաշայի առաջնորդութեամբ՝ 20,000 տաճիկներ և աջարացիներ, գիշեր ժամանակ, Ախալցխայի վրայ թափեցան և ահագին աւերածութիւն ու արիւնհեղութիւն գործեցին։ Քաղաքի տաճիկ ազգաբնակութիւնը թշնամու կողմն անցաւ և նրա հետ սկսեց կոտրել ու կողոպտել քրիստոնեաներին, որոնք բոլորովին զրկուեցան ոչ միայն իրանց կեանքից, այլև տներից ու ունեցածից։

Այս սարսափելի արհաւիրքները շարունակ 12 օր տևեցին, որի ժամանակ բերդից թշնամու վրայ ձգեցին 8693 թնդանօթի գնդակ, ձեռքով նետեցին 1354 ռումբ և բերդի պարիսպներից արձակեցին 72,880 հրացանի փամփուշտ։ Սակայն այդ հրազէնների աւելի ժողովուրդը և նրա տներն էին փչանում, քան թշնամին։ Այնպէս որ առաջուան չէն Ախալցխան՝ այժմ

աւերակների մի մեծ կոյտ էր ներկայացնում և այս երկրորդ անգամն ևս ամբողջապէս այրուած խանձուած էր*)։

Ահմէդ փաշան շատ աշխատեց բերդին տիրել, փորձեց բերդի ջրի ճանապարհը գոցել, 3 ականներով ուզեց բերդը օդը ցնդեցնել,—սակայն նրա բոլոր ձեռնարկութիւններն ապարդիւն անցան, որովհետև հրիստոնեայ ազգաբնակութիւնը քաղաքից միշտ բերդապահին նախօրօք իրազեկ էր կացուցանում թշնամու ձեռնարկութիւնների նպատակների մասին։

Այս և այսպիսի ծառայութիւններով ժողովրդից օգտուում էին բերդում եղողները, սակայն իրանք չէին կարող, իրանց հերթում ևս, ժողովրդին օգնելու կատաղի թշնամու ճանկերից։ Վանդի բերդում տեղի ունեցած զինուորական խորհուրդը վճռել էր ժողովրդին օգնելու նպատակով բերդից քաղաք զօրք չ'հանել։

Այդ պատճառով 12 օր շարունակ ժողովուրդը ինքն էր միմիայն իրան պաշտպանում և միևնոյն ժամանակ, բերդին էլ այլ և այլ օգնութիւններ հասցնում։ Իրերի այդ դրութիւնն էր պատճառը, որ Ախալցխայի 25,000 ազգաբնակութիւնից կենդանի մնաց միմիայն 750 հրիստոնեայ ընտանիք,—նրանք, որոնք բերդումն էին տեղաւորուած թշնամու զործած յարձակումից առաջ։

Ուր ուրեմն մարտի 4-ին Վրաստանից փոքր

*) Акты, VII, եր. 780.

ինչ զօրք հասաւ յօգնութիւն քաղաքին, որի ժամանումը Ահմէդ փաշան իր Աղդօրի*) գործակալներից տեղեկանալով Թողեց Ախալցխան և իր հրոսակախմբերի հետ յետ քաշուեց կրկին դէպի Աջարիա։

ՃՂԲ.

Սակայն դրանով Ախալցխայի ազգաբնակութեան թշուառութեանը վերջ չդրուեցաւ։ Ընդհակառակը երևան եկաւ մի այլ առհելի թշնամի։ Դա ժանտախտն էր,—չումա։

Դեռ նախորդ տարուանից սկսեալ՝ չուման մուտք էր գործել պատերազմի ասպարէզ դարձած վայրերում։ Եւ Կարսում, Բայազէթում, Արդահանում և առհասարակ ռուսերի տիրած քաղաքներում ժանտախտը զգալի կերպով հարուածում էր ոչ միայն ժողովրդին, ազգաբնակութեանը, այլ նաև զօրքին։

Զինուորական իշխանութիւնը, ի հարկէ, ամեն կերպ աշխատում էր զօրքին հեռու և ազատ պահել ախտի ազդեցութիւնից, նրա վարակումից։ Իսկ ազգաբնակութիւնը թողնուած էր, գրեթէ ամբողջովին իր բաղդին ու կամքին։ Ամենուրեք սահմանուած կարանտինները անկարող էին ախտի տարածման առաջն առնելու։

*) Աղդօրի բերդը,—Բորժոմի ձորի ծայրում, այդ ժամանակ սահմանագլուխ էր կազմում տաճկաց և ռուսաց հողերի։ Օգնութեան հասնող զօրքը Աղդօրի վերին կողմից անցաւ առանց Աղդօր մտնելու։

Ուստի և ժողովուրդը հարկադրուած էր իր յոյսը ս. Գեղարդի վրայ դնել, որ Էջմիածնից բերել տալով շրջեցնում էր գիւղից գիւղ և քաղաքից քաղաք։

Եւ այդ կատարվում էր զօրավար Իշխան Ճաւճաւաձէի կարգադրութեամբ ու թոյլտուութեամբ։ Իշխանը տեսնելով, որ կարանտիական խիստ հսկողութիւնը ոչ մի օգուտ չի բերում ժողովրդին, նախապատիւ համարեց նրա,—ժողովրդի բարոյական և հոգեկան այժերի վրայ ներգործել,—ուստի և Եփրեմ կաթողիկոսից խնդրեց և նա թոյլ տուեց, որ մի եպիսկոպոս և մի քանի վարդապետներ տանեն ս. Գեղարդը և շրջեցնեն յուսահատութեան ծայրը հասած ժողովրդին։

Ճիշտ է Պասկեվիչը հակառակ էր այդ բանին. նա անբաւական մնաց Իշխան Ճաւճաւաձէից իր այդ կարգադրութեան համար, իսկ Եփրեմ կաթողիկոսին մինչև իսկ յանդիմութիւն գրեց առաջարկելով «որպէսզի այսուհետև այդպիսի գործերում և դէպքերում ոչինչ չձեռնարկէք առանց կանխապէս խորհրդակցելու տեղական իշխանութեան հետ»։

Սակայն ժողովուրդը՝ ըստ իր դարևոր սովորութեան և հաւատին՝ իրանն էր պահանջում և անում ու անել տալիս*)։

*) 1797 թուականում Թիֆլիզում ժանտախտ երևեցաւ։ Վրացոց Գեորգի թագաւորի խնդրանօք Գեղարդը Էջմիածնից Թիֆլիզ բերին և «ցաւը շատով անցաւ» գրում է պատմիչը։ 1811 թուականին ժանտախտը կրկնուեցաւ Թիֆլիզում, ուր Գեղարդը նորից բե-

ՃՂԴ

Իշխան Բեհբուդովի փոխարէն Ախալցխային և նրա շրջակայքին կառավարիչ նշանակուած ժենեռալ մայեօր բարօն Օստէն-Սաքէնը, յուլիսի 23-ին Ախալցխա ժամանելով անմիջապէս ձեռնարկեց չումայի դէմ միջոցների, որոնք նկարագրուած են նրա յայտարարութեան մէջ՝ ուղղած Պասկեվիչին՝ 1829 թ. յուլիսի 30-ին, № 383*)։ Թարգմանաբար դնում ենք այստեղ այդ յայտարարութիւնը յարակցելով, որ մինչև Սաքէնի գալը, Սխալցխայում կենդանի մնացած 750 ընտանիքից՝ միմիայն 300 ընտանիք էին կենդանի մնացել։ Մնացած 450 ընտանիքը՝ արդէն զոհ էին գնացել չումային:

*) Акты, VII, եր. 813 № 807.

ել ուին։ 1814 երրորդ անգամ կրկնուեցաւ։ Գեղարդը նորից էջմիածնից Թիֆլիզ բերուեցաւ կառավարչապետ Ռտիչչեվի խնդրանօք։ 1830 թուականին Թիֆլիզում եղած մեծ խօլերայի ժամանակ հայերը կամեցան նորից Գեղարդը բերել, Պասկեվիչը չը թոյլատրեց։ Սակայն երբ 1846-ին և 1847-ին խօլերան նորից իր գլուխը բարձրացրեց. Կովկասեան իշխանութիւնը ոչ միայն արդելք չեղաւ, այլ նաև ինքը առաջինը դիմեց Ներսէս կաթողիկոսին թախանձելով, որ խօլերան Պարսկաստանից ռուսաց կողմերն անցկենալու դէպքում թոյլատրէ ս. Գեղարդը «պատշաճաւոր բարեշքութեամբ պտոյտների հայ գիւղերում, ուր որ ցաւն յայտնի»։

Անտեղի չենք համարում յայտնել ի գիտութիւն մեր ընթերցողներին, որ այլ և այլ ժամանակ էջմիածնից դուրս տարածուած գեղարդը իսկական Գեղարդը չէր այն, որ ըստ աւանդութեան, Թադէոս առաքեալը Եղեսիա բերեց՝ Աբգար Թագաւորին բժշկելու եկած ժամանակ։ Այլ նրա օրինակովն ու ձևով շինուած մի այլ, արհեստական գեղարդ։ (Տես, Դիւան Հայոց պատմ. գիրք Ե, եր. 433. էջ 12—28)։ Իսկական Գեղարդը 1805 թուականին ի միջի այլոց Ցիցիանովը տարաւ Թիֆլիզ, որտեղից 1810-ին վերադարձրին կրկին էջմիածին։

—«Ախալցխայի բնակիչների, որոնցից 300 ընտանիք է միայն մնացել, դրութեան հետ ծանօթանալով,—այսպէս է սկսւում բարոն Սաքէնի յայտարարութիւնը,—նրանց ամենամեծագոյն մասին ես այնքան չքաւոր տեսայ, որ ստիպուած էին կամ բոյսերով կերակրուելու և կամ կերակրի այն փշրանքներով, որ զինուորները՝ կարեկցաբար՝ վայր էին ձգում նրանց առաջ բերդի պարիսպներից։

Նրանցից շատերը միայն չումայից չէ որ մեռնում էին, այլ նաև քաղցից, սովածութիւնից։

Այս հանգամանքն է ահա պատճառը, որով իշխան Բեհբութովը քաղաքից չէ հեռացրել բնակիչներին։ Որովհետև այն ժամանակ հարկ կը լինէր նրանց մնունդ մատակարարել։ Սակայն հէնց այդ պատճառաւ էլ՝ չուման հետզհետէ տարածուել ու սաստկացել է։ Իսկ ժողովուրդը այդ բանը թագցրել է՝ մեռածներին ծածկաբար թաղելով։ Ես համոզուեցայ, որ չումայի համար տնկուած նշանները՝ հերիք չեն անում՝ առողջների և վարակուածների փոխադարձ հաղորդակցութեանը վերջ տալու։

Ժամանակը կարող է անցնել զօրքին, որ ուրիշ կերպ չէ կարող բերդն անցնել, քան ժողովրդի միջով։ Մի խօսքով՝ ես հարկադրուած եղայ կտրուկ միջոցների դիմելու։ Եւ ահա շտապում ձեր բարեհայեցողութեանը ներկայացնել այդ առթիւ իմ արած կարգադրութիւնները։

ա) Ես վճռեցի բոլոր բնակիչներին, առանց

բացառութեան, քաղաքից դուրս հանել և տեղաւորել Պոցխով գետի աջ ափում, գետից 3 վերստ հեռու։ Այսպիսով կարելի կը լինի վարակուածներին առողջներից զատել և ախտահանել։ Հրամայեցի այստեղի զինուորական պաշարի ամբարից՝ չքաւորներին օգնութիւն տալ ամենանհրաժեշտ չափով այն պայմանաւ, որ յետոյ յետ տացուի։ Այդ նպատակի համար՝ հարկ կը լինի ամբարից մինչև 200 չետվերտ հաց դուրս տալ։

բ) Իմ եկած միւս օրը, այսինքն ամսոյս 24-ին, զինուորներ նշանակեցի, որ գնան ծառեր և ճղներ կտրատեն և բերեն նշանակած տեղում դարսատեն, որպէսզի կարելի լինի նրանցմով ժողովրդի համար քոխեր (шалашъ) շինել։

գ) Ամսոյս 25-ին, ժողովրդին իրանց վարակուած տներից դուրս հանել ուի և իմ ներկայութեամբ բժշկական քննութեան ենթարկելուց յետոյ՝ տեղաւորեցրի երկու առանձին բաժանմունքների մէջ,—վարակուածների և կասկածելիների։

դ) Ամսի 25-ին, 26-ին և 27-ին միւս բնակիչները հաց էին թխում։ Իսկ վերջին օրը նրանց էլ տանում և տեղաւորեցնում էին զինողական բաժանմունքում, որտեղից 21 հոգի անցկացան վարակուածների բաժանմունքը, ուր արդէն 51 վարակուածներ կան։

ե) Կերակուր եփելու համար հարկաւորեալ փայտը գետի մէջ ձգելով՝ բերում հասցնում են մինչև կարանտինի տեղը։

զ) Ռիբինցով և Լոշչալին երկու ժիր կողակների սպաներին վերակացու եմ կարգել։ Դրանցից մէկը հսկում է վարակուածների և կասկածելիների բաժանմունքների վրայ, իսկ միւսը՝ զինողական բաժանմունքի վրայ։ Ես այդ սպաներին խստիւ պատուիրել եմ թոյլ չտալ, որ ամ. ժողովուրդը հաղորդակցութիւն ունենայ ինչպէս կողմնակի անձինքների հետ, նոյնպէս և մէկ բաժանմունքի անձը՝ մի այլ բաժանմունքի անձի հետ։ Բ. Բոլոր առարկանները և կենդանիները դեռում լանալ և լողացնել։ Առարկանները 2 օր ջրի մէջ թողնել, իսկ հանելուց յետոյ՝ միքանի անգամ ցայել, քամուն տալ։ գ. Օրէնը երկու անգամ ժողովրդին, մերկացրած մարմնով, բժշկական քննութեան ենթարկել։ Իմ այս կարգադրութիւնների ճշտիւ գործադրման մասին՝ ամենայն օր ինքս եմ հսկում, նոյնպէս և ինձ մօտ եղած սպաները։

է) Վերակացուների ձեռքի տակ կան 6 ենթասպայ և 60 զինուորներ, որոնցից 4-ը ցերեկներն են պահապանութիւն անում, իսկ 12-ը՝ գիշերները։ Բացի դրանցից՝ գետի միւս ափին գաղտնի պահակներ էլ եմ կանգնեցրել։ Ժողովրդին յայտարարուած է, որ փախչողների, հեռացողների վրայ կրակ բանալու իրաւունք է տրուած պահակներին։ Փախչելու երկու փորձեր եղան։ Պահակները այդ առթիւ կրակ բաց արին օդի մէջ։ Մի քանիսին էլ մարմնական պատժի ենթարկեցին և այսպիսի ըմբոստներին հնազանդութեան բերին։

ը) Ախալցխան, ի բաց առեալ բերդը, յայտարարուած է չումայով վարակուած և այնտեղ մուտք գործելն արգելուած է։ Բերդը կարող են մտնել միմիայն զինուորները այն էլ ոչ այլ կերպ, եթէ ոչ խմբովին, զինուորական կարգով։ Այս կարգադրութեան կատարման վրայ հսկելու համար՝ պէտք եղած տեղերում հարկաւոր թիւով պահակներ են կանգնեցրած։ Բերդի պահակների թիւը՝ իջեցրած է 60 հոգու։

թ) Ես ամենախիստ միջոցներ ձեռք կառնեմ քաղաքի տները մաքրելու, հովհարելու, վերջապէս գաճելու համար։ Հրամայեցի վարակուած տներն այրել, իսկ մինչև այդ՝ ժողովրդին չեմ թոյլ տալ քաղաք անցնել։

ժ) Ժանտախտը զօրքի մէջ չանցնելու մասին՝ ես առանձին նախազգուշութիւններ եմ գործ դրել, որոնք և յայտարարուած են ամսոյս 26-ին, № 28 հրամանագրումս։

ժա) Աղզօրում նոյնպէս երևեցաւ չուման։ Ես այնտեղ ուղարկեցի ինձ մօտ եղած սպաներից՝ պօրուչիկ Պօտերնեային հարկաւոր միջոցները գործադրելու համար։ Այստեղ ամեն միջոցները գործադրելուց յետոյ՝ անմիջապէս կը մեկնեմ Աղզօր անձամբ անձին տեղեկանալու, ստուգելու, եթէ միայն առանձին զորձեր ինձ այստեղ չարգելեցին։

Ի վերջոյ պատիւ ունիմ զեկուցանել, որ մեր նուաճած գրեթէ բոլոր սանջախներում, մինչև իսկ Ախալցխայի շրջակայքում՝ չուման աստիկ տարածուած է։

Մինչև այժմ ես ոչինչ չէի կարող անել բացի այն, որ բերդապահներին և սանջախների մեծաւորներին այդ առթիւ մանրամասն հրահանգներ էի տալիս։

Չումայի առթիւ իմ ունեցած միջոցները շատ աննշան են, նամանաւանդ այժմ, երբ գիւղացիք դաշտային գործերով են զբաղուած։ Ուստի և այս մասին ձեզանից պարտուպատշաճ հրահանգներ եմ խնդրում»։

ՁՂԴ.

Վրաստանից մարտի 4-ին, օգնութեան հասած զօրքի շնորհիւ՝ հպիւ-հպ Ախալցխայի դժբախտ ժողովրդի մնացորդը ազատուել էր Աջարիայի հրոսակներից, երբ Պասկեվիչի կաշառած Բայազէթի և Մուշի քրդերը՝ դաւաճանելով իրանց խոստմանը (Պասկեվիչը նրանց 10,000 ոսկի էր բաժանած), Սուլթանի կողմն անցան յանկարծ (ստանալով առ այդ 2 միլիոն դուռուշ) և թափելով Խամուր գաւառի հայ գիւղերի վրայ՝ ասպատակել եւ կողոպտել սկսեցին։

Մի այդպիսի յեղուզակային ասպատակութիւն սկսուեցաւ նաև Արդահանի շրջակայ հայկական գիւղերում։

Այդ աւազակութիւնները Կարսի ամբողջ փաշայութիւնում մի այնպիսի սարսափ ձգեցին բոլոր հայկական գիւղերի վրայ, որ ոչ մի հայ չէր համարձակւում տանից իր գլուխը դուրս

բերել։ Այդ պատճառաւ էլ գարնանային վար ու ցանք չէր կատարվում դաշտերում։

1829 թւի գարունքը շատ անձրևային էր և ցուրտ, ուստի և ռուսերը չէին կարող պատերազմական գործողութիւնների ձեռնարկել, մինչդեռ տաճիկներն իրանց հպատակ այլևայլ վայրենի ցեղերի միջոցաւ միանգամայն ոտատակ տրին գրեթէ բոլոր հայկական գիւղերը։ Հայերը իրանք անկարող էին պաշտպանուել, իսկ ռուս զօրքերը տակաւին իրանց տեղերիցը չէին ժաժ գալիս։

Վերջապէս մայիսի 19-ին Պասկեվիչը հասաւ Արդահան, որտեղից 30-ին անցաւ Կարս։ Եւ յունիսի 19-ին ու 20-ին Սողանլի լեռներում մի փառաւոր ջարդ տալով տաճկաց բանակին՝ 31 թնդանօթ առաւ նրանցից, 19 դրօշակ և 1500 գերի, որոց մէջն էր օսմանցիների սպարապետ Հաքքի փաշան։

Այս յաղթութեամբ այժմ Պասկեվիչի առաջ Արզրումի ճանապարհը բաց էր։ Եւ ռուսերը յաղթական գնացքով մտան Բասենի վիճակը յառաջ ընթանալով դէպի Հասան-Ղալա։

ՃՂԵ.

Բասենի վիճակի հայ գիւղացիները ցնծութեամբ եւ եկեղեցական բափորներով դիմաւորելով ռուսերին՝ անկեղծ սիրով նրանց ընծայ էին բերում իրանց ունեցած պաշարներից և կենդանիներից։

Սողանլի անտառում յաղթած Սերասքէրը դէպի Արզրում էր փախչում։ Նրան հետևում էին նրա ջարդած զօրքի փշրանքները, որոնք ամեն ճիգ ու ջանք թափում էին իրանց հետ Արզրում տանել տեղացի հայերին, որպէսզի ռուսերին օգնելու հնարաւորութիւնից նրանց զրկեն. սակայն տաճիկների ջանքերը, մեծ մասամբ, ապարդիւն էին անցնում։

Սերասքէրին հետապնդող Պասկեվիչը յունիսի 23-ին հասաւ Քէօփրիքիոյ,—պատմական Վաղարշաւան հայ գիւղը, որտեղ լսեց, որ Սերասքէրը Հասան-Ղալան դատարկելով նրանում գտնուած ռազմական մթերքները շտապ-շտապ տեղափոխել է տալիս Արզրում։

Առանց ժամանակ կորցնելու՝ Պասկեվիչը մի գունդ հեծելազօրքով նոյն գիշերն ևեթ, և ամենայն արագութեամբ, հասաւ Հասան-Ղալա, որի ամրոցի պահապան զօրքը և տաճիկ բնակիչները արդէն փախել էին։ Քաղաքում մնացել էին միմիայն 80 տուն հայ բնակիչներ, որոնք եկեղեցական բափորով դիմաւորեցին ռուսերին։

Մնում էր հիմա Արզրումին տիրել, որ և գլուխ բերեց Պասկեվիչը առանց արիւնհեղութեան*)։

Նրա հետ էին այդ ժամանակ կաթոլիկութիւնից դարձած Սերովբէ վարդապետը և Մամիշ աղա անունով մի յայտնի և ազդեցիկ տաճիկ։

Վերջինիս միջոցաւ Պասկեվիչը յաջողեցաւ՝

*) Акты, VII, էր. 780, № 806.

Արզրումի նշանաւոր ազդեցիկ տաճիկներին կաչառել։ Իսկ Սերոբէ վարդապետը Կարնոյ վիճակի առաջնորդ Կարապետ եպիսկոսի հետ էր բանակցում։

Վերջինիս անունով Պասկեվիչը հետը բերած ունէր Եփրեմի կոնդակը, որով ամենայն Հայոց կաթողիկոսը պատուիրում էր Կարնոյ առաջնորդին՝ օգնելու ռուսերին, երբ սրանք Արզրումին մօտենան։

ՃՂԶ.

Եփրեմի այդ կոնդակը բռնուեցաւ տաճիկ ոստիկանութեան ձեռքով։ Կարապետ եպիսկոպոսը Սերասքէրի ատեանը կանչուեցաւ։ Եւ թէպէտ ինքը մեղաւոր չճանաչուելով ազատ թողնուեցաւ։ Սակայն, ինչպէս նա ինքը, նմանապէս և նրա հօտը, երկիւղ կրելով վերին աստիճան զրգռուած տաճիկ խուժանից ու լազերից, փախել, թաղ էին կացել ստորեկրեայ վայրերում և գետնափոր նկուղներում թէ հայ և թէ տաճիկ բարեկամների ու բարի մարդկանց մօտ*)։

Առաջնորդը թաղ էր կացել հայ ազգի Մանկլօղեանի տանը, մի գէճ ու խոնաւ նկուղում։

Հէնց այդ նկուղիցն էր, որ նա՝ Առաջնորդը մի գիր գրեց Պասկեվիչին և մաքսատան բեռնակիրներից Ֆարման անունով մի հայի տրեխներում հասցրեց կոմսին։

*) Արզրումի 100,000 բնակիչներից միայն 20,000 հայ էին։

Նամակում Կարապետ եպիսկոպոսը Պասկեվիչին նկարագրում էր քրիստոնեայ ժողովրդի վիճակը և, միևնոյն ժամանակ, կոմսին ցոյց էր տալիս, թէ ո՛ր ճանապարհից և ո՛ր կողմից պետք էր Արզրումի վրայ յարձակուել և յատկապէս ո՛ր դիրքի վրայ։

Սակայն, ինչպէս յիշեցինք, ի շնորհս Մամիշ աղայի ցրուած ռուսական ոսկիների, պատերազմական գործողութիւններ տեղի չունեցան։ Այլ ռուսական բանակը Արզրումից 4 վերստ հեռու եղած Ս. Նշան (Թօփ-Դաղ) բլրի վրայ կանգ առնելով՝ քաղաքի բանալիներն էր պահանջում։

Եւ նա ստացաւ այդ բանալիները յունիսի 27-ին իր նշանակած ժամին, երբ քաղաքի նշաւոր տաճիկ բնակիչները քաղաքի դռնից դուրս գալով, իրանց հանդիսաւոր քայլերը դէպի ռուսական բանակատեղին ուղղեցին, իրանց ձեռքում ունենալով բանալիները։

Տաճկական այդ պատգամաւորներից յետոյ՝ դէպի Ս. Նշան ուղեւորուեցաւ նաև Կարապետ եպիսկոպոսը յայտնի Գրիգոր Շէքէրճեան վարժապետի հետ,—երկուքն էլ ձի հեծած և խաչ ի ձեռին։

Ս. Նշանի վրայ բարձրանալով՝ հայոց առաջնորդը՝ խաչակնքեց ռուս բանակին։ Պասկեվիչը մօտեցաւ և խորին ջերմեռանդութեամբ համբուրեց խաչը և գրկեց հայոց եպիսկոպոսին։

Այդ ժամից սկսեալ՝ Արզրումի ներքնաբեր-

դի վրայ սկսաւ քրիստոնէական դրօշակը ծածանել կիսալուսնի դրօշակի փոխարէն։

Սերասքէրը իր զօրքերով անձնատուր եղաւ Պասկեվիչին, որի պատերազմական տրոֆէյներն եղաւ նաև 29 դրօշակ, 150 թնդանօթ և բազմաթիւ ռազմական մթերք ու պաշարեղէն։

Այնուհետև Պասկեվիչը ձեռնամուխ եղաւ մի շարք տօնախմբութիւնների և զօրահանդէսների, որոց ժամանակ հայերը միշտ հրաւիրվում էին ներկայ և մասնակից լինելու։

Այդ օրերում հայերը առհասարակ շատ յարգի էին Պասկեվիչի աչքում։

ՃՂԷ.

Յոյս չունենալով, որ Արզրումը այնքան հեշտութեամբ և արագութեամբ անձնատուր կը լինի՝ Պասկեվիչը այդ քաղաքի վրայ արշաւելիս իր զօրքի ամենամեծ մասը իր ձեռքի տակն էր կենդրոնացրել։ Իսկ ցարդ տիրած վայրերի պահպանութեան համար՝ մի-մի վաշտ զօրք էր թողել։

Բացի ռուսական այդ վաշտերիցը՝ Բայազէթում կար նաև մի հայկական գունդ, տեղւոյն հայերից կազմուած։ Դրանց ամենի հրամանատարն էր ժենարալ Պապովը։

Վստահ լինելով, որ ի շնորհս տեղական հայ-քրիստոնեայ ազգաբնակութեան ցոյց տուած ամենն տեսակ աջակցութեան՝ յիշեալ վաշտերը բոլոր ամենայնի, ապահով են,—Պասկեվիչը Արզրումում, ինչպէս տեսանք, զբաղուած էր զօրահանդէսներ և տօնախմբութիւններ կազմելով, մասնակցութեամբ տեղւոյն ազդեցիկ հայերի։ Վեր-

ջիններս այն աստիճան գրաւված և ոգևորուած էին Պասկեվիչի և նրա սպաների իրանց ցոյց տուած սիրալիր ընդունելութիւններով, փայփայանք ու գուրգուրանքներով, որ մինչև իսկ սկսել էին մասնաւոր և պաշտօնական գրագրութեանց մէջ մտնել նրանց հետ, գրագրութիւններ, որոց մէջ Արզրումի հայ իմաստուն խիկարները՝ իրանց մասնաւոր կամ ընդհանուրին վերաբերեալ խնդիր ու առաջարկները մտերմաբար ուղղում էին «առ մեծ ժենարալ տիրացու*) Պասկեվիչն», և «առ ժենարալ Մահտեսի Բագրատովն յուրախ ժամու» (Պանգրատեվ, որ Արզրումի զինուորական նահանգապետն էր)։

ՃՂԸ.

Արզրումում տեղի ունեցած այդ տօնախմբութիւնների օրերից միքանի օր առաջ էր, որ մի մեծ բանակ, 12 թնդանօթներով Վանի կողմից՝ յանկարծ յարձակուեցաւ Թոփ-Գալէի հայկական թաղի վրայ. աւերեց, քարուքանդ արաւ, բնակիչների մի մասին կոտորեց, մնացածներին, տաւար ու խաշերի հետ, գերի վերցնելով՝ Բայազէթի վրայ ուղղուեցաւ։ Թոփրազ-Գալէի բերդի ռուս պահապան զօրքը, իր սակաւութեան պատճառով, ոչ մի օգնութիւն չկարողացաւ հասցնել հայերին, այլ լոկ հանդիսատես էր բերդիցը՝ խաղաղի հոյերի և նրանց ապրանքի ոչնչացմանն

*) Ըստ հայկական հին հասկացողութեան տիրացու՝ նշանակում է ուսումնական։ Յայտնի է որ Տերը գպրութեան ասուածն էր։

ու գրաւմանը տաճիկ զօրքի ձեռքով, հրամանատարութեամբ Վանայ փաշայի*)։

Բայազէթի ռուս պահակ զօրքի թիւը 1500 էր, երբ Վանայ փաշայի 15,000 հոգուց բաղկացած վերոյիշեալ բանակը եկաւ պաշարեց քաղաքը։ Սկսեցաւ սարսափելի արիւնհեղութիւն ու կոտորած։ Թէպէտև ռուս զօրքը հերոսաբար էր կռվում, բայց թշնամու բազմութեանը չկարողացաւ դէմ դնել։ Իրիկնապահին տաճիկները տիրեցին քաղաքին։ Կենդանի մնացած սակաւաթիւ ռուս զօրքը, նրա հետ և հայկական վաշտը՝ բերդը քաշուեցաւ։ Այդ տեսնելով քաղաքի տաճիկ ազգաբնակութիւնը օսմանցի կողմն անցաւ և նրա հետ սկսեց իր հանմահաղամացի հայերին կոտորել։

Բարեբաղդաբար դիշերուայ մութը եկաւ վերջ դնելու այդ օրուայ կոտորածներին։ Թէպէտև ողջ դիշերը՝ ճիչ ու սարսափի ազաղակներն անպակաս էին հայկական թաղում, ուր տաճիկ խաղաֆացիք ցրուած, թալանում, պղծում և ասպանում էին անխտիր ամեն մի տեսած, բռնած, պատահած հայ մարդու։

Հայ ազգաբնակութեան հետ տեղի ունեցած այս դիշերային եղեռնական դրաման՝ այլևս չկարողացաւ տանել Բայազէթի հայկական զունդը։ Ուստի հէնց որ լոյսը բացուեցաւ նա պահանջեց և իրաւունք ստացաւ յարձակողական դիրք բռնել և թշնամուն դուրս քշել քաղաքից։ Յիշելով

*) Акты, VII, էջ. 806—807.

այն աղէտները, որ նախընթաց դիշերը իրանց գերդաստաններին հասցրին թշնամու կողմն անցած իրանց տաճիկ դրացիները—հայկական զնդի ամեն մի զինուորը տուած էր դարձել և յարձակուելով տաճկաց տների վրայ՝ փոխադարձաբար կոտորում էին ամեն մի տեսած, բռնած ու պատահած տաճկի անխտիր։

—«Հազարից աւելի դիակներ թափուած փողոցներում,— ասում է ականատես ռուս պատմիչը,—վկայում էին թէ որպիսի կատաղութեամբ և չարաչար պատժեցին հայերը՝ իրանց դաւաճանած համաքաղաքացիներին։ Հայկական զնդի այդ հերոսական կուից յետոյ՝ տաճիկ զօրքը թողնելով քաղաքը՝ խոյս տուեց և գնաց կանգնեցաւ լեռների գլխին, այնտեղից ամբողջ քաղաքը ռմբակոծելու չար դիտաւորութեամբ։

Բարեբաղդաբար տաճիկների այդ դիտաւորութիւնը գլուխ չեկաւ։ Փաշան հրաման ստացաւ՝ յետ դառնալ դէպի Վան և նրա պաշտպանութեան մասին խորհել ու կարգադրել։ Վանն զի Արզրումը առնուած է,—գրում էին փաշային,—և Պասկեվիչը կարող է շարունակել իր քայլերը դէպի առաջ։

ՃՂԹ.

Բայազէթի գլխին եկած փորձանքը և տեղւոյն տաճիկների դաւաճանութիւնը Պասկեվիչին հաղորդելով՝ ժենեռալ Պապովը հաստատում էր, որ բոլոր չարիքները պատճառողը՝ քրդերն էին

և մանաւանդ նրանց ցեղապետ Սուլէյման աղան, որին իբր թէ Պասկեվիչը իր սակիներով գրաւել էր։

—«Գալով հայերին,—շարունակում է Պապովը,—պետք է յայտնեմ, որ նրանք շատ օրինակելի էին, նրանք հոգւով նուիրւած են ռուներին և հնազանդ իշխանութեանը»։ Պասկեվիչին շատ անախորժ թւաց ժենեռալ Պապովի նկատողութիւնը քուրդ ցեղապետի նկատմամբ, ուստի և հետևեալ պատասխանը գրեց՝ «բոլոր Բայազէթցի դաւաճաններին բանտարկեցէք, քրդերի ցեղապետներին ձեռք մի տաք, որ չլինի թէ գրգռին մեր դէմ նրանց հպատակ քրդերը։ Իսկ հայերի անձնուիրութեանը մի՛ հաւատաք, վասն զի այդ յառաջ է գալիս նրանց վախկոտութիւնից»։

Որքան որ ժենեռալ Պապովը, իբրև զինուոր գիտէր և ճանաչում էր իր, իբրև ստորադրեալի, պարտաւորութիւնը դէպի ռուսական բանակի ընդհանուր հրամանատարը, — այնուամենայնիւնա, իբրև մարդ, չկարողացաւ տանել Պասկեվիչի այն ակնյայտնի մեղադրանքը, որ նա անիրաւացի կերպով բարդում էր Հայոց վրայ, ուստի և հետևեալ տողերն ուղղեց Պասկեվիչին. «Հայերը ամենավտանգաւոր ժամանակում այնման անձնուիրութիւն ցոյց տրին մեզ, որ ես պարտք եմ համարում բարեխօսել նրանց մասին ձեր առաջ,—հայերը արժանի են, որ դուք չաւ կարծիք ունենաք նրանց մասին»։ Թերևս իր այս՝ չենք ասում հայասիրութեան՝ այլ ճշմարտասիրութեան համար էր, որ պատերազմի վերջանալուց յետոյ՝ Պապովը ստիպւած էր հեռանալ Պասկեվիչի մօտից, Կովկասից։

Դառնանք մեր քաղաքներին։ Պասկեվիչը մի կողմից Բայազէթի հայերի անձնուիրութեանը չէր հաւատում, միւս կողմից Արզրումի մէջ, Խնուս քաղաքի հայ պատգամաւորութեանն էր ընդունում, որոնք իրանց ձեռքով իրանց քերդի բանալիները ռուս զօրքի հրամանատարին էին յանձնում քրդերի դէմ, իրանց համար օգնութիւն խնդրելով նրանից։

Պասկեվիչը նրանց խնդիրը կատարեց։ Մի վաշտ ռուսական զօրք գնաց Խնուս մտաւ։ Այդ տեսնելով քրդերը թալանեցին շրջակայ հայ գիւղերը կոտորեցին ժողովրդի մի մասին և դէպի Մուշ հեռացան։

Խնուսից ռուսներն անցան Բաբերթ (Բայբուրթ*), որի մէջ բաւականին հայ և յոյն քրիստոնեայ ժողովուրդ կար։ Սրանց աջակցութեամբ Բաբերթին ևս ռուսերը տիրեցին։ Սակայն այդ քաղաքից 20 վերստ հեռաւորութեամբ գտնւած Խարթ գիւղում ժողոված լազերի վրայ յարձակւելիս՝ ռուս բանակը ջարդւեցաւ և մի ժենեռալ, 13 սպայ և 300-ից աւելի ռուս, դրա կիսի չափ էլ հայ զինուորներ զոհ տալով՝ վերադարձաւ Բաբերթ։

Լազերի տարած այս յաղթութիւնը տաճիկներին մի բոլէ ոգի ներշնչեց և նրանք սկսան ապստամբութեան նշանները արտայայտել ամեն տեղ։

*) Акты, VII, էջ. 816 № 820.

Պասկեվիչը փութաց այդ սպասուրութեան առաջն առնել և գնաց անձամբ պատժեց Խարթ գիւղի լաղերին, որոնք Տրապիզոն փախան։

Ճանապարհների վատութեան պատճառով ռուս բանակը չկարողացաւ Տրապիզոն անցնել, այլ ճանապարհի վրայ գտնուող Բալախու անունով հայաբնակ գիւղում գետեղւելով մի գունդ ուղարկեց մօտակայ Գիւմիշ-Խանա քաղաքը, որի բոլոր բնակիչները յոյներ էին։ Առանց հակառակութեան յոյները անձնատուր եղան ռուսերին։ Սակայն Պասկեվիչը ստիպւած եղաւ յանկարծ թողնել Գիւմիշ-Խանան, Արզրում վերադառնալու համար։

Մ.

Երբ Պասկեվիչը ռուսական բանակի մի մասը վերցրած՝ գնաց Խարթի լաղերին պատժելու՝ Արզրումի տաճիկները խորհուրդ խորհեցան մի գիշերւայ մէջ յանկարծական յարձակում գործելով քաղաքի Հայերի եւ ռուսերի վրայ բողոքին կոտորել։

Բարեբաղդաբար հայերը շուտ իմացան այդ չար խորհուրդը և ռուսերին զգուշացրին, որոնք անմիջապէս ձերբակալելով 12 նշանաւոր տաճիկ դաւադիրներին՝ աքսոր ուղարկեցին Երևան։

Որոշած էր՝ որ երբ Արզրումի տաճիկ ազգաբնակութիւնը՝ հայերի և ռուսերի վրայ յարձակւի, Վանի և Մուշի փաշաներն էլ ռուսական բանակի վրայ պիտի յարձակւէին։

Բայց գլխաւոր դաւադիրների ձերբակալւելով՝ այդ խորհուրդն ևս գլուխ չեկաւ։ Մէջտեղում տուժեցին միմիայն շրջակայ հայ գիւղերը, որոնց անարգել կերպով թալանում և կողոպտում էին քրդական հրոսակները։

Ճիշտ է Պանդրատեվը իր ձեռքի տակ եղած զօրքի մի փոքրիկ մասը ուղարկել էր քրդերին զսպելու, բայց դրանով հայերի վիճակի դառնութիւնը՝ եթէ չծանրացաւ, չթեթևացաւ էլ։

Միւս կողմից Պանդրատեվը օր աւուր սպասում էր թէ՝ Արզրումցի տաճիկ ժողովուրդը այս կամ այն կերպով գլուխ կը բարձրացնէ։ Իսկ ինքը բաւականաչափ ոյժ չունի նրան դիմադրելու։ Միակ օգնութիւնը, որ այդ նեղ ըսպէին կարող էին ռուսերին ցոյց տալու,—այդ դարձեալ հայերն էին։

Ուստի Պանդրատեվը, Պասկեվիչի նախընթաց համաձայնութեամբ՝ Արզրումի հայերից մի գունդ զորք կազմեց, որոնք ռուս զօրքից ջոկւելու համար, իրանց ձախ կրծքի վրայ կարմիր մահուդից շինած խաչեր էին կրում։ Գունդը ունէր նաև սիպտակ դրօշակ։—Հայերի օրինակին հետևեցան նաև յոյները, որոնք, իրանց հերթում, 100 զինւոր դրին Պանդրատեվի տրամադրութեան տակ։ Սակայն Արզրումցի հայերից կազմւած այս գունդը միջոց ու հնարաւորութիւն չունեցաւ պատերազմի դաշտում իրան ցոյց տալու։

1829 թւի սեպտեմբերի 2-ին տեղի ունե-

ցաւ Ադրիանոպոլի հաշտութիւնը։ Պատերազմական գործողութիւնները ամենուրեք կանգ առան։

ՄԱ.

Ադրիանոպոլի հաշտութեան դաշնագրի 4-դ պարբերութեան զօրութեամբ՝ Պասկեվիչի տիրած երկրներից ռուսների սեպհականութիւն էին դառնում միմիայն Անապան, Փոթին, Ախալցխան և Ախալքալաքը։

Իսկ Արդահանը, Կարսը, Բայազէթը, Արզրումը և առհասարակ Տաճկահայաստանի միւս մասերը վերադարձւում էին օսմանցիներին։

Դաշնագրի այս պարբերութիւնը կայծակահար արաւ տաճկահայ ժողովրդին։

Մեր քաղուածքներից ընթերցողը տեսաւ, որ տաճկահայ այդ ժողովուրդը պատերազմի տեղութեան բոլոր միջոցում բացի այն որ ռուներին առաջնորդում, նրանց անցքեր ու ճանապարհներ էր ցոյց տալիս, բացի այն, որ խաչ ու խաչվառով էր նրանց դիմաւորում և իրան խաշներն ու եղներն նրանց առաջ մատաղ անում, բացի այն, որ նրանց պաշար էր մատակարարում թէ իրանից և թէ օսմանեան տէրութեան ամբարներից՝ սրանց ճանապարհ ու տեղերը ռուներին ցոյց տալով*), — բացի այդ ամենից՝ այլ նաև տաճկահայ ժողովուրդը՝ կանոնաւոր խմբերով ու գնդերով զէն ի ձեռին՝ ռուսական զօրքերի հետ միասին՝ կռվում էր օսմանցիների, — իր տիրապետողի դէմ։

Եթէ այս ամենի վրայ աւելացնենք և այն, որ ռուսների յաղթութեամբ խրախուսւած և անփորձութեամբ կարծելով թէ այդ է ահա որ ազատւեցան օսմանցի իշխանութեան լծից՝ հայ ժողովուրդը, առաւելապէս տաք գլուխ երիտասարդութիւնը՝ նոյնիսկ Արզրումում սկսեց զանազան փողոցային ցոյցեր անել, մինչև իսկ տաճիկների կրօնական զգացմունքները վիրաւորելով, — այս ամէնից յետոյ, — ասում ենք մենք, շատ հասկանալի կը լինի թէ ռուս զօրքի յետ քաշւելուց յետոյ՝ տաճկահայ ժողովրդին ինչ վիճակ էր սպասում, թէ ինչ և քանի տեսակ վրէժխնդրութիւնների զոհ պիտի գնար նա, — նրա մի մասը։

Իրերի այս դրութիւնն էր ահա, որ տաճկահայ ժողովրդի հոգու և սրտի մէջ առաջացրեց զաղթելու անյաղթելի տրամադրութիւն, ջերմ փափագ ու ցանկութիւն։

Իսկական քաղաքականութեան ուղածն էլ հէնց այդ էր։

Պասկեվիչը դեռ 1828 թուականին, գրում էր մինիսարին թէ Ախալքալաքի կողմերում շատ պատուական հողեր կան, որոնք թէ ըստ կլիմայի և թէ ըստ միւս յատկութիւնների շատ յարմար են «հայ գաղթականներ բերելու և բնակեցնելու»։

Հէնց այս քաղաքական նպատակաւն էլ էր, որ Ադրիանոպոլի դաշնագրի մէջ յատուկ յօդուած էր մտցրած, որով երկու տէրութիւնների հպա-

*) Ջօրքին միս մատակարարող հայ կապալառուները ևս մեծ պտամբ լրտեսութիւն էլ էին անում։

տակներին իրաւունք էր տրվում մէկ ու կէս տարուայ ընթացքում, ըստ իրանց յօժար կամաց, կամ մնալ իրանց տեղերում և կամ գաղթել միւս տէրութեան երկիրը։

Նախ քան այս դաշնադրութեան կնքելը և նախ քան պատերազմի վերջանալը՝ տաճկահայ ժողովրդից շատ շատերը ուզում էին գաղթել Ռուսաստան, սակայն Պասկեվիչը ամենայն կերպով խրախուսում, խանգարում էր այդ. որովհետև քրիստոնեայ տարրի գաղթմամբ՝ ռուս զօրքերը այնուհետև ոչ միայն զրկվում էին նրանց մատուցած ծառայութիւնից, այլև շրջապատուած կը լինեին թշնամի տաճիկ ազգաբնակութեամբ և ետ։

Իսկ այժմ, երբ յարմար ժամը եկաւ, Պասկեվիչը ինքը առաջինն եղաւ գաղթականութեան հարցի առաջ մղողն ու պաշտպանողը, ի հարկէ ոչ յանուն քաղաքականութեան բացարձակապես, այլ յանուն կարեկցութեան, մարդասիրութեան իբրև թէ։

Ահա այն գրութիւնը, որով 1829 թ-ի հոկտեմբերի 10-ին, Պասկեվիչը գիմեց կայսեր։

ՄԲ.

«Այն խաղաղութիւնը, որ Զ. Կ. Մեծութիւնը բարեհաճել էք շնորհել Բարձրագոյն Դռանը՝ Ձեր օգոստափառ անունը օրհնութիւն բերեց այնքան միլիոնաւոր մարդկանց կողմից։ Բայց այստեղ, Ասիայում, ընդհանուր ուրախութեան մէջ՝ այդ բերկրութեան լուրը իրաւացի տրրամութեան մէջ ձգեց ժողովրդի այն մասը, որ արժանի է մեր կարեկցութեանը թէ իր շարունակ կրած տառապանքներով ու ռուսական զէնքի յաջողութեանը ցոյց տուած համակրանքով, և թէ նաև այն թշուառ ապագայով, որ նրան սպասում է, եթէ Զ. Կ. Մեծ. հզօր բազկի հովանաւորութեան ներքոյ նա չի գտնել ապահով ապաստան ընդդէմ այն հալածանքների, որ նրան սպասում են։ — Այս հեռաւոր երկիրներում, ուր քրիստոնէութիւնը յընթացս այնքան դարերի ճնշուած է անօրէն լծի տակ, Ձերդ Կ. Մեծութեան զօրքը վախ չունէր որևէ թշնամական ցոյցերից հայ և յոյն ազգաբնակութեան կողմից»։

«Եւ մինչդեռ այս պատերազմի ժամանակ ենթադրելու էր մեր կրօնակիցների մէջ լոկ անտարբեր զգացմունք, շնորհիւ մեր զօրքի օրինակելի վարքին, վեհանձնութեանը և քաղցր վարուեցողութեանը, մենք այդ կրօնակիցներին զրատանք մեզ զինակից և եռանդուն աջակից, և այնուհետև որքան որ տարածվում էր Ձերդ Մեծութեան զէնքի փառքը, այնքան աւելի շատանում էր այն գերդաստանների թիւը, որոնց թէ անձնական և թէ կալուածական ապահովութիւնն այդ պատճառաւ անհանգիստ էր դառնում»։

«Բայազէտում երկու հազար հայեր մեր զօրքերի հետ միասին պատերազմում էին։ Արզրումում քրիստոնեայ ազգաբնակութեան մեծագոյն մասը իր հովուապետի (Կարապետ եպիսկոպոսի) առաջ-

նորդութեամբ դիմաւորեց մեր զօրքերին։ Կարսում հայերից կազմուեցաւ մի վաշտ զորք և մինչև 800 հայ հեծելազունդը մեր սահմաններն էին պաշտպանում»։

«Այն գերդաստանների թիւը, որոց անխուսափելի վտանգ է սպառնում, մօտ 10,000-ի է հասնում։ Բարեհաճեցէք, ով ամենաողորմած թագաւոր, Ձեր կարեկցական ուշադրութիւնը դարձնելու այս դժբաղդ զոհերի վրայ և մի թողնէք, որ օսմանեան կամայականութիւնը վրէժխնդիր լինի նրանց՝ Ռուսիային ցոյց տուած նրանց համակրութեան համար։ Այս պատճառաւ վստահանում եմ խնդրել Ձ. Կ. Մեծութեան ամենաողորմած բարեհաճութիւնը, որպէսզի ինձ իրաւունք տրուի այդ գերդաստաններին տանել բնակեցնել Վրաստանում և Հայոց աշխարհում (Երևանի կողմերում). իսկ եթէ այդ երկիրները չբաւականանան, —Կովկասեան աշխարհում (Կովկասեան լեռների հիւսիսային կողմերում)։ Թէպէտ և այս ժողովրդի սկզբնական բնակութիւնը հաստատելու համար բաւականաչափ ծախս է հարկաւոր, բայց, անկասկած, յետոյ այդ ծախքը առատապէս կը փոխարինուի այն օգուտներով, որ սպասվում է այս աշխատասէր և գործունեայ համայնքից։ Ըստ իմ կարծեաց՝ գաղթողներին իբրև օժանդակութիւն բաւական կլինի միջին հաշուով 25 ռուբլի արծաթ ամեն մի գերդաստանին, որ կանէ 250 հազար ռուբլի արծաթ կամ մէկ միլիոն թղթադրամ ամբողջ գաղթականութեան համար։ Եթէ ներկայ առաջարկութիւնս կարժանանայ Ձ. Կ.

Մեծութեան բարձրագոյն հաստատութեան,—այն ժամանակ բարեհաճեցէք ինձ իրաւունք տալ՝ այս բարեգործական օժանդակութեան համար գործ դնել այն 100 հազար ոսկին, որ ինձ տրուած էր քրդերին մեր կողմը ձգելու համար և որից ընդդամենը ծախս է եղել 10 հազար ոսկի*)»։

ՄԳ.

Կոմս Զեռնիշովը նոյեմբերի 10-ին, պատասխանեց այս դրութեանը յայտնելով Պասկեվիչին, որ թագաւոր կայսրը նրա առաջարկութիւնը ընդունում և հաստատում է։

«Միայն,—աւելացնում է մինիստրը,—Նորին Մեծութիւնը Ձեր զեկուցումից նկատելով, որ վերոյիշեալ հայերից շատերը մասնակցել են զինուորական գործողութիւններին և իրանց քաջութեամբ ապացուցած են ինչպէս իրանց ջերմեռանդութիւնը, նոյնպէս և ընդունակութիւնը զինուորական ծառայութեան մէջ,—օգտաւէտ է համարում, որ այդպիսի հայերի մի մասը բնակուի Ախալցխայում և նրա շրջակայքում, ուր նրանցից մի վաշտ զորք կազմի մեր նոր սահմանը պաշտպանելու համար**)»։

Կայսեր բարեհաճութիւնը ստանալով Պասկեվիչը դեկտեմբերի 3-ին, Վրաստանի նահանգապետին հրամանագրեց, որ իր նախագահութեան ներքոյ Թիֆլիզում մի յանձնաժողով կազ-

*) Акты, VII, էջ. 830—818.

**) Նոյնը, VII, էջ. 831 № 819.

մէ՝ յանձնելով նրան գաղթականներին խնամելու և տեղաւորելու հոգը, համեմատ այն ընդհանուր հրահանգին, որ իր կողմից Պասկեվիչը ուղարկեց նահանգապետին*)։

Այդ հրահանգը իր բովանդակութեամբ գրեթէ նոյն է, ինչ որ մի տարի առաջ Պասկեվիչը տուած էր պարսկահայ գաղթականների համար։ Այստեղ էլ ասած է, որ ժողովրդին պէտք է գաղթեցնել խումբ-խումբ, բնակեցնել արքունի հողերում. լեռնային տեղերի գաղթականներին՝ բնակեցնել բարձր տեղերում, դաշտեցիներին՝ դաշտերում. որ գաղթականները 6 տարի արքունի հարկ վճարելուց ազատվում են և 3 տարի էլ՝ գօռ ու բեգեարից։

Գալով գաղթման պատճառին՝ Պասկեվիչը այդ պատճառը ևս յայտնեց Վրաստանի նահանգապետին՝ իր վերոյիշեալ հրամանագրի հետևեալ տողերով՝ «հաշտութեան լուրը ստանալով Տաճկաստանի հայերը ցանկանում են գաղթել մեր երկիրները և նրանցից շատերը այդ իրաւունքը խնդրում են որպէս առանձին ողորմութիւն՝ ռուսական տէրութիւնից առանց որևէ օժանդակութիւն պահանջելու»։

—«Հայերի այսպիսի մտահման անձնուիրութիւնը,—շարունակում է Պասկեվիչը,—որոնք պատերազմի ժամանակ բազմաթիւ փորձերով ցոյց տուին իրանց ջերմեռանդութիւնը դէպի ռուսաց գէնքի յաջողութիւնը, արժանի է որ նրանց վիճակին կարեկից լինինք և պաշտպանենք ապագայում նրանց սպառնացող մահմեդականների հալածանքներից և վրէժխնդրութիւնից։

*) Акты, VII, եր. 831, № 820.

«Բայց մի ժողովուրդ, որ իր մինչև այսօր կրած թշուառութիւնների փոխարէն մեր երկրում անդորրութիւն և բարօրութիւն է որոնում, տէրութեան առանձին հոգատարութիւնը իր վրայ պիտի դարձնէ, որպէսզի գաղթման նպատակը կատարելապէս իրագործուի, այսինքն՝ որ գաղթականները՝ իրանց նոր բնակավայրերում հաստատ բնակութիւն հաստատելով ամեն միջոց ունենան շուտով ծաղկեալ դրութեան հասնելու և օգուտ բերելու Ռուսիային, որ նրանց իր հովանաւորութեան ներքոյ է ընդունել»։

ՄԴ.

Մենք դիտենք, որ Պասկեվիչին կայսրը իրաւունք տուեց գաղթեցնել տաճկահայերին նոյեմբերի 10-ին։ Թուղթը Պասկեվիչը հազիւ նոյեմբերի վերջերին ստացաւ։ Բայց նախ քան այդ թոյլտուութեան ստացուիլը՝ ժողովուրդն ըսկսել էր շարժուել և նրանց սայլերը ձմռան բուք ու բորանին՝ Բասենի ճանապարհով արդէն դէպի Կարս էր ընթանում։

Թէ Կարապետ եպիսկոպոսը և թէ ազդեցիկ հայերը շատ աշխատեցան յետաձգել գաղթականութիւնը մինչև գարունը, որպէսզի թէ ճանապարհները բացուին և թէ հնար ու միջոց լինի

մէ՝ յանձնելով նրան գաղթականներին խնամելու և տեղաւորելու հոգը, համեմատ այն ընդհանուր հրահանգին, որ իր կողմից Պասկեվիչը ուղարկեց նահանգապետին*)։

Այդ հրահանգը իր բովանդակութեամբ գրեթէ նոյն է, ինչ որ մի տարի առաջ Պասկեվիչը տուած էր պարսկահայ գաղթականների համար։ Այստեղ էլ ասուած է, որ ժողովրդին պէտք է գաղթեցնել խումբ-խումբ, բնակեցնել արքունի հողերում. լեռնային տեղերի գաղթականներին՝ բնակեցնել բարձր տեղերում, դաշտեցիներին՝ դաշտերում. որ գաղթականները 6 տարի արքունի հարկ վճարելուց ազատուում են և 3 տարի էլ՝ գօռ ու բեգեարից։

Գալով գաղթման պատճառին՝ Պասկեվիչը այդ պատճառը ևս յայտնեց Վրաստանի նահանգապետին՝ իր վերոյիշեալ հրամանագրի հետևեալ տողերով՝ «հաշտութեան լուրը ստանալով Տաճկաստանի հայերը ցանկանում են գաղթել մեր երկիրները և նրանցից շատերը այդ իրաւունքը խնդրում են որպէս առանձին ողորմութիւն՝ ռուսական տէրութիւնից առանց որևէ օժանդակութիւն պահանջելու»։

—«Հայերի այսպիսի անսահման անձնուիրութիւնը,—շարունակում է Պասկեվիչը,—որոնք պատերազմի ժամանակ բազմաթիւ փորձերով ցոյց տուին իրանց ջերմեռանդութիւնը դէպի ռուսաց գէնքի յաջողութիւնը, արժանի է որ նրանց վիճակին կարեկից լինինք և պաշտպանենք ապագայում նրանց սպառնացող մահմեդականների հալածանքներից և վրէժխնդրութիւնից։

«Բայց մի ժողովուրդ, որ իր մինչև այսօր կրած թշուառութիւնների փոխարէն մեր երկրում անդորրութիւն և բարօրութիւն է որոնում, տէրութեան առանձին հոգատարութիւնը իր վրայ պիտի դարձնէ, որպէսզի գաղթման նպատակը կատարելապէս իրագործուի, այսինքն՝ որ գաղթականները՝ իրանց նոր բնակավայրերում հաստատ բնակութիւն հաստատելով ամեն միջոց ունենան շուտով ծաղկեալ դրութեան հասնելու և օգուտ բերելու Ռուսիային, որ նրանց իր հովանաւորութեան ներքոյ է ընդունել»։

ՄԴ.

Մենք դիտենք, որ Պասկեվիչին կայսրը իրաւունք աւեց գաղթեցնել տաճկահայերին նոյեմբերի 10-ին։ Թուղթը Պասկեվիչը հոգիս նոյեմբերի վերջերին ստացաւ։ Բայց նախ քան այդ թոյլտուութեան ստացիլը՝ ժողովուրդն ըսկսել էր շարժուել և նրանց սայլերը ձմռան բուք ու բորանին՝ Բասենի ճանապարհով արդէն դէպի Կարս էր ընթանում։

Թէ Կարապետ եպիսկոպոսը և թէ ազդեցիկ հայերը շատ աշխատեցան յետաձգել գաղթականութիւնը մինչև գարունք, որպէսզի թէ ճանապարհները բացուին և թէ հնար ու միջոց լինի

*) Акты, VII, եր. 831, № 820.

կալուածները ծախել—ինչպէս որ դաշնագիրը նախատեսել էր,—ու ամենաանհրաժեշտ կարասին ու պիտոյքները հետները վերցնել, սակայն ժողովրդի մի մասը չլսեց և սնմիջապէս ճամբայ ելաւ։ Դրանք Կարսի և Բայազէթի հայերն էին գլխաւորապէս։

Սակայն գաղթականների մեծ հոսանք պիտի սկսէր առաջիկայ գարնանը (1830 թ.)։

Պասկեվիչը սկզբում գաղթողների թիւը 8000 գերդաստուն էր հաշվում, սակայն վերջերում այդ թիւը մինչև 14,000 գերդաստանի հասաւ։

Այսպէս՝ Արզրումի փաշայութիւնից

գաղթեցին . . .	7298	գերդ.
Արդահանից . . .	67	„
Կարսի փաշայութիւնից . .	2467	„
Բայազէթի փաշայութիւնից .	4216	„

Ընդամենը 14,044 գերդ.

կամ մօտ 90,000 հոգի՝ հաշուելով մէն մի գերդաստունը, միջին թւով, 6 անդամից բաղկացած։

Բոլոր գաղթականութիւնը բաժանւում էր երեք մեծ խմբերի—Արզրումցիք, Կարսեցիք և Բայազէթցիք։

Նախքան ժողովրդի գաղթելը՝ ճիշտ է՝ Սուլթան Մահմուդը հրովարտակ արձակեց յատկապէս հայերի համար, համոզելով որ չգաղթեն։

Նա նրանց բարիքներ էր խոստանում։ Պոլսոյ Հայոց պատրիարքարանը ևս մի յատուկ մարդ,—Բարդուղիմէոս եպիսկոպոսին,—ուղարկեց, որ հասկացնէ ժողովրդին թէ որքան վնասակար և ազգագործան քայլ են անում նրանք փոխելով իրանց ներկայ դրութիւնը՝ անյայտ ապագայի հետ։ Սակայն այդ ամենը ոչինչ չօգնեց։

Այդ ահագին բազմութեան գաղթմամբ բնական է, որ նրանց թողած քաղաքներն ու գիւղերը ամայացան, արհեստներն ու վաճառականութիւնը կանգ առաւ, երկրի մշակութիւնը դադրեցաւ և, ինչպէս մասնաւոր կալուածատէրերի, նոյնպէս և արքունիքի եկամուտը ընդհատուեցաւ. և անշուշտ այս ամեն չարիքի առաջն առնելու նպատակով էր, որ Սուլթան Մահմուդը հրովարտակ արձակեց հայերի գաղթը խափանելու, բայց արդէն ուշ էր։

Մե.

Գաղթականների սաւարութիւնը, նրա խնամելու անհրաժեշտութիւնը ի նկատի առնելով Պասկեվիչը 1831 թ. մարտի 26-ին մի յայտարարութեամբ*) նորից դիմեց կայսեր գրելով՝ «Սկզբում սպասում էինք միմիայն 8000 գերդաստունի, բայց երբոր, համաձայն դաշնագրութեան, ռուսաց զօրքերը սկսեցին դուրս գալ մեր նուաճած երկիրներից՝ այն ժամանակ յոյները և գրեթէ բոլոր հայերը զարմանալի զոհողութեամբ՝ թողնելով իրանց տները և կալուածքները, թողնելով ամեն բան, ինչոր միայն կապում էր նրանց իրանց ծննդավայրի հետ, եկան

*) Акты, VII, եր. 845, № 829.

իրանց գերդաստաններով մեր զօրքերի յետևից։ Տասնեւչորս հազար գերդաստանից աւելի որ մօտ 90,000 հոգի են կազմում, դիմեցին Ձեր պաշտպանութեանը, ամենաողորմած թագաւոր։ Գրեթէ բոլոր առևտրականները և արհեստաւորները, ինչպէս նաև գիւղացիների մեծ մասը, թողին Արզրումի և Կարսի փաշայութիւնները. նրանց հետ եկան և երկու հայ արքեպիսկոպոսներ, որոնք մեծ ազդեցութիւն ունին ժողովրդի վրայ։ Բայազէթը բոլորովին ամայացաւ։ Գաղթականների այդ ահագին քանակութիւնը, որ մեր սահմանն անցաւ ոչ մաս առ մաս առանձին խմբերով, այլ բոլորը միասին ռուսաց զօրքերի դուրս գալու ժամանակ, տէրութեան կողմից մեծ ջանք և հոգատարութիւն է պահանջում, որպէսզի նրանց ազատ պահէ մահաբեր սովից և վերջնական կորստից։ Քրիստոնեաների ամենանշանաւոր գաղթը կատարուեցաւ արդէն յուլիս ամսում, որովհետև քանի որ Ճաճկաստանում մեր վարչութիւնն էր և զօրքը, ոչ մի բան չէր կարող ստիպել նրանց թողնել իրանց հայրենիքը։ Այդպէս ահա նրանք չկարողացան հունձը ժողովել, իսկ այստեղ էլ ցանքի ժամանակը բաց թողին և տէրութիւնը չկամենալով նրանց սովամահ անել, պարտաւոր է նրանց կերակրել մի ամբողջ տարի մինչ եկող հունձը, որի համար՝ տեղւոյս հացի պակասութեան պատճառաւ՝ նշանաւոր գումար է պէտք։

Հեռաւոր ճանապարհի դժուարութիւնները

կրելով, զոհելով այնտեղ իրանց ունեցածը, շատերն էլ քանիցս քրդերից թալանուելով,—այս բոլորը Արզրումի գաղթականներին յետին խեղճութեան է մատնել և նրանց միայնակ յոյսը՝ մնացել է ռուսաց տէրութեան ողորմութեան վրայ»։

Յայտնելով կայսեր, որ սկզբում նշանակուած 90 հազար ոսկին արդէն ծախսուել է և կարևոր է դարձեալ 380,000 ռուբլի, Պասկեվիչը շարունակում է՝ «գաղթականները աշխատասէր են և ընդունակ իրանց ապրուստը հայթայթելու։ Այս ժողովուրդը, որից ցաւօք սրտի զրկուեց Ցաճկաստանը, պէտք ունի հէնց սկզբում օգնութեան և ապահովութեան գոնէ ամենակարևոր բաների։ Յետոյ, անտարակոյս, նրանք ամեն ինչ աւելորդով կը փոխարինեն։ Իրանք գաղթականները խնդրում են, որ հիմա միայն նպաստ տրուի իրանց, խոստանալով վերադարձնել այդ գումարը գանձարանին աւելի առաջ, քան թէ ցանկանում է տէրութիւնը։ Անուշադիր թողնել գաղթականների կարիքները, իմ կարծիքով, անկարելի է, ապա թէ ոչ ի զուր կանցնին մինչև այժմ մեր արած ծախսերը և հոգատարութիւնը նրանց վրայ։ Տէր արքայ, բարելաւելով գաղթականների վիճակը, հաստատուն կանէք նրանց ընակութիւնը և օգտաւէտ տէրութեան համար։ Ես կարևոր եմ համարում այսպիսով աւելացնել գաղթականների վրայ մեր հոգատարութիւնը, որպէսզի

վառ պահենք ռուսական տէրութեան այն շահաւէտ ազդեցութիւնը, որ ունեցանք Ասիական Տաճկաստանում և որի շնորհիւ մի ամբողջ ժողովուրդ գաղթեց մեր երկիրը»։

ՄԶ.

Յարգելով Պասկեվիչի այս միջնորդութիւնը ևս կայսրը բարեհաճեցաւ նրա անօրէնութեանը յատկացնել խնդրուած 380 հազար ռուբլին, վասն զի «Ես բոլորովին վստահ եմ, —գրում է կայսրը կոմսին—որ ձեզ յանձնուած երկրի մէջ այդքան նշանաւոր թւով աւելացած ժողովուրդը պարտական կը լինի ձեր այն խելացի կարգադրութիւններին, որոց նպատակն է հաստատուն անել նրանց (գաղթականների) բնակութիւնը յօդուտ մեր կայսերութեան»*)։

Շնորհիւ այս և նախընթաց դրամական նպաստներին, շնորհիւ և այն հոգատարութեանը, որ ունեցաւ Պասկեվիչի կազմած յանձնաժողովը՝ Տաճկահայ գաղթականները համեմատաբար քիչ ենթարկուեցան այն աղէտներին և տառապանքներին, որոց որ պարսկահայ գաղթականներն էին ենթարկուել երկու տարի առաջ։

Ի վերայ այսր ամենայնի տաճկահայերը ևս դերծ չմնացին այն նեղութիւն ու տանջանքներից, որոնք, սակայն, անխուսափելի են այսպիսի շտապ և մեծ գաղթականութիւնների ժամանակ ընդհանրապէս։

*) Акты, VII, եր. 847, № 832.

Այդ նեղութիւնների մէջ՝ ամենից շատ աչքի էր ընկնում այն, որի մէջ ընկան գաղթականները իրանց բնակութեան տեղի վերաբերութեամբ։

Մենք տեսանք որ գաղթականների բնակութիւնը պէտք է հաստատուէր՝ ըստ հրահանգի և հրամանի Պասկեվիչին՝ արքունի հողերի վրայ։

Բայց թէ որոնք և որքան էին այդպիսի հողերը՝ ոչ ոք հաստատ ոչինչ չգիտէր։

Ռուսաց տեղական իշխանաւորները արքունական էին համարել և ընդունել այն ամեն տաճիկների և լեռնականների հողերը, որոնք կամ ինքնաբերաբար, կամ օսմանեան կառավարութեան դրդմամբ, ռուսների ձեռքն անցած երկիրներից գաղթեցին Տաճկահայաստան՝ հայերի բաց թողած տեղերը գրաւելու։

Այդ մահմեդական գաղթականների թիւը, ճիշտ է, տաճկահայ գաղթականների թւին չէր հասնում,— այնուամենայնիւ՝ նրանց թողած հողերը բաւականութիւն կուտային տաճկահայ նորեկ գաղթականներին, եթէ որ, յիրաւի, այդ հողերը արքունի դարձած լինէին, ինչպէս որ հաւատացած էին ռուսաց տեղական իշխանաւորները։

Մինչդեռ բանից դուրս եկաւ որ մահմեդական գաղթականներից՝ ոմանք դեռ պատերազմի տևողութեան միջոցին, շտապել և արդէն իրանց հողերը ծախել են մասնաւոր, տեղացի անհատների վրայ, շատերն էլ, նախապէս

գիտնալով, որ եթէ իրանք պատերազմից յետոյ էլ գաղթել կամենան, — հաշտութեան դաշնագրի տրամադրութեամբ, իրանց կալուածքները, որոշեալ ժամանակամիջոցում, վաճառելու իրաւունք կունենան, — երկայնմտութեամբ համբերել էին պատերազմի վերջանալուն և հաշտութիւնը կնքելուն։

Եւ երբ այդ տեղի ունեցաւ՝ սկսեցին այնուհետև հետզհետէ՝ իրանց կալուածքները ձեռքից հանել։ Իսկ գնողներ էլ շատ գտնուեցան, հարկաւ, այն յուսով, որ Տաճկաստանից գաղթող հայերին տան ի շահեցողութիւն և ի մշակումն։

Զարմանալին և ուշագրաւ կէտը ներկայ պարագայում այն է, որ Ախալցխայի շրջանի կառավարիչ գնդապետ Դրէշէրնը, օրինակի համար, մի կողմից գաղթականական յանձնաժողովին ցուցակ էր ուղարկում թէ Ախալցխայում այսքան ու այս ինչ արքունի ազատ հողերը կան, որոց տէրերը Տաճկաստան էին գաղթել և այլևս յետ դառնալու չեն, միւս կողմից այդ հողերի նախկին տէրերի անձնական ներկայութեամբ կամ նրանց հաւատարմութիւններով տեղի ունեցած վաճառքների թղթերն էր հաստատում և վաւերացնում։

Մի.

Գաղթականական յանձնաժողովը՝ հիմնուելով

Դրէշէրնի նախկին գրութիւնների վրայ, հիմնուելով նրա ներկայացրած իբր թէ արքունի, ազատ հողերի ցուցակների վրա, — գաղթականների մի մեծ խումբ Ախալցխա ուղարկեց, թուով 1600 գերդաստան։ Դրէշէրնը իսկոյն նրանց տեղափոխեց իր և յանձնաժողովի մատնաշած հողերի վրայ։ Եւ գաղթականները, ի շնորհս կառավարութեան կողմից իրանց տրուած նպաստներին թէ դրամով, թէ նիւթերով, ատաղձներով, ձեռաց սկսեցին իրանց համար բնակարաններ շինել, արհեստանոցներ հիմնել, իրանց համար տնտեսութիւն կազմել, իրանց տրուած արքունի, ազատ հողերը վարել, ցանել։

Բայց ահա հետզհետէ, մէկմէկու ետքից, կարծես նախամտածուած ծրագրով, այդ հողերի իսկական տէրերը լոյս են ընկնում և գնդապետ Դրէշէրնին ցոյց տալով նրա իսկ ձեռքով վաւերացրած կալուածագրերը՝ պահանջում են, որ նա, — Դրէշէրն իշխանաւորը, — կամ նորեկ գաղթականներին դուրս հանէ իրանց պատկանեալ տեղերից և կամ նրանց պարտաւորեցնէ սահմանեալ հարկն ու տուրքը վճարելու կալուածատէրերին։

Օրինապահ իշխանաւորը զիմում է գաղթականներին և սիրում է անշուշտ բաւականութիւն տալ կալուածատէրերի զէթ երկրորդ և աւելի արդարամիտ օրինական պահանջին։

Գաղթականները մերժում են՝ յայտնելով որ կայսերական խոստման համաձայն՝ նրանք 6 տա-

րի արքունի հարկերից և 3 տարի զօր ու բեռներից ազատ պէտք է լինին։

—Բայց այդ այն ժամանակ, երբ դուք արքունի հողերում բնակուէիք, այլ ոչ մասնաւոր կալուածատէրերի, աղաղակում էր Դրէշէրնը։

—Բայց չէ՞ որ դուք ինքներդ էիք, որ մեզ բնակեցրիք այս տեղերում, իբրև արքունի, ազատ հողերում,—պնդում էին գաղթականները։

Բայց ինչ արած, որ տէրերը լոյս ընկան և վաճառեցին ուրիշների վրայ։

—Եւ վաճառման թղթերն դուք ինքներդ էիք հաստատում, երբ մենք արդէն տեղաւորուել պրծել էինք այստեղերում, ձեր իսկ ցուցմամբ։

—Հաշտութեան դաշնագրի զօրութեամբ ես պարտաւոր էի հաստատել այդ վաճառման թղթերը։

Վերջ ի վերջոյ գաղթականական յանձնաժողովը միջամտեցաւ այս վէճին և հետևեալ հաշտարար միջոցն առաջարկեց։

Եթէ գաղթականները կամենում են մասնաւոր կալուածատէրերի հողերի վրայ մնալ,—պարտաւոր են նրանց հատուցանել սահմանեալ հարկ ու տուրքը։ Կալուածատէրերն էլ, իրանց հերթում, պարտաւոր են վերադարձնել արքունիքին այն նպաստները, որ դանձարանը մինչև այսօր տուել է այդ գաղթականներին։

Այս հաշտարար միջոցը չընդունեցին ոչ գաղթականները, ոչ էլ կալուածատէրերը, որոնք և այնուհետև սկսեցին պահանջել, որ գաղթա-

կանները հեռացնուին իրանց հողերից՝ առանց որևէ պահանջ անելու՝ իրանց կերաւածքների ու մշակածների համար։

Հարկ եղաւ Պասկեվիչի միջամտութեանը։ Եւ նա միջամտեց։

Նախապէս Կայսեր հաճութիւնն ստանալով՝ Պասկեվիչը կարգադրեց, գաղթականներով լցած կալուածքները տէրերից գնելով՝ արքունի կալուածք դարձնել, որոց մէջ, ուրեմն, գաղթականները կմնան, իբրև արքունի հողերում և կօգտուին այն արտօնութիւններով, ինչ որ կայսեր կողմից նրանց խոստացուած է,—այն է 6 տարի զօր ու բեռներից ազատ մնալ։

Գալով կալուածատէրերին, որ դանձարանը տալու էր կալուածատէրերին, Պասկեվիչը որոշեց կրկնապատիկը այն գներին, որով նրանք գնել էին գաղթող, նախկին տէրերից։

Այսպէս ահա վերջացան գաղթականների գոնէ այս կարգի նեղութիւններն և նրանք վերջնականապէս հաստատուեցան՝ Արզրումցիներն՝ Ախալցխա և Ախալքալակ քաղաքներում և նրանց շրջակայքում*)։

Կարսեցիները՝ Դիւմրիում (յետոյ Ալէքսանդրապոլ) Արագածի լանջերում, Ապարան և մինչև Թալին։

Բայազէթցիները՝ Սևանայ լճի ափերում, Ծաղկոցաձորում (Դարաչիչաք) և մասամբ Սուրմալիում։

*) Այս ամենի մասին տես Акты, VII, եր. 846, № 852.

Արզրումի հայերի թւում կային մի քանի հարիւր տուն կաթոլիկ հայեր, որոնք գետեղւեցան մասամբ Ախալցխայում, մասամբ էլ Լօռւայ և Շիրակայ կողմերում։

Գալով Արզրումի յոյներին, նրանք էլ հաստատւեցան մասամբ Գիւմրիում և մասամբ Ծալկայի գիւղերում։

Սոյն այս տաճկահայ գաղթականներն էին, որ կառուցին Նոր-Բայազէթ, Ալէքսանդրապոլ և Ախալցխա քաղաքները։ Վերջին քաղաքը ի հնուց կար։ Գաղթական Արզրումցիք կառուցին նրա նոր քաղաքամասը, զուտ հայաբնակ, Փոցխով գետի աջ ափին, Փոցխով և Կուր գետերի խառնարանից քիչ բարձր։

Արզրումցի գաղթականների հոգեոր առաջնորդն էր Կարապետ արքեպիսկոպոս Բաղրատունեանը, Կարսեցիների և Բայազէթցիներինը՝ Ստեփան արքեպիսկոպոս Խաժակեանը։ Հայ կաթոլիկներինը՝ Եփրեմ վարդապետը։

ՄԸ.

Ձանց ենք տանում նկարագրել միւս այն բազմաղիմի նեղութիւններն ու զոհողութիւնները, որոց ստիպւեցան տանել գաղթականները իրանց նոր հայրենիքի օդի, ջրի և այլ և այլ բնական պատահար ու հարւածների երեսից։

Այդ ամենը սպասելի էր։ Եւ կառավարութիւնը գաղթականների այդ կարգի նեղութիւնները թեթևացընելու համար անում էր՝ ինչ որ

կարող էր և ձեռնհաս անելու։ Արդէն ասել ենք, որ այդ կողմից տաճկահայ գաղթականները շատ բաղդաւոր դուրս եկան պարսկահայ գաղթականների համեմատութեամբ։

Սակայն մի բան, որ յատուկ էր և ընդհանուր ոչ միայն պարսկահայ և տաճկահայ գաղթականներին, այլ նաև Անդրկովկասի բոլոր ազգերին անխտիր,—դա այն յոռի ու վատթար կառավարութիւնն էր, որով կառավարվում էին այդ ազգերը ռուսական արծի հովանուցն ներքոյ, տասնեվեցներորդ դարու հէնց սկիզբից ի վեր։

Ահա այդ կառավարութեան թռուցիկ նկարը, որ երևում է ռուսական պաշտօնական զեկուցմունքներում դեռ ևս Պասկևիչի օրերում, նրա սպարապետութեան ժամանակ։ «Ղազախի և Ճեացած բոլոր գաւառների,— գրում է քննիչ Զավելիևսկին, — գիւղացիներն ևս անխտիր միմիայն ըստ արտաքին ձևին են ազատ, այն ինչ ի մօտոյ քննելով անկարելի է չտեսնել, որ նրանք առնեանդառն ստրկութեան մէջ են գտնվում աղաշարների եւ մեղիմների ձեռքին»։

«Մանաւանդ զարմացքի արժանի է, որ հայերը, ճշմարտապէս հաւատարիմ լինելով տէր-ուրեանը և ամենից շատ հակուած լինելով դէպի արհեստները, երկրագործութիւնն ու առևտուրը և վերջապէս կազմելով ամենաստգտաւէտ եւ գործունեայ տարրը այստեղի ժողովրդի մէջ, ստրուկ են թուրք ապստամբ աղաշարների ձեռքում, ո-

ռոնի թալանում են նրանց եւ թողորովին աւերում միմիայն նրանց առ ռուսաց գահն ունեցած ջերմեռանդութեան համար»։

«Ոչ մի տեղ, —շարունակում է Զավիլիսկին, —բացի Վրաստանից, Պարսկաստանից, Տաճկաստանից, Եգիպտոսից և Աֆրիկեան աշխարհներից, —քրիստոնեաները այս ասիական ստրկութեան մեջ չեն զտնում մահմեդականների ձեռքին»։

ՄԹ.

Ահա և մի այլ քննչի,—ընթերցողներին յայտնի Զո բարօվի*) մի այլ նկարագիրը։

«Առհասարակ Ղարաբաղում՝ մահմեդների նայիբները ճնշում են ժողովրդին և մեծ անկարգութիւններ են անում, բայց վարանդինու մահալի նայիբ պրապօրշչիկ Խուդադը՝ գերազանցեց ամէնքին։ Ինքը լինելով անբարոյական և հարբեցող՝ շրջում է գիւղերը շրջապատուած հարբեցող և յանդուգն ծառաներով և առանց որ և է պատճառի սաստիկ գանակոծում է բնակիչներին։ Նոյնը անում են նա և նրա միրզան (գրագիր) և ծառաները։ Միանգամայն առանց որ և է իրաւունքի նա ժողովում է արքունի գիւղերի բնակիչներից՝ ամէն մի դրամից և ամէն մի չութից մի մի սոմառ ցորեն, առնում է դրամական տուգանք, առնում է կաշառք։—Նոյնը զործում է և նրա միրզա՝ Ասլի-Բարան՝ գիւղացի-

*) Տես պրակ երրդ, եր. 259—261.

ներից ամէն տարի իրան համար 60 սոմառ հաց ժողովելով»։

«Ես ինքս,—գրում է Զուբարեօվը,—ականատես եղայ Մելիք Խուդադի հետեւեալ արարքին։ Երբ ես շրջում էի Վարանդինու մահալը՝ Կաղարծի արքունի գիւղում մօտս եկաւ Մելիք Խուդադը՝ ըստ իւր սովորութեան՝ հարբած։ Այդ միջոցին մի հայ մտադիր էր պակւելու նոյն գիւղացի մի այրի կնոջ հետ և որովհետև մէջտեղում ոչ մի օրինաւոր արգելք չկար, վասն որոյ նրանք պատրաստուեցան նոյն գիշերն և եթ ամուսնանալու։ Այս իմանալով Խուդադը՝ արգելեց քահանային պսակի խորհուրդը կատարելու և իմ ներկայութեամբ՝ փեսայացուից 20 ոսկի էր պահանջում։ Բացի այդ հարսնացուին իւր մօտ կանչելով՝ նրան զազրալի առաջարկութիւններ արաւ»։

«Իրաւունք չունենալով հրամայելու նրան որ իւր անկարգութիւններին վերջ դնէ՝ ես ըսկսեցի խնդրել նրան և մեծ դժուարութեամբ կարողացայ համոզել, որ պսակաղրութիւնը չարգելէ։ Վերջապէս քահանան իրաւունք ստանալով եկեղեցի գնաց պսակի խորհուրդը կատարելու։ Հետաքրքրութիւնից շարժուած՝ ես էլ հետեւեցի նրան։ Հազիւ արքազան խորհուրդն սկսուած էր, անհս հարբած Խուդադը եկեղեցի մտաւ եւ ըսկսեց գոռգոռալ եւ ամենաանվայելուչ բառերով յիշոցներ տալ թէ՛ քահանային եւ թէ՛ պսակողներին։ Վերջապէս հրամայեց քահանային պսա-

կը շուտով՞ վերջացնել, որովհետև հարսին նա իր մոs է տանելու։

Մի կերպ համոզելով՝ ես նրան հեռացրի եկեղեցուց. ինքս էլ բնակարանս գնացի։ Բայց ահա գիւղից շփոթի և աղաղակի ձայներ եմ լսում։

Պատճառն իմանալու համար՝ մարդ ուղարկեցի, որ յետ գալով պատմեց թէ՝ Մելիք Խուդադը մի պատուաւոր գիւղացուց,—Բէլիխուդայից պահանջել է իւր հրացանը նրան ընծայելու, բայց քեթխուդան բացասել է. դրա համար էլ Խուդադը սկսել է փայտով ջարդել, թակել քէթխուդային։

Հետևեալ օրը ես միւս գիւղերը գնացի։ Իսկ Խուդադը Կաղարծի գիւղում երկու օր հաբեցողութիւն անելուց յետոյ՝ մեկնել է միւս գիւղերը և ամէն տեղ առանց պատճառի սատակապէս գանակոծել է բնակիչներին և,—ինչպէս ինձ պատմեցին, Ամիշլան գիւղում բռնաբարել է. նաև մի հայ կնոջ»։

«Վարանդինու բնակիչները բազմաթիւ խնդիրներ են մատուցել տեղական իշխանութեանը, բայց բաւարարութիւն չեն ստացել, որովհետև Մելիք Խուդադը՝ ազգակցական նշանաւոր կապերի շնորհիւ՝ օրէնքի չէ ենթարկուում։ Բնակիչները միաբերան ասում են, որ եթէ իշխանութիւնը այս նայիբից նրանց չ՚ազատէ,—նրանք ստիպուած կը լինեն գաղթելու այստեղից։

Իմ գրածիս ճշմարտութիւնը կը հաստատեն

բնակիչները, եթէ քննութիւն բացուի, միայն թէ քննիչը Շուշայ պաշտօնեաներից չլինի և քննութիւն կատարելու պատճառաւ՝ Մելիք Խուդադը՝ պաշտօնից հեռացնի*)»։

ՄԺ.

Ռուս քննիչի այս արդարացի տողերի վրայ պէտք է աւելացնել և այն, որ իրանց հերթում, ինչպէս մահմեդականները, նոյնպէս և Անդրկովկասի բոլոր միւս ազգերը՝ ամենադառն սարկութեան մէջ էին գտնվում ռուս բիւրօկրատիայի ձեռքին՝ կառավարչապետներից սկսած մինչև յետին պաշտօնեան։ Որովհետև, ինչպէս 1830 թուականում կատարուած սենատական քննութիւնից երևաց**) ռուսների 30 տարեայ տիրապետութիւնից յետոյ էլ՝ Անդրկովկասը տակաւին կատարելապէս իր վրայ էր կրում նախկին իշխողների անհաշիւ, անսանձ, կամայական և ստորոշ ձևի կառավարութեան դրոշմը։

Ամեն տեղ կառավարութեան այլ և այլ ձևեր, ամեն տեղ իշխանաւորների պարտքերի և իրաւունքների անորոշութիւն, օրէնքի բացակայութիւն։

Մի տեղ ռուսական օրէնքը խառն տեղական օրէնքի և կառավարութեան հետ, մի այլ տեղ ոչ այս և ոչ այն, այլ լի ու լի, ամենակատարեալ կամայականութիւն։

*) Ամենայն հայոց կաթող. հատ. Ա. եր. 342—344։

**) Акты, VII, եր. 1—13, № 1.

Կայսերական հրամանները ոչ թէ միայն անգործադիր էին թողնվում, այլ բոլորովին նրանց հակառակ կարգադրութիւններ էին լինում։ Այնպիսի իշխանութիւններ և պաշտօնէութիւններ էին սահմանվում և պաշտօնեաներ էին կարգվում, որոնց միմիայն կայսրը կարող էր սահմանել ու կարգել։ Արքունի կալուածների ոչ տեղն էին իմանում, ոչ չափը և ոչ էլ արժէքը։ Կաշառակերութիւնը իր գագաթնակէտին էր հասել։

Արքունի վրացական էքսպեդիցիա կոչած բարձր դատարանը 25 տարուայ ընթացքում 220,607,225 ռուբլի էր ծախսել ինքնագլուխ, առանց ում և ինչ հաշիւ տալու, առանց որևէ հսկողութեան ենթարկվելու։

Թիֆլիզի զինուորական նահանգապետ Սիպեագինը՝ ինքնակամ 176,504 ռ. էր ծախսել, վատնել։ Այդ գումարի մէջն էր և այն 22,776 ռուբլին, որ այլ և այլ բարեգործ անձինք նահանգապետին էին յանձնել Աստուածահաճոյ նպատակների վրայ գործադրելու համար։

Ժողովրդական տուրքերը բազմազան էին և անթիւ։ Ժողովուրդը տուրք էր վճարում ամեն մի տեսակ առևտրի և արհեստի համար։ Հարկից ազատ չէին նոյնիսկ կենսական մթերքները։ Ժողովուրդը հարկ կամ մաքս էր վճարում ոչ միայն տերութեանը, այլ և այն կալուածատիրոջը, որի կալուածքի միջով տէրը իր ապրանքը ծախելու էր տանում մի այլ տեղ։

Բեգեառների համար գանձարանից գիւղացիներին հատանելի դրամը շատ անգամ իշխանաւորների գրպանն էր մտնում։ Բեգեառների ժամանակ գիւղացիներին այնքան հեռաւոր ճանապարհներ էին քշում, որ խեղճերի կենդանիները ճանապարհին երբեմն սատկում, վայր էին ընկնում։ Եւ այդպիսի դէպքերում փոխանակ թշառ գիւղացուն ազատ թողնելու՝ ստիպում էին իր հաշւով նոր կենդանիներ գնել և արքունի բեռը տանել տեղ հասցնել։

Արքունի հարկերի հաւաքումը մասնաւոր մարդկանց էր յանձնվում, որոնք իրանց հաւաքած դրամները տեղական իշխանաւորների հետ բաժին էին անում։ Իսկ պաշտօնական մատեաններումը՝ այդ գումարները հաշւում էին ժողովրդի վրայ ապատիկ և շատ անգամ ստացվում կրկին անգամ և, ի հարկէ, բռնութեամբ։

Անդրկովկասեան աշխարհի տեղական իշխանաւորները ոչ թէ օրէնքի պահպանման, այլ օրէնքի խանգարման, նրա ոտնահարման տիպարներ էին, գողերին բռնելիս՝ նրանք գողացած փողերն ու իրերն նրանց ձեռքից առնելով իրանց էին սեպհականեցնում։ Նոյնիսկ գողերին և աւազակներին հովանաւորում էին, որպէսզի կրկին և կրկին շահուեն նրանցով։

Աշխարհագիր եղած չէր։

Ժողովրդեան ճիշտ թուի ցուցակներ չկային։ Ուստի և պետական պաշտօնեաները, երկար տարիների ընթացքում իրանց գրպանն էին դնում այն հարկերը, որ իրանք ցուցակներից դուրս

մնացած ժողովրդականներից էին ստանում։

Երմոլով կառավարչապետը թրքաբնակ և հայաբնակ վայրերի համար մի տեսակ դատարան էր հիմնել բաղկացած 4 թուրքից կամ հայից։ Դատարանի նախագահը միշտ մի զինուորական սպայ էր լինում, որ կամենդանտ էր կոչվում։

Այս դատարաններն,—աւելի ճիշտը ի դէմս այս դատարանների կամենդանտները, ամեն մի գործի նախնական քննութիւնը իրանք էին կատարում, յետոյ իրանք էին դատաստան տեսնում կամ դատում, վճռում և իրանք իրանց վճիռը ի կատար ածում, գործադրում։ Բողոքելու (аппеляція) իրաւունք չկար։ Դատարանների միւս անդամների պարտականութիւնը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ անտարտունջ և անպայման հնազանդել իրանց նախագահի կարգադրութիւններին։ Ի հակառակ դէպս՝ նախագահը նրանց ևս պատժում էր։

Կամենդանտը ոչ թէ ժողովրդի, այլ նաև դատաւորների աչքում այն էր, ինչ որ մի ժամանակ պարսիկ խանը, տաճիկ փաշան, սատրապը։ Որովհետև դատաւորները մեծ մասամբ անգրագէտ մարդիկ էին լինում, ուստի երբ նրանք մի գործի համար դատարան էին հրաւիրւում, դատելուց առաջ՝ մի բերր ապիտակ թղթի վրայ դնում էին իրանց կնիքները և յետոյ դատավարութեանը ներկայ լինում։ Նրանց գնալուց յետոյ՝ կամենդատը կնքած, սպիտակ թղթի վրայ յետոյ գրում էր դատարանի վճիռը։

Այսպէս ուրեմն՝ յաճախ միմիայն պօրուչիկի աստիճան ունեցող կամենդանտից էր կախուած ժողովրդի իրաւունքը՝ նրա կայքը՝ նրա պատիւը*)։

ՄԺԱ.

Եւ այս դրութիւնը Անդրկովկասում տիրում էր ոչ թէ մի երկու տարի, այլ տասնեկաւոր տարիներ։—Մի տեղական քննութեան հետևում էր մի ուրիշը, մի սենատորական քննութեան հետևում էր մի ուրիշը, սակայն ժողովուրդը չէր կարող ազատուել իրան վրայ կառավարիչ կարգուած, քրիստոնէի անգոյրով շպարուած խաներից և սադրապներից,— ռուս բիւրոկրատիայի այդ սիւներից, որոնք ամենաանխիղճ կերպով կեղեքում և տրորում էին թշուառ ժողովրդին,— ժողովուրդն էլ ռուսաց լեզուին և օրէնքը չիմանալով 1837 թ-ին, երբ Նիկողայոս Ա. կայսրը Արարատեան երկիրն եկաւ, տարօրինակ ձևերով էր արտայայտում իր բողոքները։

Նա, ժողովուրդը, կայսեր անցած ճանապարհների վրայ չորացած ցախ ու խոտ էր

*) Սակայն լինում էին դէպքեր, երբ կամենդանտների այս դատարաններն ևս նախանձելի էին դառնում, ուր մեղադրեալը Բոնէ խօսելու, բացատրութիւն տալու տրիթ էր ունենում։

Երբեմն— այնպիսի դէպքեր էլ էին ստեղծվում, որ մարդկանց, առանց հարց ու փորձի, ուղղակի կեանքից զրկում էին։

Այսպէս՝ առանց լանցանքը քննելու, առանց դատաստանի և առանց իրաւունքի 1826 թուականում 88 հոգի թուրքերի կախեցին Ղ ծովում խեղդեցին։

փառում և կրակ տալիս հէնց կայսեր առաջ՝ «ահա մենք էլ այսպէս ենք այրվում մեր իշխանաւորների ձեռքից»։

Սարդարապատում էլ մի հայ, մի լերկ և նիհար աքաղաղ ներկայացրեց։ Զարմացած կայսրը երբ այդ սարօրինակ բանի պատճառը հարցրեց,—նրան բացատրեցին, որ լոիկ-միջիկ բողոքողը կամենում է հասկացնել թէ պաշտօնեաները իրանց (ժողովրդին) այդ աքաղաղի օրին են հասցրել։

Գաւառական ժողովրդի այս ասիական ձևերով արտայայտած բողոքներից տարբեր եղաւ Երևանի ազգաբնակութեան բողոքը։ Երևանցիք գրաւոր խնդիրքով բողոքում էին իրանց իշխանաւորների դէմ։ Սակայն նրանց թոյլ չտուին իրանց թուղթը անձամբ կայսեր տալու։ Բողոքարկուները չվհատեցան սակայն։

Այլ երբ Սարդարի պալատում կայսրը իր շքախմբի անդամների հետ ճաշի նստեցաւ՝ դրսից ժողովրդի աղմկալից ձայները լսեցան թուրքաց լեզուով թէ՝ «խնդիրք ունենք տալու, չեն թողնում»։

—«Այդ ինչ ձայներ են», հարցրեց կայսրը։

«Ժողովուրդը Ձեր շնորհաբեր դալստեան պատճառով իր ուրախութիւնն է արտայայտում»,—պատասխանեց բարոն Ռոզէնը՝ այն ժամանակուայ կառավարչապետը, որ սեղանակից էր։

Կայսրը այդ պատասխանով չբաւականանալով իր շքախմբի անդամներից մէկին դուրս ուղարկեց գործի էութիւնը իմանալու համար։

Նա գնաց և վերադարձաւ հետը բազմաթիւ բողոքագրեր բերելով։

Ճաշից յետոյ՝ կայսրը դուրս գնաց անձամբ լսելու ժողովրդի գանգատները, որ արին նրանք Շարուրի գաւառապետ Ֆոն-Բէնտէլի և Սուրմալուի գաւառապետ Նեվերովսկու դէմ։ Ծանր և լուրջ գանգատներ արաւ ժողովուրդը նաև նահանգապետ իշխան Բեհբութովի դէմ, որ անտանելի հարկերով և բեգեառներով սաստիկ ծանրաբեռնել էր ժողովրդին*)։

Այդ և միքանի այլ պաշտօնեաներ, որոց դէմ այս կամ այն կերպով ժողովուրդը բողոքել էր կայսեր՝ ի հարկէ պատժեցան, պաշտօնեներից հեռացնելով կամ այլ տեղ փոխադրելով, սակայն դրանով իրերի դրութիւնը այնքան էլ չլաւացաւ։ Եւ դա շատ պարզ է։ Ասած է «Ձուկը գլխից է հոտում»։

Անդրկովկասեան երկրի ընդհանուր կառավարութեան ձևը, ոգին վատ էր, յոռեգոյն։ Եւ այդ ոգով և ուղղութեամբ սնուած ու մեծացած պաշտօնեաները աւելի լաւ չէին կարող լինել, քան ինչ որ էին։

Գաւառապետներն ու նահանգապետները չէին կարող չկեղեքել ժողովրդին, չհարստահա-

*) Հարկաւ իշխան Բեհբութովի այս գործագործութիւնների համար չէր, որ բարոն Ռոզէնը նրա մասին գրում էր 1831 թուին նախարար Զեռնիշեվին թէ՝ «Հայոց աշխարհում իշխան Բեհբութովը ամեն կողմից լաւ կլիներ, եթէ միայն հայ չլիներ»։ (Акты, VIII, էջ. 21 № 5)։

րել նրան, երբ այդպէս անում էին կառավարչապետները, նրանց հովանաւորած պաշտօնեաները, նոյնիսկ նրանց կանայքը։

Հետեւեալ իրողութիւնը ցոյց է տալիս թէ ապօրինութիւնն ու անզգամութիւնը մինչև որ աստիճանի էր հասնում նոյնիսկ կառավարչապետի ապարանքումը։

Էջմիածնի պահարաններից մէկում մեծ զգուշութեամբ՝ մի հայրապետական խոյր (թագ) կար՝ թանգագին քարերով զարդարուած։

Բաղդի բերմամբ՝ այդ թանկագին թագը, իր ժամանակին, իշխան Ցիցիանովի և ժենեռալ Նեսվէտայեվի ճանկը չէր ընկած, երբ սրանք Էջմիածնի հարստութիւնները քաղաքավարի կերպով յափշտակեցին, ինչպէս իր տեղում ցոյց ենք տուել։

Սակայն այդ թագի գոյութիւնը յայտնի էր ոմանց։ Սրանց թւում և կառավարչապետ Ռօզէնին և իր կնոջը,—բարօնեսսա Ռօզէնին։

1833 թուականին կառավարչապետի թիկնապահներից մէկը, Եպիսկոպոս ազգանունով, պաշտօնական յանձնարարութեամբ Էջմիածին եկաւ։ Պատճառը իր տեղում կիմանանք։

Եպիսկոպին յանձնարարուած էր նաև յայտնել կաթողիկոսին, որ բարօնեսսան շատ ցանկանում է Էջմիածնում եղած հայրապետական հին թագը տեսնել։

Տիկնոջ այդ ցանկութիւնը նրա ջերմեռանդութեանը վերագրելով Յովհաննէս կաթողիկոսը

իր մօտ թարգման կարգուած Մկրտիչ Քարտաշեանի միջոցով թագը Թիֆլիզ ուղարկեց։

Բարօնեսսա Ռօզէնը վեց տարի իր մօտ պահելուց յետոյ՝ վերջապէս թագի թանկագին քարերը հանել տուեց և նրանց տեղ կեղծ, ապակեայ քարեր շարել տալով վերադարձրեց կաթողիկոսին։

Այս անամօթ խարդախութիւնը Կովկասի կառավարչապետի կինը կատարել տուեց Կուսիկեան ազգանունով մի Թիֆլիզեցի ակնավաճառի ձեռքով, որին, երևի, ի տրիտուր այդ խարդախութեանը՝ Կովկասեան իշխանութիւնը 300 ռուբլի պարգև տուեց, ևս և ոսկեայ մեդալ*)։

ՄԺԲ.

Բայց Անդրկովկասի կառավարութեան մեծ ու փոքր ներկայացուցիչները ոչ միայն իրանց կաշառակերութեամբն ու բարբարոսութեամբն էին յայտնի, այլ նրանք յայտնի էին նաև իրանց կատարեալ անընդունակութեամբ ժողովրդին ճանաչելու, նրա հոգեբանութիւնն ըմբռնելու։ Եւ հէնց այդ պատճառով էլ՝ պակաս չարիք չէին հասցնում ինչպէս ժողովրդին իրան, նոյնպէս և կենդրոնական կառավարութեան։

Այդ բանի ամենալաւ փաստը այն շփոթն է, որ 1829 թուականում ծագեցաւ Կովկասում և որ ռուսաց զինուորական պատմութեան մէջ «Հայկական ապստամբութիւն» է կոչվում։

*) Ամենայն հայոց կաթող. Բ. եր. 394.

Տեսնենք դա ինչ ապստամբութիւն է։

Ընթերցողը տեսաւ, որ 1826 թուականում՝ ռուս-պարսկական պատերազմը սկսելուց առաջ և նրա բոլոր տեղութեան միջոցին՝ հայ ժողովուրդը Վրաստանում մեծ և փոքր գնդեր կազմեց, որոնք և Ներսէս ու Գրիգոր արքեպիսկոպոսների առաջնորդութեամբ շարունակ պատերազմի դաշտն էին նեռվում ռուս զինուորների հետ և անձնուիրութեամբ կռվում ռուս զէնքի յաջողութեանը համար, որի մէջ կարծում էին գտնել իրանց փրկութիւնն ու ազատութիւնը պարսկական լծից։

Ընթերցողը այն ևս տեսաւ, որ Վրահայերի օրինակովը ոգևորուելով Գանձակի և Ղարաբաղի հայերն ևս իրանցից հեռակ և հեծեալ գնդեր կազմեցին և նոյնպէս մտան ռուս բանակի շարքերը և պարզերես դուրս եկան։

Այնուհետև մենք տեսանք, որ 1828—1829 թուականներում՝ ռուս տաճկական պատերազմի ժամանակ՝ տաճկահայերն ևս անտարբեր հանդիսատեսների դեր չկատարեցին,—այլ իրանցից կազմուած մեծ ու փոքր գնդերով նոյնպէս ռուս բանակի մէջ մտնելով՝ արիաբար կուեցին կիսալուսնի տիրապետութեան դէմ։

Այնպէս որ՝ առանց ճշմարտութեան դէմ մեղանչած լինելու՝ համարձակ կարելի է ասել, որ 1826—1830 թուականների պատերազմները հաղիւ թէ այնքան յաղթութեան դատնիներ բոլորէին Պասկեվիչի գլխին, եթէ որ նրան օգնական չլինէր հայ, և առհասարակ տեղական, ազգաբնակութիւնը իր նիւթական և բարոյական բազմատեսակ աջակցութիւններով։

Եւ թող հայերի ռուս բանակներին ցոյց տուած այդ աջակցութիւնը չվերագրի Պասկեվիչի քաղաքագիտութեանը ևեթ, այլ նաև, և գրեթէ բացառապէս,—թող այդ վերագրի հայերի և ռուսների կրօնակցութեանը,—մի երևոյթ, որ երկու դարուց ի վեր այնքան շահագործեց և դեռ այսօր էր շահագործում է ռուս քաղաքականութիւնը։

Դառնանք «Հայկական ապստամբութեանը»։

ՄԺԳ

Վրացիների տիրապետութեան ժամանակ՝ հպատակ ժողովուրդները, ուրեմն և հայերը, ամեն մէկ հինգ տանից մի սպառազինուած զինուոր էին տալիս իշխանութեանը։

Այդ զինուորները միմիայն վեց ամիս էին ծառայում և պարտաւոր էին միմիայն տէրութեան սահմանների վրայ հսկել։ Սահմաններից այն կողմը անցնել, պատերազմի գնալ կամ վեց ամսից աւելի ծառայել,—նրանք պարտաւոր չէին ամենևին։

Պասկեվիչը, որ տեղացի ժողովրդից կազմուած զօրքերի օգտակար ծառայութիւնները փորձով տեսած էր, կամեցաւ վրացիների աւանդական սովորութիւնից օգտուել։ Ուստի և որոշեց,

որ ռուս կառավարությունը ևս զօրք ժողովէ հին կարգով, միայն առանց որոշելու զինուորների ծառայության ժամանակը և ծառայության տեղը։

Ճիշտ է որ Պասկեվիչի համար գրեթէ անկարելի էր ճշտիւ որոշել տեղացի զինուորների ծառայության տեղն ու ժամանակը՝ ի նկատի ունենալով պատերազմական խառնակ այն դրությունը, որի մէջ գտնվում էր Վրաստանը, բայց այդ հանգամանքը տեղացիների համար՝ ամենաէական նշանակություն ունէր։ Ժողովուրդը պիտի իմանար թէ ռուս կառավարությունը ժողովելով իր երիտասարդ զաւակներին՝ իբրև զինուոր՝ ո՞ւր պիտի տանի նրանց և ո՞րքան ժամանակի համար։

Ժողովրդին քաջ յայտնի էր, որ ռուս զինուորի ծառայության ժամանակը 25 տարի է։ Եւ թէ՝ ծնողի և ընտանիքի համար կորած է այն երիտասարդը, որ ստիպված պէտք է լինի այդքան երկար տարիներ ծառայել։

Հետևաբար Պասկեվիչի կարգադրությունը, մասնաւորապէս ծառայության ժամամակի և տեղի անորոշությունը, շատ անախորժ տպաւորություն թողեց ժողովրդի վրայ։

Ճշմարիտ է՝ նախքան իր կարգադրության հրատարակումը՝ Պասկեվիչը վրաց ազնվականության և Թիֆլիզի առաջնակարգ հայերի հետ խորհրդակցեցաւ և նրանց հաւանությունն ու պատրաստակամությունը նախապէս ստացաւ, սակայն այդ դեռ չէր նշանակում, որ ժողովուրդը ևս համակերպվելու է անպատճառ ազնվական-

ների և առաջնակարգ մարդկանց։ Գործի ծանրությունը ոչ ապաքէն ծանրանալու էր ժողովրդի և նրանց զաւակների վրայ։

Ուրեմն, կրկնում ենք,—ժողովուրդը իրաւունք ունէր կասկածանքով և երկիւղով նայել Պասկեվիչի կարգադրության վրայ։ Իսկ նրան համակերպող վրացի ազնվականների և առաջնակարգ հայերի վրայ նայել, որպէս իր անբարեացակամների, մինչև իսկ դաւաճանների վրայ։

Դժբաղդաբար այդ ժամանակ՝ քաղաքական այնպիսի դէպքեր տեղի ունեցան, որ առիթ տուին կարծելու և մինչև իսկ համոզվելու, որ ռուս կառավարությունը վճռել է տեղացի ժողովրդից «սպառած ժողովելու»։

Դէպքերը սրանք էին։

ՄԺԴ.

Այդ միջոցին էր, որ պարսիկները Թէհրանում ռուսաց դեսպան Գրիբոյեդովին սպանեցին և, ինչպէս ձայն էր ընկել,—իբրև թէ պատրաստվում էին ռուսաց երկիրների վրայ յարձակվիլ։

Այդ միջոցին էր, որ աջառացիները և լեզգիները եկել և Ախալցխան պաշարել էին, որ տաճիկները Արզրումում ծածուկ զօրքեր էին ժողովում, որ Ղազախի, Բորչալի և Ղարաբաղցի թուրքերը պատրաստվում են ապստամբելու և թէ՝ ռուսական զօրքերը, իրանց սակաւության պատճառաւ, միանգամայն անկարող են

դիմադրել և առաջն առնել ամեն կողմից իրանց սպառնացող այդ վտանգներին։

Եւ ահա մի այսպիսի վտանգալից ժամանակ, երբ տեղացի քրիստոնեայ ժողովուրդը տագնապի մէջ ծփում էր,—յանկարծ ի պաշտօնէ հրատարակուեցաւ Պասկեվիչի կարգադրութիւնը, որով Վրաստանի վրացիներն ու հայերը պարտաւորվում էին ամեն մի հինգ գերդաստանից մի զինուոր տալ, այնպէս որ տասը հետևակ գունդ կազմուի՝ 8000 հոգուց բաղկացած։

Հրատարակուեցան նոյնպէս մի շարք խիստ կանոններ, որ զինուորացուն մարմնի ոչինչ արատ չունենայ, այսպիսի կազմուած ունենայ, այսքան չափ ու հասակ ունենայ և այլն։

Դեռ այդ բաւական չէ. տէրութեան այն պաշտօնեաները, որոնք իպաշտօնէ յայտարարում էին ժողովրդեան Պասկեվիչի հրատարակած կանոնները,—իրանց տգիտութեամբ, երբեմն պարզամտութեամբ այնպիսի բացատրութիւն և մեկնութիւն էին տալիս, որ ժողովուրդի համար՝ այլևս ոչ մի կասկածելի տեղ չէր մնում, որ կառավարութիւնը նրանց որդուցը տանում է 25 տարի ծառայեցնելու համար՝ հայրենիքից դուրս, պատերազմների դաշտերում։

Տգէտ կամ պարզամիտ գաւառապետների թւում ամենից աւելի աչքի էին ընկնում Գանձակի գաւառապետ Բերէնսը և Թելաւի գաւառապետ Բախմանը, որոնք իրանց բացատրութիւններով ժողովրդի սրտերը տոչորող կրակի վրայ նոր ի նորոյ ձէթ էին ածում։

Եւ ահա վրդովեցաւ ժողովուրդը ամեն տեղ թէ քաղաքներում և թէ մանաւանդ գիւղերում։

Վերջիններս խումբ-խումբ Թիֆլիզ էին գալիս իմանալու թէ ինչ մտադրութիւն ունին քաղաքացիք, որ իրանք էլ նրանց հետևեն։

Շատ յուզուած էին նմանապէս Թիֆլիզի հայ արհեստաւորները,—համքարները և առևտրականները։

Ճշմարիտ է՝ միևնոյն այդ Թիֆլիզի հայերն էին, որ երկու հեծելագունդ էին կազմել և տէրութեանը աւել, սակայն նախ և առաջ՝ այն ժամանակ հայերը զինուոր էին տալիս՝ քաջ գիտնալով որ նրանք ռուս բանակի հետ գնում էին իրանց հայրենիքը, իրանց Մայր Աթոռը Պարսիկների ձեռքից ազատելու և երկրորդ՝ այն ժամանակ հայերին ոգևորեցնում էր Ներսէս արքեպիսկոպոս Աշտարակեցին, որ այժմ Պասկեվիչի պահանջմամբ աքսորուած էր, չկար մէջտեղում։

Ինչ ասել կուզի, որ գտնուեցան ժողովրդեան մէջ և այնպիսի անհատներ,—գլխաւորապէս վերաց ազնուականների մէջ,—որոնք այս կամ այն պատճառաւ դժգոհ լինելով կառավարութիւնից՝ այժմեան հանգամանքից և ժողովրդեան տրամադրութիւնից օգուտ քաղեցին և սկսեցին էլ աւելի գրգռել նրան՝ ժողովրդին։

ՄԺԵ.

Ոստիկանութեան նախնթաց կարգադրութեամբ մարտի 9-ին (1829 թ.) Թիֆլիզի ամ-

բոլոր հասարակութիւնը պէտք է ժողովէր Ղաբախ անուանեալ հրապարակում (այժմեան Աղէքսանդրեան այգու ներքին մասին)՝ զինուորագրութեան համար տէրութեան հրամանը լսելու։ Որոշեալ օրը այդ անագին հրապարակը ծփում էր ժողովրդով, որոց մէջ բազմաթիւ մարդիկ կային գիւղերից եկած։

Եկաւ ոստիկանապետը և տէրութեան հրամանը յայտարարեց։

Ամբոխի մէջ նախ մի խուլ, յետոյ բարձր բողոք լսուեց։ Գանուեցան սրտոտ մարդիկ ոմանք, որ հրապարակի մէջ գալով ոստիկանապետին բարձրաձայն յայտնեցին, որ ժողովուրդը պատրաստ է զէն ի ձեռին պաշտպանել իր տունն ու տեղը, բայց «սալտաթ» չի տալ, որ գնայ սահմանից դուրս պատերազմի։

Այդ սրտոտ մարդկանց խօսքն բռնեցին և բանտ ուղարկեցին ոստիկանապետի հրամանաւ։

Միքանի առաջնակարգ հայեր առաջ նետուեցին ժողովրդին խաղաղացնելու դիտաւորութեամբ, բայց ամբոխը նրանց յետ մղեց, իբրև կառավարութիւնից կաշառուած և մատնիչ մարդկանց։

Այդ հայերից մէկն էր ոմն Գէորգ Քէթխուդեան, որ կամենալով անձամբ օրինակ տալ ժողովրդին՝ ձեռքից բռնած իր որդուն հրապարակ դուրս եկաւ և յայտնեց որ ինքը առաջինն է իր որդուն զինուոր գրում։—Բայց հապիւ այդ ծերունին վերջացրել էր իր խօսքը, որ գայրացած ամբոխը նրա վրայ յարձակուեցաւ։ Քէթխուդեանը ստիպուած եղաւ փախչել։

Ամբոխը հետապնդեց նրան «դաւաճան» անուանելով շարունակ։ Եւ անշուշտ նրա տունը քարուքանդ կանէր ամբոխը, եթէ որ շուտով գօրքը վրայ հասած չտարտէր թէ տունը և թէ նրա տիրոջը։

Քէթխուդեանի հալածմամբ չբաւականանալով՝ ամբոխը մեծ աղաղակով դէպի ոստիկանատուն դիմեց՝ պահանջելով որ նոյն օրուայ բանտարկուածներն անպատճառ արձակուին։

Իսկոյն զօրանոցից միքանի վաշտ զօրք բերին, ձի հեծած եկաւ և զինուորական նահանգապետը, որ դարձեալ միքանիսին բնտարկել տուեց։ Վերջապէս գիշերուայ դէմ հազիւ հազ ամբոխը ցրուեցաւ։ Սակայն դրանով շփոթը չվերջացաւ։

Ապասում էր, որ հետեւեալ օրը մեծ արիւնհեղութիւն է լինելու։ Ողջ գիշերը զօրքերը հրապարակներում անցկացրին։

Գիւղերից քաղաք եկողներն էլ յետ դառնալով՝ կատարուած դէպքերը շատ մռայլ գոյներով նկարագրելով՝ աւելի և աւելի լարեցին ժողովրդին, որ մէջ գիշերին ժողովներ կազմելով վճռել էին առաւօտեան քաղաք գնալ և քաղաքացիների հետ պաշտպանել իրանց դատը—սալտաթութեան խնդիրը։

Եւ թէպէտ գիւղացիք խումբ-խումբ առաւօտեան Թիֆլիզ թափուեցան, բայց հէնց գիշերը հարցը քաղաքում ուրիշ կերպարանք էր ստացել։

Թիֆլիզի «բանիբուն և պատուաւոր» հայերը միմեանց հետ խորհրդակցելուց յետոյ՝ նոյն գիշերն ևեթ զինուորական նահանգապետին ներկայանալով իրանց պատրաստակամութիւնը յայտնեցին թէ ժողովրդին խաղաղացնելու և թէ ապրութեան հրամանը կատարելու հայ հոգևորականութեան միջնորդութեամբ։

ՄԺԶ.

Եւ, յիրաւի, առաւօտեան դէմ, Թիֆլիզի հայոց բոլոր եկեղեցիների տխուր զանգահարութիւնը, արտասովոր կերպով, ժամ էր հրաւիրում ժողովրդին, «հսկում» կատարելու և «Տէր ողորմեա» լսելու։

Նախորդ օրւայ անցքերից յուզած, գիշերն անքուն անցկացրած և բացող լոյսից միմիայն չարիք սպասող հասարակութիւնը, մեծ և փոքր՝ լի հաւատով դէպի Աստծոյ տաճարը դիմեցին՝ կարծելով թէ այդ վերջին մաղթանքն էր, որ պիտի կատարուէր իրանց նահատակութիւնից առաջ...։

Սովորական ժամերգութիւնը վերջանալուց յետոյ՝ նախ քան աղէտալից «Տէր ողորմեա»-ի երգելը՝ քահանաները բեմ բարձրացան մէն մի եկեղեցում և յայտնեցին ժողովրդին, որ կառավարութիւնը նրանցից «սատաթ» չի պահանջում, այլ այն կարգի զինուորներ, որ նրանք ցարդ տալիս էին վեց ամիս ժամանակաւ և երկ-

բի սահմանները պահպանելու համար։ Թէ՝ ժողովրդեան մէջ տարածւած լուրերը սխալ են և թէ՝ թիւրիմացութեան արդիւնք է ժողովրդի կողմից զինուել իշխանութեան դէմ և այլն, այս ուղղութեամբ։

Ժողովուրդը լսեց իր քահանաների յորդորներին, դպիրների հետ միասին ծնկաչոք երգեց «Տէր ողորմեա»-ն և հոգեպէս կազդուրւած եկեղեցիներից դուրս գալով՝ ուղղակի դիմեց ուր հարկն էր յայտնել իր պատրաստակամութիւնը կամաւոր զինուոր տալու ըստ նախնի սովորութեան։

Եւ միքանի օրւայ մէջ՝ Թիֆլիզի հայերը իրանցից մի մեծ գունդ կազմեցին, որ 2000 հոգուց էր բաղկացած։

Այս գունդը նոյն Ղարաբաղ հրապարակում՝ մայիս ամսի 10-ին սպառազինւած կոմս Պասկեվիչին ներկայացաւ, որ, ըստ երևոյթին, շատ գոհ մնաց։ Բայց դրանով ապստամբութիւնը չվերացաւ։

ՄԺԷ.

Գաւառացի ժողովրդականք իրանց հասած չափազանցեցրած, մասամբ և միտումաւոր լուրերով այն աստիճան յուզւած ու զրգռւած էին, որ ամեն տեղ դիմում էին դէպի եկեղեցիները և այդտեղ երդվում, որ կը մեռնեն, բայց «սատաթ» չեն տալ։

Եւ այս կատարվում էր ոչ միայն Թիֆլիզի

շրջակայքում, այլև Գորայ, Թելաւի և Գանձակի բոլոր գաւառներումը։

Ով որ համարձակւում էր ամբոխին համոզել անկարգութիւններից հեռու կենալու,—ժողովրդի կատաղութեանը զոհ էր գնում. մի քանի մարդիկ մերձ ի մահ դանակոծւեցան, շատերի անները քանդեցին։

Այդպիսով Քարթէլում, Կախէթում, Ղազախ—Բօրչալիում և Գանձակում միանւագ և միմեանցից անտեղեակ՝ ապստամբութիւն էր սկսվում։

Յանկարծ լուր հասաւ Պասկեվիչին, որ Կոդու կողմից 14 գիւղերի բնակիչները, զէնքեր վերցրած, մեծ խմբով գալիս են Թիֆլիզ՝ սալտաթութեան դէմ բողոքելու։

Նոյն օրը մի քանի հազար գիւղացիներ էլ Դիղոմի կողմից էին մօտենում Թիֆլիզին։

Պասկեվիչը իսկոյն զօրք ու թնդանօթներ ուղարկեց գիւղացիների մուտքն արգելելու և յաջողւեց։ Երկիւղից գիւղացիք իսկոյն յետ դարձան առանց որևէ ընդդիմութիւն ցոյց տալու զօրքին։

Զօրքից և թնդանօթներից ոչ պակաս օգնեցին կառավարութեանը մի քանի պատւաւոր Թիֆլիզեցի հայեր, որոնք յանձն առան յառաջ գնալ և գիւղացիներին խաղաղացնել։

Այսպէս թէ այնպէս՝ ժողովրդական այդ ցոյցերը հարկադրեցին Պասկեվիչին զինւորագրութեան հարցը յետաձգել։ Եւ նա շտապեց ի

պաշտօնէ յայտարարել ազգաբնակութեանը, որ այլևս կարիք չի զգում Վրաստանում զօրաժողով լինելու։

Ժողովուրդը կամաց-կամաց հանգստացաւ։

Ծածկարար այս բոլոր իրողութիւնները կոմս Զեռնիշեվին՝ ապրիլի 6 թւակիր № 70 զրութեամբ՝ հաղորդելով Պասկեվիչը նախ և առաջ յարձակւում է վրացի ազնւականութեան վրայ, իբր թէ սրա ջերմեռանդութիւնը առ գահն ռուսաց, ըստ խօսքով է և ոչ թէ գործով. ապա մեղադրում է հայերին ասելով թէ՝ «առհասարակ նկատւեցաւ, որ Վրաստանում ցոյց տւած ընդդիմութիւնը առաջ ու առաջ սկսվում էր հայերի կողմից»։

Պասկեվիչի ասութեամբ՝ թէ Թիֆլիզում, թէ Թելաւում և թէ Գանձակում ու բոլոր գիւղերում առհասարակ՝ հայերն էին զինւորներ տալուց առաջին խուսափողները։ Եւ հէնց այդ պատճառով էլ՝ այդ դէպքը «հայկական ապստամբութիւն» կոչւեցաւ, եթէ միայն թիւրիմացութիւններից առաջացած այդպիսի դէպքերին կարելի է ապստամբութիւն անւանել*)։

Իսկ եթէ դա, ըստ Պասկեվիչի, իսկապէս ապստամբութիւն էր,—ապաքէն դրան յառաջացնողը ոչ այլ ոք էր, եթէ ոչ նոյն Պասկեվիչը իր անտեղի կարգադրութեամբ՝ առանց ի նկատի առնելու ժամանակի հանգամանքները և ժողովրդեան դարևոր սովորութիւնը։

*) «Հայկական ապստամբութեան» մանրամասնութիւնները տես Акты, VII, եր. 325, № 336.

ՄԺԸ.

Ճիշտ մի այդպիսի «հայկական ապստամբութիւն» էլ 48 տարի յետոյ՝ այսինքն վերջին 1877 թուականի ռուս-տաճկական պատերազմի միջոցին տեղի ունեցաւ։ Եւ այս անգամուայ ապստամբներն՝ տաճկահայ գաղթականներն էին, որոնք տեղաւորուած էին Ախալցխա և Ախալքալաք քաղաքներում՝ իրանց շրջակայ գիւղերով։

Թէ կովկասեան իշխանութիւնը ինչ անուն է տվել 1877 թուականի այդ դէպքերին և ում ու ինչ բանի է վերագրել նրանց երևումը,—ես բոլորովին չեմ իմանում ցարդ։ Այդ մասին ես առիթ չեմ ունեցել դիւանական թղթեր կարդալու։

Բայց ես շատ լաւ իմանում եմ թէ այդ դէպքերն ինչից և ինչպէս յառաջացան նախ և առաջ Ախալցխայում, յետոյ Ախալքալաքում և ինչպէս վերջացան, բարեբաղդաբար, առանց մի կաթիլ արիւնհեղութեան։

Պատերազմի այդ տարիներում ես քաղաքագլուխ էի Ախալցխայում և ականատես ու մասնակից այդ դէպքերին։

Ահա իսկական իրողութիւնը, որ ես դուրս եմ բերում այդ ոչ հեռաւոր անցեալից, հիմնուելով յիշողութեանս վրայ։

ՄԺԹ.

Նախքան պատերազմի սկսելը՝ ժենեռալ

Միքայել Տարիելովիչ Լոռիս-Մելիքովը Ախալցխա եկաւ ի տեսութիւն այնտեղ հաւաքուած զօրքերին։

Զօրահանդէսից յետոյ՝ քաղաքի զինուորական ժողովարանում ժենեռալին ներկայացան ամեն դասակարգի ներկայացուցիչները, որոնց ամենքին ընդունեց և յայտնեց, ինչ որ հարկաւոր էր համարում։

Պաշտօնական ընդունելութեան վերջանալուց յետոյ ժենեռալը ինձ և ինձ հետ եղող քաղաքային վարչութեան անդամներին, որ էին Ստեփան Քաչխոյով և Յարութիւն Յարութիւնեանց, իր կաբինէտը հրաւիրելով երկու պատուէր տուեց։ Առաջինը՝ թոյլ չտալ ժողովրդեան չափազանցօրէն և արուեստական կերպով բարձրացնելու մարդկանց և ձիերի սննդեան պաշարների գները։

Երկրորդ պատուէրը վերաբերում էր Ախալցխայի ամենացաւոտ տեղին պատերազմների ժամանակ առհասարակ։

Աջարիային հարևան լինելով Ախալցխացիները՝ պատերազմների տարիներումը միշտ ենթակայ են եղել այդ կատաղի լեռնականների յարձակումներին։ Կարող էին այս անգամ ևս։

Արդ՝ նախքան մեր կողմից այս մասին խօսք բաց անելը, ժենեռալ Լոռիս-Մելիքովը պատուիրեց միամտացնել ժողովրդին, որ Աջարացիներից ոչ մի երկիւղ չունենայ, որ այդ լեռնականները

այս անգամ չեն համարձակվիլ Ախալցխայի վրայ յարձակվելու*)։

Բայց եթէ այդպիսի բան եղաւ, որ ես ամենին չեմ թոյլ տալիս, այստեղ, բերդի պահպանութեան համար, մնացած զօրքը այդ լեռնականների հախիցը լաւ կը դայ։ Այսպէս էլ յայտնեցէք ժողովրդին և միանգամայն միամտացրէք նրան իմ կողմից։

Մի քանի օրից յետոյ՝ պատերազմն սկսեցաւ. ռուս բանակը սահմանն անցաւ։

Ախալցխայում տեղական պահակ գունդը միայն մնաց։ Բայց մենք, քաղաքացիներս, Լօռիս-Մելիքովի խօսքերի վրայ վստահ լինելով, միանգամայն մեզ ապահով էինք համարում Աջարացիների յարձակումից։

Դժբաղդաբար, մի օր, քաղաքի մէջ յանկարծ մի շշուկ ընկաւ, իբրև թէ նախնթաց գիշերը աջարացիները գաւառի միքանի, սահմանին մօտիկ, հայկական գիւղերի վրայ են յարձակվել և թալանել և թէ՝ նրանք քաղաքի վրայ էլ յարձակվելու մտադրութիւն ունին։

Ես դիմեցի գաւառապետ՝ գնդապետ Գրէնին, բայց նա ոչինչ չէր լսել. խոստացաւ ձեռաց ստուգել։

*) Մասնաւոր՝ բայց ստոյգ աղբիւրից ես գիտէի, որ ժենեռալ Լօռիս-Մելիքովը՝ իր հինաւուրց ծանօթ Միխայիլ Միխիսովի միջոցով արդէն 5000 ռուբլով կաշառել պրծել էր Աջարիայի կառավարչին, որ էր Շերիֆ-բէգ Խիմշիաշվիլին, որ յետոյ զենեռալութիւն էլ ստացաւ և ուղղափառութիւն ընդունեց։

Դիմեցի բերդի կոմենդանտին, որ լուրը բոլորովին հերքից։

— Բայց,— աւելացրեց նա,— որպէս զի ձեր ընտանիքը գիշերները հանգիստ լինին, եթէ ուզում էք և հարկաւոր էք համարում՝ քաղաքացիներից գիշերները քաղաքի ծայրերում պահակներ նշանակեցէք՝ թող հերթով հսկեն։

Եւ մի որևէ շարժում նկատելիս՝ ինձ սիգնալ տան։ Եթէ ուզում էք՝ ես ձեզ զէնք էլ կը տամ պահակներին յանձնելու։

Գաւառապետի և քաղաքային խորհրդարանի իրաւասուների հետ մասնաւոր կերպով խորհրդակցելով որոշեցինք քաղաքացիներից գիշերուայ պահակներ կազմել մեր սեպհական զէնքերով։

Ամենայն երեկոյ քաղաքի ազամարդիկ, միայն ցանկացողները, խումբ-խումբ, քաղաքի ծայրերում հսկում էինք՝ առանց դասակարգի, հասակի և ասպիճանի խարութեան՝ թէպէտ և հսկողների մէջ ռուսաբ թիւ կազմում էին երիտասարդները։

Իսկապէս ասած մեր կատարած գործը՝ ոչ այլ ինչ էր, եթէ ոչ մեզ համար զուարճութիւն, բաւականութիւն։

Ամառային այդ հով ու զով գիշերներում՝ հսկողները մի տեղ երգում էին, մի տեղ մեծ կրակ շինելով՝ խորոված պատրաստում, երբորդ տեղ պարում, թռչկոտում հայն, սակայն այդ ամենը խիստ բարերար, հանգստացուցիչ ազդեցութիւն էր գործում քաղաքացիների, մասնաւորապէս իգական սեռի վրայ։

Ժողովուրդը այնպէս էր հաւատում, որ եթէ Աջառացիները յանկարծ քաղաքի վրայ յարձակուելու լինին,—իր զիշերապահ, արթուն երիտասարդները կարող կը լինեն նրանց յետ մղելու, նոյնիսկ առանց բերդապահ զօրքի օգնութեամբ։

Եւ այդ հաւատով նա,—ժողովուրդը,—պատերազմի օրերում հանգիստ ննջում, վեր էր կենում։ Թէպէտ և զիշերապահների թիւը օրըստօրէ ես նուազացնում էի՝ ոչ մի առանձին կարիք չտեսնելով նրանցում։

Մի.

Պատերազմի դաշտից հասած լուրերն ընդհանրապէս մխիթարար էին։

Ընդհանրապէս ռուս բանակների յաղթութեան լուրերն էին մեզ հասնում։ Իսկ ձախորդ լուրերը՝ շատ սակաւ,—այն էլ Եւրոպական Տաճկաստանի պատերազմական դաշտից։

Այդ ձախորդ լուրերն առնելով՝ ժողովուրդը այսպէս էր դատում, որ եթէ ռուսները Եւրոպական տաճկաստանում յաղթուին,—ասիական Տաճկաստանում յարդ նրանց տարած յաղթութիւնները՝ իրանց արժէքը կորցրած կը լինին։ Եւ թէ՝ տաճիկ կառավարութիւնը այնուհետև ձեռաց այս կողմերում ոտքի կը հանէ Դաղստանի և Աջառայի լեռնականներին։

Եւ տեղական քրիստոնեայ տարրը միանգամայն ոտքի տակ կը դնայ։

Այդպիսի մտածմունքի օրերից մէկում էր։ գաւառապետ Գրէնը և ես միաժամանակ պաշտօնական թղթեր ենք ստանում Թիֆլիզի նահանգապետ՝ իշխան Գագարինից, որ Կովկասեան փոխարքայ Մեծ Իշխան Միխայէլ Նիկոլայեվիչի հրամանով հրամայում է մեզ Ախալցխայի ազգաբնակութեան հարկատու դասակարգից միմիայն այլ ոչ զիլդիներից, որոշեալ թւով միլիցիոնէրներ ընտրել վիճակով և յանձնել զինուորական իշխանութեանը նրանց Թիֆլիզ ճանապարհելու։

Նահանգապետի թղթումը ծրարուած է Փոխարքայի հրահանգը վիճակագրական եղանակի մասին։

Բացի այն, որ պատերազմի ուղղութեան ժամանակ ժողովրդից զինուոր պահանջելն, ինքնըստինքեան, խելօք բան չէ և եթէ մի կառավարութիւն այդ անխոհեմ քայլն անելու հարկադրած է, նշանակում է որ նա նեղ տեղն է ընկած,—բացի այս հեռանկարութիւնից՝ Ախալցխացիներին շատ վախեցրեց վիճակ, վիճակահանութիւն բառերը։

Յայտնի է, որ վիճակահանութեամբ սովորական զօրաժողովներն են լինում։ Եւ եթէ կովկասեան իշխանութիւնը այժմ այդ եղանակով զինուորներ է պահանջում ազգաբնակութիւնից,—նշանակում է, որ ուզում են սովորական զինուորագրութիւն մտցնել, ուզում են մեր երիտասարդներին «սալտաթ» տանել, այն էլ

պատերազմի այս օրերում, ուզում են մեզ... Ա-
ջառայիների ձեռքը մատնել...։

Քաղաքային վարչության մէջ՝ մասնաւոր
կերպով ժողոված քաղաքացիների մի փոքրիկ
խումբ,—հայեր, վրացիներ և հրէաներ,—միա-
բերան և դրականօրէն ինձ յայտնեցին, որ Փո-
խարքայի այդ կարգադրութեան իրագործումը
անկարելի է։ Իսկ եթէ սոխլեցին անպատճառ
իրագործել,—այն ժամանակ արիւնհեղութիւնը
անխուսափելի կը դառնայ։

Ուստի և անհրաժեշտ է միջնորդել, որ այդ
կարգադրութեան իրագործումը յետաձգի գէթ
մինչև պատերազմի վերջանալը։

Իբրև տեղացի և մանկութիւնից ի վեր ծա-
նօթ ազգաբնակութեան տրամադրութեանն ու
հոգեբանութեանը՝ ես ինքս էլ շատ լաւ ըմբռ-
նում էի գործի լրջութիւնը, նրա ծանրութիւնը։
Ուստի և համակերպվում էի ժողովականների
առաջարկութեանը։

Տարաբաղդաբար այլ կերպ էր դատում
գնդապետ Գրէնը։

Պետերբուրգի յայտնի Տրեպով քաղաքապե-
տի ձեռքի տակ մեծացած, երկար տարիներ մայ-
րաքաղաքում թաղապետի պաշտօն վարած՝ Ա-
խալցխայի այժմեան գաւառապետը պահանջում
էր անյապաղ եւ տատացի կերպով ի կատար ա-
ծել իշխանութեան հրամանը։

Ժողովականները ցրուեցան՝ իմ և գաւառա-
պետի խոհեմութեանը և պատասխանատուութեա-
նը թողնելով քաղաքացիների բաղդը։

Բայց երկու ժամից աւելի տևած մեր փո-
խադարձ խորհրդակցութիւնը՝ ոչ թէ մեզ փոխա-
դարձ որևէ համաձայնութեան բերեց,—այլ ընդ-
հակառակը մեզ աւելի միմեանցից հեռացրեց մեր
հայացքներով, տեսակէտներով։

Գնդապետ Գրէնը, վերջ ի վերջոյ, ամենայն
անկեղծութեամբ ինձ յայտնեց, որ եթէ ես դան-
դաղիմ նահանգապետի թղթի կատարման նկատ-
մամբ և ժողովրդականների խելքովն, նրանց
ցուցմամբը շարժւեմ,—նա ինքը սոխլուած կը
լինի բոլոր պատասխանատուութիւնը ինձ վրայ
ձգելով՝ այժմեանից ամեն ինչ տեղեկագրել նա-
հանգապետին։

Գործի յաջողութեան համար գաւառապետի
հետ համերաշխօրէն ընթանալը՝ ամենաանհրա-
ժեշտ համարելով,—ես նրան առաջարկեցի ճա-
շից յետոյ կրկին տեսակցել միմեանց հետ մի-
քանի կողմնակի, բայց փորձառու մարդկանց
ներկայութեամբ, նրանց խորհուրդները ևս լսել և
ապա այս կամ այն եզրակացութեան յանգել։

—Համեցէք,—ասաց գաւառապետը,—ես ձեզ
չեմ հակառակում, ժողովենք, խօսակցենք, խոր-
հրդակցենք։ Բայց ես, իբրև զինուոր, և իբրև Տրե-
պովի աշակերտը, վերջ յամենայնի դարձեալ իշ-
խանութեան հրամանի անթերի կատարումը պի-
տի պահանջեմ։

—Եւ ինչից էք հեռացնում, որ ես այդ
բանից խուսափում եմ... Երևկոյեան տեսակցելու

պայմանով՝ ես ու գաւառապետը բաժանուեցանք միմեանցից։

Ես իմ քայլերը դէպի տուն ուղղեցի։ Բայց գրեթէ ամեն մի քայլափոխում հարկադրւած էի կանգ առնել և շուրջս խռնւած մարդկանց այլևայլ հարցերին պատասխան տալ, ի հարկէ, հանգստացուցիչ, միսիթարուցիչ պատասխաններ։ Սիրտս կարաւում էր, երբ կանայք իրանց ճակատների ոսկիները և առհասարակ իրանց զարդերը չնչին գներով ծախելով՝ ամեն ջանք գործ էին դնում գիլդիական վկայական ձեռք բերել իրենց արհեստագէտ մարդկանց համար, որպէսզի իրանց որդիքը զինուորագրութիւնից ազատ մնան։

Քաղաքացիների այդ հարցերից, նրանց հոգեկան դրութիւնից դժուար չէր եզրակացնել, որ դրութիւնը ծանր է և հետզհետէ ծանրանալու է։

Բանից դուրս եկաւ, որ առաւօտեան քաղաքային վարչութեան մէջ կայացած մասնաւոր խորհրդակցութեան մասնակցող քաղաքացիները՝ իրանց անտեղի բացատրութիւններով և միակողմանի հասկացողութեամբ՝ ոչ պակաս շփոթել են ժողովրդի միտքը, սիրտը։

Այսպիսով գրեթէ ամբողջ քաղաքի ամբողջ ազգաբնակութիւնը միքանի ժամւայ մէջ սկսել էր ինչպէս մի ծով ալէկոծւել, խռովիլ։

Գանւել էին, հարկաւ, և չարամիտ մարդիկ էլ, որոնք յարմար առիթից օգտւել կամենալով, ձայն էին ձգել՝ իբրև թէ իշխանութեան այդ ա-

նակնոնելի կարգադրութիւնը եղել է իմ և այս ու այն անհատի միջնորդութեամբ։

ՄԻԱ.

Միքանի կողմնակի, չէզոք մարդկանց մասնակցութեամբ՝ գաւառապետի հետ ունեցած երեկոյեան խորհրդակցութիւնից էլ բան չդուրս եկաւ։

Գնդապետ Գրէնը մինչև վերջը այն էր պահանջում, որ հարկաւոր է անյապաղ և առանց որևէ խորհրդակցութեան իշխանութեան հրամանը գործադրել, ուրիշ ոչինչ։

Իբրև պաշտօնեայ-չինովնիկ, և զինուորական պաշտօնեայ, գաւառապետը թերևս իրաւունք ունէի ինձ ընտրող ժողովրդի վրայ նրա աչքերովը մտիկ տալու։

Ուստի ես որոշեցի անկախ կերպով գործել։ Միմեանցից բաժանւելիս՝ գաւառապետին խնդրեցի՝ միառժամանակ ոչ մի բանի չձեռնարկել, մինչև իմ վերադարձը Թիֆլիզից, ուր, ասացի, վճռել եմ գնալ նահանգապետին իրերի դրութեան հետ ծանօթանալու նպատակաւ։

Հետևեալ առաւօտը ինձ մօտ հրաւիրելով 15 քաղաքացի, բանիբուն երիտասարդներ՝ Թիֆլիզ գնալու որոշումս յայտնեցի իրանց և խնդրեցի հետևեալ օգնութիւնը ինձ հասցնելու ազնիւ խօսք տալ, երբ Թիֆլիզից՝ յաջողութեամբ վերադառնամ։

Փոխարքայի հրահանգի մի պարբերութեամբ

թոյլ էր տրվում վիճակահանութեամբ զինուորաց դուրս եկողներին ազատ կացուցանել, եթէ որ կամաւորներ յայտնուեցան։

Հրաւիրածս երիտասարդներին ասացի, որ ես վճռել եմ խնդրել նահանգապետից, և եթէ անհրաժեշտ եղաւ, մինչև իսկ Փոխարքայից, որ ինձ թոյլ տրւի կամաւորներ վարձել՝ իշխանութեան պահանջած թւով առանց վիճակահանութեան ձեռնարկելու և առանց ժողովրդին ցուցակագրելու այլևս։

Եթէ իմ այս միջնորդութիւնը անցկացաւ, ասացի երիտասարդներին, ապա խնդրեմ այնուհետև պահանջւած թւով երիտասարդներ ճարէք քաղաքումս և մի քանի հազար մանէթ հանգանակելու նեղութիւնը յանձն առնէք, որպէսզի կամաւորների ընտանիքներին վարձատրենք։

Մտադրութիւնս շատ հաճելի և դիւրաւ իրագործելի թւաց երիտասարդներին, որոնք և մեծ սիրով յանձն առան ամեն կերպ աջակցել ինձ, եթէ միջնորդութիւնս յարգւեցաւ Թիֆլիզում։

Մտքումս դրած էի նոյն օրն ևեթ, իրիկնապահին մեկնել քաղաքից, սակայն ստիպւեցայ երկու ամբողջ օր յետաձգել ճանապարհորդութիւնս՝ ցրելու համար այն՝ անմիտ ասեմ թէ չարամիտ լուրը, որ տարածւած էր ամբոխի մէջ, իբրև թէ ես մտադիր եմ քաղաքից փախչելու։

Տարաձայնութիւնները, զրդռչութիւնն ու յուզմունքները ժամ առ ժամ շատանում էին քաղաքում։ Քաղաքային վարչութեան շուրջը,

իմ տան շուրջը, երթևեկութեանս սովորական փողոցը շարունակ լցւած էին լինում ամբոխով, որի մէջ անպակաս էին լինում կանայք էլ։

Դրանք՝ է որ խնդրում էին ինձ, է որ սըպառնում էին և է որ արձակ համարձակ հայհոյում, հեգնում, ծաղրում։

Ամբոխը ամեն տեղ և ամեն ժամանակ ամբոխ է։

Երրորդ օրը ես ճամբայ ընկայ Թիֆլիզ։

ՄԻԲ.

Նահանգապետը երկայնմտութեամբ լսեց իմ բանաւոր զեկուցումը, չծածկեց, որ Փոխարքայի կարգադրութիւնը, արդարև, կարող է անկարգութիւններ առաջ բերել, բայց և այնպէս նա պիտի գործադրի։

Այնուհետև ես իմ ծրագիրը յայտնեցի կամաւորներ վարձելու նկատմամբ։

Եւ առ այդ թոյլտւութիւն խնդրեցի։

Իշխան Գագարինը յայտնեց, որ այդպիսի թոյլտւութիւն նա ինձ չէ կարող տալ ի պաշտօնէ, ոչ էլ այդ առթիւ Փոխարքային կարող է դիմել ինքը և կամ ինձ արտօնէ դիմելու,—միայն վստահ լինելով ինձ վրայ, մասնաւոր կերպով թոյլ է տալիս ինձ վարւել՝ ինչպէս որ ես յարմար եմ համարում գործին յաջող ելք տալու համար։ Սակայն այն պայմանաւ, որ Փոխարքայ Մեծ իշխանի հրահանգը գոնէ ձևականօրէն կատարւի անշուշտ։

Խոստացաւ գաւառապետին ազդարարել, որ ինձ թոյլ տայ ինքնուրոյնաբար գործելու և միմիայն այս ու այն օգնութիւնը ցոյց տայ ինձ, երբ ես դիմեմ իրան։

Ուրախ սրտով ես Ախալցխա վերադարձայ։ Յիշածս երիտասարդներին խոստովանաբար յայտնեցի նահանգապետի ինձ ասածները։

Նրանք իսկոյն ընկան ժողովրդեան մէջ՝ մի կողմից յուզած մաքերը խաղաղացրին, միւս կողմից դրամ հանգանակեցին, երրորդ կողմից կամաւորներ ճարեցին, սակարկեցին և վարձեցին։

Իսկ ես առանց նրանց գործունէութեանը միջամտելու, ընդհանուր վիճակահանութեան պատրաստութիւնները տեսայ։

Որոշած օրը բոլոր պաշտօնական անձինք՝ թէ քաղաքի և թէ զինուորական իշխանութեան կողմից հաւաքւած էին «գօտներ» կոչւած մեծ հրապարակի վրայ։—Այնտեղ խռնւած էր նաև ահագին բազմութիւն կողմնակի հասարակութիւնից։

Ամեն անգամ երբ ես կարդում էի մի երիտասարդի անունը և նրանց վիճակահանութեան տուփի մօտ հրաւիրում, բազմութեան մէջ խուլ և սպառնալից բողոք էր լսւում իմ հասցէին։ Եւ ես տեսնում էի թէ ինչպէս մարդիկ ոմանք իրանց ձեռքերում պահած քարերը դէպի ինձ էին ուղղում իսկոյն։

Իմ շուրջը, իբրև թիկնապահներ, կանգնած շատ երիտասարդներ՝ բարեբաղդաբար՝ իսկոյն և

անձայն մէջ էին նետվում այդպիսի բողէներում և անսանձներին զգուշացնում, խելքի բերում։

Տրեպովի աշակերտ՝ գնդապետ Գրէնը, որ իմ կողքին նստած էր և յիշեալ ցոյցերը տեսնում էր՝ մի անգամ այնքան զայրացաւ, որ կարծես հակառակ իր կամքին յանկարծակի և բարձրաձայն հրամայեց պրիստաւին՝ անյապաղ զօրք հրաւիրել բերդից։

—«Գնդապետ, բարձրաձայն դարձայ ես գաւառապետին։ Ինձ ձեր զօրքը հարկաւոր չէ, խնդրեմ ինձ չխանգարէք։

Իմ այս խօսքերը խիստ լաւ տպաւորութիւն թողին հասարակութեան վրայ, որ անմիջապէս լռեց և վիճակահանութեան բոլոր ժամանակը այնուհետև խիստ լաւ պահեց իրան։

Վիճակահանութիւնը վերջացաւ։ Վիճակ հանած երիտասարդների անունները սկսեցի մի առ մի կարդալ նորից։ Հէնց որ վերջինի անունը արտասանեցի՝ մէկ էլ յանկարծ հրապարակի զանազան կողմերից՝ պատրաստի կանգնած կամաւորները՝ բարձրաձայն իրանց ցանկութիւնը սկսեցին արտայայտել։ Քարտուղարը մի առ մի գրում էր անունները։

Վիճակ հանածների թւում կամաւորներ դուրս եկան։ Ուստի ես ի պաշտօնէ յայտնեցի, որ վիճակ հանողները, ի շնորհս քաջասիրտ կամաւորների, բոլորն է ազատ են։ Նրանց կը

փոխարինեն կամաւորները։ Ուրախութեան որոտընդոստ աղաղակներով օդը թնդաց։

Բազմութիւնը գոհ, ուրախ տրամադրութեամբ քաշուեց, գնաց։

Այսպէս ահա վերջացաւ այս կատակերգութիւնը, որ անշուշտ եղերերգութեան կը փոխարկուէր, եթէ նահանգապետ իշխան Գագարինը՝ գաւառապետ Գրէնի նման նայելով հարցի վրայ՝ անհրաժեշտութեան առաջ չզիջանէր։

ՄԻԳ.

Մինչդեռ այս հարցը Ախալցխայում այսպէս խաղաղ վերջացաւ,— Ախալքալաքում, — հասած լուրերին նայելով,—ընդհակառակը շատ ծանրանում ու բարդվում էր։

Ընդարձակ գաւառի՝ 70-ից աւելի գիւղերի բնակիչները ևս (մեծագոյն մասը հայեր) քաղաքի հայերի հետ միացած՝ չէին կամենում Փոխարքայի կարգադրութիւնը ի կատար ածել։ Իսկ գաւառապետը, որ Ռուսաստանից բերուած մի զինուորական սպայ էր և, իբրև օտարական, տեղացիների լեզին ու բարքին միանգամայն անտեղեակ, ոչ մի կոմբրոմիսի մէջ չէր կամենում մտնել ժողովրդի հետ։

Պատմում էին, որ երբ Ախալքալաքի գաւառապետը իմ Թիֆլիզ գնալու նպատակը լսել է,—արդարամբ ասել է հրապարակաւ՝ «բաց դուք կտեսնէք, որ իր գլխից ձեռք քաշած այդ

երիտասարդին այլևս չեն թողնել յետ դառնալու։ Եթէ որ նրան աւելի ծանր պատիժ չկամեցան տալ, դէթ կաքսորեն անշուշտ։

Մի խօսով Ախալքալաքի գաւառապետը՝ Ախալցխայի գաւառապետի ճիշտ պատճէնն է եղել։

Եւ որովհետև այդ ժամանակ Ախալքալաքում քաղաքային ինքնավարութիւն տակաւին մտցրած չէր,—հետևաբար ամեն բան կախուած էր գաւառապետի կամքից, նրա հասկացողութիւնից։

Մի քանի օրից յետոյ՝ Թիֆլիզի նահանգապետը, անսպասելի կերպով, Ախալցխա եկաւ։ Ես նրան ներկայացրի մեր կամաւորներին։ Իշխանը հրապարակօրէն շնորհակալութիւն յայտնեց թէ ինձ և թէ կամաւորներին, որոշեց նրանց ճանապարհելու օրը՝ միամտեցնելով որ, ամենայն հաւանականութեամբ, նրանք կը վերադառնան իրանց ընտանեաց գիրկը։

Ճաշի վրայ, ուր բացի ինձնից, գաւառապետից և հաշտարար միջնորդից (իշխան Գր. Թարխանով) ուրիշ ոչ ոք չկար՝ իշխան Գագարինը յայտնեց որ Ախալքալաքում հարցը, դժբաղդաբար, շատ սուր կերպարանք է ստացել և Փոխարքայ Մեծ իշխանի հրամանաւ ինքը շտապում այնտեղ, անհրաժեշտ դէպքում, զէնքի ուժով ի հնազանդութիւն բերելու ժողովրդին, մինչև իսկ քաղաքը ռմբակոծելով։

Նահանգապետը այս ամենը պատմելուց յետոյ՝ մեծահոգութեամբ կամեցաւ իմ և հաշտա-

բար Միջնորդի կարծիքն ու խորհուրդը լսել։

Երկուքս էլ որ ցարդ համամիտ և համեբաշխ էինք եղել, անկեղծօրէն յայտնեցինք մեր կարծիքը, ուինք մեր խորհուրդը, որի իրագործմամբ, ասացինք, ամէն բան խաղաղութեամբ կը վերջանայ։

Ըստ երևոյթին նահանգապետը մեր խորհրդին հաւան կացաւ և ճաշից յետոյ՝ Հաշտարար Միջնորդին հետը վերցնելով՝ անմիջապէս Ախալքալաք մեկնեց։

Երկու օրից յետոյ՝ Ախալցխա լուր հասաւ որ Ախալքալաքը՝ իր շրջակայքով, հանդարտուել է ի շնորհս նահանգապետի խելացի կարգադրութեան, թէ զօրքերի լագերից քաղաք բերուած թնդանօթները յետ են ուղարկուած, թէ Հաշտարար Միջնորդ, իշխան Գր. Թարխանովը Ախալքալաքի գաւառապետ է առաջարկուած։

Սիրելի ընթերցող, 1829 թուականի «հայկական ապստամբութեան» պատմութեան հետ՝ կցելով 1877 թուականի համանման դէպքի սոյն այս նկարագիրը իր մանրամասնութեամբ՝ իմ միակ նպատակն այն էր, որ ցոյց տամ թէ շատ անգամ, եթէ ոչ միշտ, ժողովրդի մէջ անպակաս կը լինեն մեծ կամ փոքր շփոթ ու յուզմունքներ, երբ այդ ժողովուրդների բաղդը յանձնուած կը լինի նրանց լիզլին և վարք ու բարքին անտեղեակ պատահական գաւառապետ սպաների, որոց խորին համոզմունքով ժողովուրդը

իշխանութեան համար է, այլ ոչ ընդհակառակը, որոց կարծիքով՝ աւելի լաւ է մի ամբողջ քաղաք, գաւառ մարդկային արիւնով լանալ, քան իշխանաւորի հրամանից, նրա տառացի գործադրութիւնից՝ մազի չափ շեղուել*)։

---

*) 1829 և 1877 թուականների «հայկական ապստամբութիւնների» նման մի այլ փոքրիկ «ապստամբութիւն» էր Զանգեզուրի գաւառի հայերի մէջ ծագեցաւ 1886 թուականի ամառը՝ եւ նոյնպէս զինուորականութեան պատճառաւ։

Այս կարծեցեալ ապստամբութեան մանրամասնութիւնները որ ինձ նոյնպէս քաջ յայտնի են, երբև Հոգևոր Բարձրագոյն իշխանութեան (Մակար կաթողիկոսի) կողմից քննիչ զնացող արքեպիսկոպոսի քարտուղարի (այդ միջոցին եւ արդէն 4 ամիս առաջ քահանայ էի ձեռնադրուած), եւ զանց եմ առնում դուրս բերել այստեղ։ Այսքանս կասեմ միայն, որ Զանգեզուրի այդ շփոթը, իր սկզբնաւորութեամբ և վերջաւորութեամբ, ինչպէս ասենքն են ասում՝ «մի հատած ձու անդամ չարժէր»։

Եւ եթէ Տաթևի և նրա շրջակայ մի քանի հայ գիւղերի ցանքսերը զաղախների ձիերի ոտքերի տակ փչացան, եթէ գիւղացիք այս ու այն դրամական և մարմնական պատիժը կրեցին—այդ ամենը հետևանք է Տաթև գիւղացի Հոռի բաշի անունով մի պառաւի մի թուրք սարժենիկի երեսին տուած, այն էլ երբուցի կերպիս,—ապտակ։

Այդ ապտակահարութիւնը՝ Դեօրլեսի գաւառապետ Գարաեվի զեկուցագրում դուրս էր բերուած իբրև ապստամբութիւն։ Գանձակի նահանգապետ իշխան Նակաշիձէն էլ՝ այդ ապստամբութեան պատմութիւնը նոյնութեամբ՝ ներկայացրել էր կառավարչապետ իշխան Դոնդուկով-Կարսակովին։ Վերջինս էլ ի հարկէ, Պետերբուրգ նախարարութիւններին և ահա... զօրքեր, զաղախներ, ոստիկանական, ժանդարմական յայտնի և թաքուն քննութիւններ, բազմաթիւ ազատարդկանց և կանանց, եւ և երկու քահանաների կալանաւորումն և այլն։

Էլի փառք Աստուծոյ, որ վերջ ի վերջոյ դատաստանական իշխանութիւնը մէջ մտաւ։ Եւ գործը Գանձակի նահանգական դատարանն անցաւ։ Եւ դատարանի վճռով՝ մեղադրուած գիւղացիներն ու զեղջկուհիները արդարացան։ Բայց որպէսզի այս պառաւական. ապտակահարութիւնը հայկական ապստամբութեան վերածող՝ Տաթևի պրիստաւը, Դեօրլեսի գաւառապետը և իր թարգման ոմն Նի-

կոլայ-բեգը, իշխան Նակաշիձէն և իշխան Դոնդուկով-Կարսաքով, բարձագոյն իշխանութեան առաջ թէ սեերես չմնան և թէ պատասխանատուութեան տակ չընկնին,—Մակար կաթողիկոսը զինչու կառավարչապետի խնդրանացը և թոյլ տուց, որ Տաթևի Սիմէոն ծերունի քահանայի աքսորման համար կայացրած վճիռը՝ ի կատար ածի։ Եւ դրա փոխարէն կառավարչապետն էլ կաթողիկոսին տուած խոստումը կատարեց։ Սիմէոն քահանան անմիջապէս իր աքսորավայրից յետ բերուեցաւ և ազատ թողուեցաւ Բարձրագոյն բարեհաճութեամբ, որ հիմնուած էր Դոնդուկով Կարսաքովի միջնորդութեան վրայ։

6895